ԷՋՄԻԱԾԻՆ

1974

2

Ամ146

ԼԱ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուն. Խ.

1974

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Հերքում» հերքումը 3
ՊՆՈՐՀՔ ԱՐՔԵՊ. ԳԱԼՍՏՅԱՆ—«Հովնանի նշանը» 9
ՋԳՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ—Ս. Էջմիածին 19
ՌՈՒԲԵՆ ՔՀՆ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ—Երևանի սուրբ Սարգիս եկեղեցու նորակառույց կաթողիկեի ս. խաչի օրհնությունը ու օծումը 21
Դանուցում 23
ՀՈԼՅԵՐ ԱԹՈՌՈՒՄ 24
Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում 26
Ս. Ներսես Շնորհալու հիշատակի ոգեկոչումը սիլյուքում 31
Ուխտավորներ ս. Էջմիածնում 34
«Հայ-զվիցերական բարեկամության հիշատակելի օր մը» 38
Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ—Պրոֆեսոր Հ. Ճ. Սիրուսի 41
ԳԵՎՈՐԳ ՀԱՅԻՏՅԱՆ—Գրախոսություն—Ընտիր էջեր 45
Հատենագիտություն «Էջմիածին» ամսագրի 51

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 4/VI 1974 թ.: Ստորագրված է տպագրության 10/VII 1974 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 875

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1974 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Ց. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

«ՀԵՐՔՈՒՄԻ» ՀԵՐՔՈՒՄԸ

Քաջ հայտնի է մեզ, որ մեր ընթերցողները վաղուց արդեն հոգնել են, չասելու համար ավելին, կարդալով Անթիլիասի Կիլիկյան Աթոռի անկարգ գործերի մասին: Եվ մենք էլ բնավ տրամադրություն չունենք վերստին զբաղվելու այդ հարցերով, որովհետև ամեն ինչ հստակորեն հայտնի է և ամեն ինչ ասվել է մեր կողմից: Այսուհանդերձ, սակայն, պարզապես պատմության համար, անհրաժեշտ ենք համարում, գուցե վերջին անգամ լինելով, անդրադառնալ Կիլիկյան Աթոռի կողմից հրապարակված «Հերքումին» («Հասկ», մարտ-ապրիլ, 1974 թ.): Այդ իսկ պատճառով չշտապեցինք անմիջապես պատասխանել այդ «հերքումին»:

Հիրավի, վերջին տարիներին Անթիլիասի ստեղծած կացությանց շուրջ հրապարակային վեճերը համարյա դադարել էին, և երկու Աթոռների հարաբերությունները կարծեք կորցրել էին իրենց նախկին լարվածությունը, ու նույնիսկ սկիզբ էին առել որոշ հուսադրիչ շփումներ:

Ահա դրական հեռանկարներ խոստացող այս մթնոլորտում հանկարծ Անթիլիասի Գահակալը հրապարակ իջավ մի նոր ոտնձգությամբ՝ օգտագործելով «Ամենայն Հայոց» տիտղոսը և կոնդակ ուղղելով մեր ամբողջ եկեղեցուն, մեր բոլոր նվիրապետական Աթոռներին և համայն հայ ժողովրդին, մի բան, որ երբեք կիլիկյան Աթոռի իրավասությունը չի եղել: Ուստի զարմանալի չէ, որ Անթիլիասի Գահակալի այս նոր արարքը այնքան վրդովմունք ստեղծեց և տեղիք տվեց հրապարակային քննադատությունների: Նույնիսկ Անթիլիասի բարեկամ «Հայրենիք» օրաթերթը մի քանի խմբագրականներով հրավիրեց Տ. Խորեն կաթողիկոսին, որ հրաժարվի «Ամենայն Հայոց» տիտղոսն օգտագործելուց:

Սակայն Անթիլիասը ոչ միայն չանսաց Մայր Աթոռի և հայ մամուլի ողջամիտ կոչերին, այլև հրապարակ իջավ անթվակիր իր պաշտոնական հայտարարությամբ՝ պնդելով. «Թող այս մասին ոչ ոք վեճ բանա ո՛չ խոսքով, ո՛չ պալ գրչով, զուր է, անտեղի, անիմաստ է»:

Այսպիսով մեր եկեղեցու և ժողովրդի ծոցում ստեղծվեց մի նոր հուզում, որի արտահայտություններից մեկը հանդիսացավ Կ. Պոլսի տ. Շնորհք պատրիարքի հրապարակած հոդվածաշարքը, ուր այնքան հստակ ու համոզիչ կերպով ցույց էր տրված անհեթեթությունը Անթիլիասի այս նոր արարքի: Սակայն Անթիլիասը շարունակեց մնալ անդրդվելի:

Ուստի ստիպված եղանք մենք ևս «Էջմիածին» ամսագրի սույն թվակա-

նի հունվարի համարում լույս ընծայել «Հակաթոռի դիրքերում» խմբագրականը և աստարկայական փաստերով ապացուցել «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո» տիտղոսի գործածության ապօրինությունը, որով Անթիլիասը ինքն իրեն դնում է հակաթոռի դիրքերում:

Մենք սպասում էինք, որ Անթիլիասը վերջապես կանգա մեր Մայր եկեղեցու խղճի ձայնին և կգգա ծանրությունն այն պատասխանատվության, որ իր վրա է վերցնում իր այս նոր արարքով: Ափսոս, սակայն, մենք կրկին սխալվել էինք մեր լավատեսության մեջ:

Ահա մեր աչքի առաջ է այժմ իր «Հերքում»-ը՝ լույս տեսած «Հասկ»-ի մարտ-ապրիլի համարում:

Ընթերցողը, որ ծանոթ է մեր «Հակաթոռի դիրքերում» խմբագրականի բովանդակությանը, կարդալով «Հասկ»-ի «Հերքում»-ը, անմիջապես պիտի նկատի, որ այն ամեն բան է, բացի հերքում լինելուց:

Արդարև, վերոհիշյալ մեր խմբագրականը համոզիչ փաստերով ցույց էր տալիս «Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիո» տիտղոսի ապօրեն գործածությունն ու այդ առնչությամբ մանրամասն ուսումնասիրության նյութ էր դարձնում հետևյալ հարցերը.

ա. Սկզբնավորությունն կիլիկյան Աթոռի.

բ. Կիլիկյան Աթոռի օրինազանց կաթողիկոսները.

գ. Պահել Սիսը Էջմիածնի համար.

դ. Կիլիկյան Աթոռը Անթիլիասում.

ե. Անթիլիասն այսօր.

զ. Մեր օրերի հրամայականը:

Մեր խմբագրականը քննության էր առնում Մայր Աթոռի և կիլիկյան Աթոռի փոխհարաբերությունների հարցը՝ կանոնական և պատմական տվյալների հիման վրա, առաջնորդված մեր եկեղեցու և ազգի գերագույն շահերից, հարգելով կիլիկյան Աթոռի գոյության իմաստն ու նրա իրավասությանց սահմանները, և հաշտարար ոգով մի անգամ ևս հրավեր էր կարդում, որ Անթիլիասի Աթոռը հրաժարվի Մայր Աթոռ ս. Էջմիածնի դեմ իր ոտնձգություններից, հայ եկեղեցու միությունը խանգարելու իր փորձերից՝ հարգելով հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների իրավասությանց պատմականորեն նվիրակնացած սահմանները:

«Հասկ»-ը իր «Հերքում»-ի մեջ չի անդրադառնում մեր քննարկած ու պարզաբանած որոշակի հարցերին, այլ խոսքով ասած՝ փաստորեն նա չի հերքում մեր հիմնական հաստատումները:

«Հասկ»-ի խմբագրականը, առաջին էջից իսկ, հարձակողական բնույթ է կրում և անիրավ կերպով անտեսում Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետի հոգևոր ու ազգային մտահոգությունները՝ վերագրելով նրանց այնպիսի դիտավորություններ ու ձգտումներ, որոնք որևէ ձևով չեն դրսևորված հատկապես Խրիմյան Հայրիկի օրերից սկսած:

Անթիլիասը որևէ իրական ապացույց չի կարող բերել՝ հաստատելու համար Իր «Հերքում»-ի մեջ առաջ քաշված անարդար վերագրումները, այսօր, Ամենայն Հայոց Հայրապետությանն ուղղված: Այնուհանդերձ «Հասկ»-ը, սոսանց խղճի խայթի, գրում է. «Նոր չէ Էջմիածնի այս դիրքորոշումը կիլիկյան Աթոռին հանդեպ: Նոր չեն Մայր Աթոռեն կիլիկյան Աթոռին հասցեագրվող չարպարտությունները, դատապարտությունները, անեծքները», որոնց հիմնական նպատակը իբր թե եղած լիներ «կիլիկյան պատմական Աթոռին վերացումը որպես անկախ կաթողիկոսություն» և կամ նրա վրա Մայր Աթոռի գերիշխանությունը հաստատելու միտումը:

Կարդալով «Հասկ»-ի սույն խմբագրականը՝ խոր հիասթափություն ապրեցինք՝ մի անգամ ևս հաստատելով, որ Անթիլիասը դիտավորյալ կերպով շուռ է տալիս իրողությունները՝ ինքն իրեն հալածվողի տեղ դնելով, ինքն իրեն զոհ ներկայացնելով և Մայր Աթոռին վերագրելով արարքներ, որոնք երբեք չեն գործվել, և կամ դիտավորություններ, որոնք երբեք գոյություն չեն ունեցել և չունեն: Անթիլիասի խոսնակների այս «ճարպկությունը» մեզ հիշեցնում է ժողովրդական ծանոթ ասացվածքը գողի և տանտիրոջ մասին:

Հանրահայտ է, որ Մայր Աթոռը ցարդ չի կատարել ոչ մի ոտնձգություն, ոչ մի օրինազանցություն Անթիլիասի իշխանության կամ իրավասությանը դեմ: Մինչդեռ Անթիլիասը, վերջին տասնութ տարիների ընթացքում, ոչ միայն լուռ չի մնացել (ինչպես ուզում է հավատացնել «Հասկ»-ը), այլ բանիվ և գործով, ծրագրված և կազմակերպված ձևով՝

ա. Հափշտակել է ս. Էջմիածնի իրավասության ենթակա Պարսկաստանի, Հունաստանի և Միացյալ Նահանգների մի մասի թեմերը, ինչպես նաև Կարակասի եկեղեցին:

բ. Նույնը փորձել է հարավային Ֆրանսիայում 1967-ից 1970 թվականներին, և նման փորձեր շարունակել է կատարել այլ թեմերից և համայնքներից ներս:

գ. Համաձայն իր կանոնադրության 33-րդ հոդվածի, նույնիսկ օրինականացրել է «նաև այլ թեմեր» իր իշխանությանը ենթարկելու իր ձգտումը:

դ. 1964 թվականից սկսած հրապարակ է հանել Ամենայն Հայոց Հայրապետության Մայր Աթոռի և Անթիլիասի կիլիկյան Աթոռի հավասարազորության նորելուկ մի տեսություն:

ե. Մերժել է եկեղեցիների միջազգային շարժման մեջ Հայաստանյայց եկեղեցին մեկ պատվիրակությամբ ներկայացնելու ուղիղ սկզբունքը (իր էլ մասնակցությամբ անշուշտ):

զ. Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից կարգազուրկ արված ուխտադրուժ մի քահանայի քահանայագործելու արտոնություն է տվել իր թեմերում:

է. Եվ, վերջապես, սկսել է օգտագործել «Ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը ու նաև՝

ը. Կոնդակ ուղղել ոչ թե իր միաբանությանն ու իր Աթոռի թեմերին, ինչ որ իր իրավունքն է անշուշտ, այլ մեր եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռներին, մեր ամբողջ եկեղեցուն ու ժողովրդին:

Այս բոլոր ծանրակշիռ արարքների դեմ Մայր Աթոռի միակ հակազդեցությունը եղել է ցավ հայտնել կամ բողոքել և կամ դիմել ինքնապաշտպանության: Միթե այս տարրական իրավո՞ւնքն էլ պիտի զլացվեր ս. Էջմիածնին: Այս բոլորից հետո Անթիլիասը ինչպե՞ս է կարողանում առանց քաշվելու ասղմկել հրապարակը, թե ս. Էջմիածինն է իրեն հալածողը:

Բացի ս. Էջմիածնի դեմ կատարված վերոհիշյալ հանրահայտ արարքներից, ինչո՞ւ չհիշել այստեղ 1959 թվականին Անթիլիասի տպարանից լույս ընծայված՝ «Crisis in the Armenian Church» խորագիրը կրող անգլերեն լեզվով ծավալուն հատորը, որը անավոր զրպարտությունների մի հավաքածու է ընդդեմ Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ընդդեմ Ամենայն Հայոց Հայրապետներ Գևորգ Զ-ի և Վազգեն Ա-ի ու ընդդեմ Մայր Աթոռին հավատարիմ սփյուռքահայ եկեղեցական դեմքերի և ազգային հաստատությունների: Այդ տխրահռչակ գիրքը անթիլիասական ձեռքերով Միացյալ Նահանգներում բաժանվեց միմիայն օտարազգի եկեղեցականներին և պետական անձնավորություններին, 1960 թվականին, Տ. Տ. Վազգեն կաթողիկոսի Ամերիկա կատարած ուղևորության նախօրյակին:

«Հասկ»-ի նոր խմբագրականը փոխանակ լրջորեն անդրադառնալու մեր հոդվածում արծարծված որոշակի հարցերին և մատնանշված իրողություններին, մատի փաթաթան է դարձնում մեր կողմից կատարված մի մեջբերում Բաբգեն կաթողիկոսի աշխատությունից՝ մեղադրելով մեզ մատենագրական վկայությունների օգտագործման զեղծարարության մեջ: Մենք ստուգեցինք մեր խմբագրականի վերոհիշյալ մեջբերումը և այնտեղ չգտանք «Հասկ»-ի մեղադրանքն արդարացնող անճշտություն կամ մեջբերված հատվածի միտքը աղավաղող պարագա:

Իր «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» գրքում (էջ 17) Բաբգեն կաթողիկոս Կյուլեսերյանը բառ առ բառ գրում է. **«Կիլիկիո կաթողիկոսական Աթոռին կանոնականությունը պաշտպանելու համար միշտ պատմական սխալ բացատրություններ և փաստեր առաջ քշված են՝ անկախ թե՛ նույն ինքն Կիլիկիո հին և նոր կաթողիկոսներու կողմեն և թե՛ Կիլիկիո Աթոռը պաշտպանելուզողներու կողմեն, ընդդեմ ատոր հակառակող Էջմիածնի կաթողիկոսներուն և ընդդեմ նաև անոնց ջատագովներուն,** որոնց ջատագովությունը հիմնված էր ոչ միայն պատմական փաստերու սխալ հասկացողության ու մեկնության վրա, այլ մանավանդ տգիտության և անձնական կիրքերու վրա».

Մեր խմբագրականում մեջբերել էինք Բաբգեն կաթողիկոսի վերոհիշյալ պարբերության առաջին մասը միայն, որ անշուշտ ինքն իր մեջ քերականորեն և տրամաբանորեն ավարտուն ու ամբողջական մի միտք է արտահայտում կիլիկյան Աթոռի հաստատման կանոնականության վերաբերյալ, ինչ որ մեր նպատակն էր եղել շեշտել: Հետևաբար մեր կատարած մեջբերումը ոչընչով չի աղավաղել Բաբգեն կաթողիկոսի հիմնական միտքը: Հեղինակի վերոհիշյալ պարբերության երկրորդ մասը լրացուցիչ մի միտք է (ընդունելի կամ ոչ), որի հապավումը չի աղճատում և չի իմաստափոխում առաջին մասի հիմնական գաղափարը:

Եթե «բանասիրական անպարարության» պարագա կա, մեր կարծիքով, դա վերաբերում է հենց իրեն՝ «Հասկ»-ի խմբագրությանը, որ Բաբգեն կաթողիկոսից վերցված նույն պարբերության մեջ, անշուշտ դիտավորյալ կերպով, կատարել է մի «փոքր» հավելում, որը ըստ էության, ամբողջովին փոխել է Բաբգեն կաթողիկոսի հիմնական միտքը: «Հասկ»-ի խմբագրությունը թող բարեհաճի վերստին կարդալ Բաբգեն կաթողիկոսի «Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ» գրքի 17-րդ էջը և այն համեմատել իր խմբագրականում մեջբերվածի հետ (էջ 88). «Էջմիածնի ու Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին կանոնականութիւնը...» և այլն:

«Հասկ»-ի «ուղղամի՞տ» խմբագրությունը որտեղի՞ց է հանել «Էջմիածնի» բառը և այն կցել Բաբգեն կաթողիկոսի խոսքի սկզբին: Այստեղ տեղին չէ՞ արդյոք «Հասկ»-ի կողմից «Էջմիածին» ամսագրին հասցեագրված խոսքերը վերադարձնել իր բուն տիրոջը՝ «Զո՞վ կխաբեն [«Հասկ»]-ի գիտնական բանասերները: Այս մտավորական կեցվածք չէ, [Անթիլիասին] վայել կեցվածք չէ, ամո՛թ է»:

Նույնն է պարագան նաև մեր մյուս մեջբերման, որը նույնպես քաղված է Բաբգեն կաթողիկոսի հիշյալ աշխատությունից: Բաբգեն կաթողիկոսը, խոսելով Կիլիկիո Աթոռի կողմից Էջմիածնի թեմերի համար եպիսկոպոսներ ձեռնադրելու անօրինականության մասին, գրում է. «[Էջմիածին կպնդեր թե Սիսի կաթողիկոսները իրավասու չեն. իսկ անոնք, ընդհակառակը, տարբեր կերպով կըմբռնեին կացությունը հիմնվելով 1441-են հառաջ տիրող ավանդության վրա]: Եվ այս կետին մեջ կիլիկեցիք իրավունք չունեին, որովհետև իրաց վիճակը փոխված էր բոլորովին: Էջմիածին Մայր Աթոռ ճանչցված էր,

և ան իրավունք ուներ պահանջել Կիլիկիո Աթոռեն, որ իր սահմաններեն անդին չանցնի [ձեռնադրության խնդրին մեջ]»:

Միշտ է, որ այս պարբերության մեջ որոշ հապավում արել ենք (փակագծի մեջ առնված բառերը), սակայն հիմնականն ու կարևորն այն է, որ դրա հետևանքով ոչնչով չէր փոփոխվել Բաբգեն կաթողիկոսի վկայությունը Կիլիկյան որոշ օրինազանց կաթողիկոսների՝ Էջմիածնի թեմերի համար եպիսկոպոսներ ձեռնադրելու միտումների վերաբերյալ, միտում, որը խոսում է Կիլիկիո օրինազանց կաթողիկոսների՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի իրավասություններ ունենալու հավակնության մասին: Որով, այս դեպքում ևս անհպատակ է «Հասկ»-ի խմբագրության հարուցած առարկությունը և անտեղի՝ հարձակումը, որովհետև այդ հապավումով մենք ոչ մի հետին միտք չէինք կարող հետապնդած լինել հօգուտ մեր ասածի: Հապավումով կամ առանց հապավումի՝ Բաբգեն կաթողիկոսի դատողությունը մնում է նույնը: Նման դեպքերում որոշ հապավումներ անել բանասիրության մեջ ընդունված կարգ է:

Պատմական փաստերը նենգափոխելու մի ապացույց է նաև այն, որ «Հասկ»-ը իր «Հերքումի» մեջ (էջ 80) Տ. Տ. Վազգեն կաթողիկոսին վերագրում է մի արտահայտություն, որը չի համապատասխանում ճշմարտության:

«Մոռցա՞վ Էջմիածնի Գահակալը, Երուսաղեմի ողջագուրումի վերջին ընթրիքին ընթացքին, ի ներկայության շուրջ քսան սեղանակիցներու, իր կատարած իրատես հայտարարությունը թե՝ «Այսուհետև՝ ուր որ Էջմիածինը չի կրնար հասնիլ, Անթիլիասը պարտի հասնիլ»:

Հանրահայտ է, որ վերոհիշյալ արտահայտությունը (ի դեպ ոչ լրիվ մեջբերված) պատկանում է ոչ թե Վազգեն կաթողիկոսին, այլ Խորեն կաթողիկոսին, որը սույն խոսքն արտասանել է 1963 թվականի հոկտեմբերի 26-ին, ողջագուրման օրը, Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դահլիճում: Իր ժամանակին «Ազդակ»-ի թղթակիցն է, որ, գուցե թյուրիմացաբար, այդ արտահայտությունը վերագրել էր Վազգեն կաթողիկոսին, իսկ Նրա մեկ այլ արտահայտությունն էլ՝ Խորեն կաթողիկոսին:

Օգտագործում ենք այս առիթը՝ կատարելու համար նաև այդ ճշտումը, որովհետև որոշ թերթեր մինչև օրս էլ (ինչպես, օրինակ՝ «Հայրենիք» օրաթերթը իր 1973 թ. հոկտեմբերի 26-ի համարի «Տասը տարի առաջ էր...» հոդվածում) շարունակում են Վազգեն կոսի հետևյալ արտահայտությունը (արտասանված նույն օրը, այսինքն ողջագուրման պահին, Երուսաղեմի պատրիարքարանի դահլիճում) վերագրել Խորեն կաթողիկոսին. «Գիտենք, շատեր հարց կուտան թե ո՞վ շահեցավ և ո՞վ կորսնցուց, Էջմիածի՞ն թե Անթիլիաս: Չենք գիտեր թե ո՞վ շահեցավ և ո՞վ կորսնցուց, բայց ստուգապես գիտենք, թե շահողը եկեղեցին եղավ և մեր ժողովուրդը: Եվ եթե իրավ է այդ, ուրեմն շահեցան թե՛ Էջմիածինը և թե՛ Անթիլիասը միասնաբար և հավասարապես»:

Փակագծի մեջ ասենք, որ այս խոսքերը, իբրև արտահայտման ձև, հատուկ են Վազգեն կաթողիկոսի ոճին, իսկ մյուս կողմից՝ ողջագուրման օրերին, տվյալ կացության մեջ, միայն Ամենայն Հայոց կաթողիկոսը կարող էր արտահայտվել նման մտահոգություններով:

Վազգեն կաթողիկոսի և Խորեն կաթողիկոսի վերոհիշյալ արտահայտությունները ուղիղ և ճշգրիտ կերպով արձանագրված են «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի փետրվար-մարտ համարում, էջ 70 և էջ 71:

Ուրեմն Երուսաղեմում 1963 թ. հոկտեմբերի 26-ին, հայոց պատրիարքարանի դահլիճում, առաջինը խոսք առնելով, Վազգեն կաթողիկոսն Իր արտասանած ճառում ասել է. «Գիտենք, շատեր հարց կուտան այս օրերուն թե ո՞վ

շահեցավ և ո՞վ կորսնցուց. Էջմիածի՞ն թե Անթիլիաս: Չենք գիտեր թե ո՞վ ի՞նչ շահեցավ և ո՞վ ի՞նչ կորսնցուց, բայց ստուգապես գիտենք, թե շահողը եկեղեցին եղավ և սեր ժողովուրդը: Իսկ եթե իրավ է այդ, ուրեմն շահեցան թե՛ Էջմիածինը և թե՛ Անթիլիասը, միասնաբար և հավասարապես»:

Իսկ Խորեն կաթողիկոսը իր պատասխան ճառում, ի միջի այլոց, բարացիորեն ասել է հետևյալ խոսքերը.

«Հոն, ուր չէ կրցած ս. Էջմիածինը հասնիլ, կիլիկյան Աթոռն է հասած և ուր որ կիլիկյան Աթոռը չէ կրցած հասնիլ, ս. Էջմիածինն է հասած, և այսպես փոխադարձ հասկացողությամբ և խաղաղության ու սիրո մթնոլորտի մեջ, կրցած են պահել և պահպանել մեր ժողովուրդը»:

Ասենք սակայն նաև, որ Խորեն կաթողիկոսի վերոհիշյալ մտածումը իրոք կյանքի կոչված կլիներ և, մեր կարծիքով, Ամենայն Հայոց կաթողիկոսի համար էլ ցանկալի կդառնար, եթե Անթիլիասը հարգած լիներ ողջագուրումի ոգին և այդ առիթով իր տված խոստումները:

Մեր խոսքը վերջացնելուց առաջ անհրաժեշտ ենք համարում այստեղ արձանագրել նաև «Հասկ»-ի խմբագրականում տեղ գտած մի շարք արտահայտություններ, որոնցով խմբագրությունը, նույն տխուր մտայնությամբ, 1441 թվականի Էջմիածնի եկեղեցական ժողովի մասին անում է հետևյալ անպատասխանատու որակումները. «Խումբ մը կիրքե և փառամոլությունե առաջնորդված եկեղեցականներ», «արևելյան վարդապետներու փառամոլություն», «Էջմիածնի կողմե հապճեպ կերպով կատարված մենակյացի մը ընտրություն» և այլն: Իսկ ի վերա այսր ամենայնի, «Հասկ»-ը իշնում է այն աստիճանին, որ 1441 թվականին Էջմիածնում կատարված կաթողիկոսական համազգային ընտրությունը կոչում է «հակաթոռություն, ընդդեմ Սիսի մեջ կայք հաստատած Ամենայն Հայոց Կաթողիկոսության»:

Չգիտենք, պետք է ծիծաղե՞լ, թե՞ ողբալ նման ողորմելի մտայնության վրա: «Հասկ»-ի խմբագրությունը գոնե տեղյակ լիներ քաջահմուտ պատմագետ Բաբգեն կաթողիկոսի վկայությանը, որը 1441 թվականին Էջմիածնում գումարված ժողովը որակում է «Էջմիածնի մեծահանդես ժողով», ուր միաձայն որոշումով «Լուսավորչին Աթոռը իր ավանդական-պատմական տեղվույն վրա կվերահաստատվեր իր տասնդարյան տեղափոխություններեն ետքը («Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ», էջ 1140):

Նման բազմաթիվ հեղինակավոր արտահայտություններ կարող էինք վկայակոչել, սակայն այստեղ կանգ ենք առնում մեր խոսքը վերջացնելով 17-րդ դարի մեծ հայրենասեր պատմիչ Առաքել Դավրիժեցու ծանոթ պատգամ-հաստատումով.

«Ի վերայ Աջոյն և սուրբ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ»:

Այս է վեմը, որի վրա հաստատված է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին իր ողջ նվիրապետական կառույցով, ներառյալ կիլիկյան Աթոռը: Այս է նաև համազգային հարազատ զգացումը մեր ողջ հավատացյալ ժողովրդի, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Իսկ եթե «Հասկ»-ը անպայման հերքել է ուզում այս գերագույն ճշմարտությունը, դրանով իսկ նա մի անգամ ևս հաստատած կլինի Անթիլիասի հակաթոռի դիրքը:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը լավատես ու հանդարտ սրտով կսպասի այն օրվան, երբ Անթիլիասում հաստատված կիլիկյան Աթոռը կվերացնի իր վրայից հակաթոռի սգո քողը:

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊ. ԳԱԼՍՏՅԱՆ

«ՀՈՎՆԱՆԻ ՆՇԱՆԸ»

Հովնան մարգարե հիշված է Ավետարանի մեջ իբրև «ՆՇԱՆ» երկու կարևոր երևույթներու. նախ՝ իբրև «նշան» Հիսուսի հարության. (Մատթ. ԺԲ 40)։ Երկրորդ՝ իբրև «նշան» ԱՊԱՇԽԱՐԱՆՔԻ։ Փարիսեցիներ ե դպիրներ «երկինքեն նշան մը տեսնել» կուզեն Հիսուսեն, որ հետևյալ խիստ պատասխանը կուտա անոնց. «Այս չար սերունդը նշան կուզե. և երկինքեն ուրիշ նշան պիտի չտրվի ասոր բացի Հովնանի նշանեն։ Զի ինչպես որ Հովնան նշան մը եղավ Նինվեացիներուն, նույնպես պիտի ըլլա նաև Մարդու Որդին (Քրիստոս) այս սերունդին...։ Նինվեացիներ պիտի դատապարտեն այս սերունդը, որովհետև ապաշխարեցին Հովնանի քարոզությամբ. և ահա Հովնանեն ավելի մեծը կա այստեղ». (Ղուկ. ԺԱ 16 և 29—32)։

Մենք կգործածենք մեր գրության վերնագիրը այս վերջին իմաստով։

Հովնանի պատմությունը առհասարակ ծանոթ է որպես հետաքրքրական հեքիաթը մարդու մը, որ կկլանվի վիշապ ձուկի մը կողմե, որմե սակայն ողջ դուրս կուգա երեք օրեր հետո։ Հակառակ սակայն իր այս հաստատ երևույթին այս պատմվածքը իր մեջ կպարունակե Հին Կտակարանի կրոնա-բարոյական և ընկերային բարձրագույն ուսուցումներեն մեկը, և հետևաբար Հովնանի գրքին հեղինակը արժանի է դրվելու քովիկը Եսայի և Երեմիա մարգարեներու, որոնք իրավամբ նկատված են Հին Կտակարանի կրոնական ուսուցմանց բարձրագույն կատարները։ Գիտնական անձնավորություն մը, որ ավելի քան հարյուր անգամ կարդացած է զայն, ըսած է. «Երբ կմոտենաս այս գիրքին հանե կոշիկներդ քու ոտքերեդ. որովհետև հողը որուն վրա կկենաս՝ սուրբ է»։

Նախքան մտնելը այս պատմվածքի խորհրդածության մեջ, անհրաժեշտ կնկատենք արտահայտվիլ ընդդեմ նախապաշարումի մը և սխալ տեսակետի մը, որ զգալի կերպով տարածված է լայն շրջանակներու մեջ։ Ոմանք կկարծեն թե Հին Կտակարանը լոկ ուրույն ժողովուրդի մը պատմությունը, կրոնքը և իմաստասիրական ու բարոյական մտածումները պարունակող մատյան մըն է. հետևաբար, կեզրակացնեն անոնք, ի՞նչու այնքան մեծ կարևորություն տալ անոր, և ի՞նչու կոչել զայն «Սուրբ Գիրք»։

Տարակույսե վեր է, թե Հին Կտակարանը կպարունակե Իսրայելի ժողովուրդին կյանքին և կրոնքին պատմությունը. սակայն բացահայտ է միաժամանակ, թե ս. Գիրքին նպատակը լոկ այդ ժողովուրդին պատմությունը ներկայացնել չէ։ Այս իրողությունը կհաստատվի հատկապես Աստվածաշունչի

ամենեն «պատմական» նկատված գիրքերուն մեջ: Ըստ այսմ նրեա թագավորներու պատմությունը ներկայացնող ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՑ գիրքերուն մեջ, յուրաքանչյուր հիշատակավորի անունը հիշատակվել է՝ ու անոր լոկ կրոնական արժեք ներկայացնող գործերը պատմվել է հետո, գրեթե հանկերգի պես կկրկնվի մեն մի թագավորի կյանքի վերջավորության հետևյալ ասությունը.

«Եւ մնացորդք բանից (այս անուն թագաւորի) ահա գրեալ են ի գիրս բանից աւուրց թագաւորացն Իսրայէլի» կամ «Յուդայի»:

(Տես Գ Թագ. ԺԴ 19 և 29, ԺԵ 7, 23, 31... Դ Թագ. Ա 18 և այլ բազմաթիվ նման տեղիքներ):

Սա կնշանակե, որ արդեն իսկ գոյություն ունեցած են Հուդայի և Իսրայելի զույգ թագավորությանց ուրույն պատմական գիրքերը, որոնցմե ընտրվի կվերցնե իր նյութերը Հին Կտակարանի ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆՑ գիրքերու հեղինակը, զուտ կրոնական նպատակներով և ոչ՝ պատմագրության համար:

Աստվածաշունչի ընդհանուր նպատակն է տվյալ ազգի մը պատմության զանազան դրվագներու ընդմեջեն՝ համամարդկային տարողություն ունեցող կրոնական ինչ-ինչ ճշմարտություններ հայտնել ամբողջ մարդկության համար: Այս իրողությունը կբացահայտվի իր պարզագույն ձևին տակ Տասնաբանյա պատվիրաններու պարագային: Ստույգ է, որ անոնք ալ տրվեցան Իսրայելի ժողովուրդին համար. այսուհանդերձ անոնք ուղղակի կամ անուղղակի ընդունված են այսօր գրեթե համայն քաղաքակիրթ մարդկության կողմե: Տասնաբանյա պատվիրաններուն այս կամ այն հոդվածին անտեսվիլը կամ չկիրարկվիլը հակաիասա մը չէ անոնց համամարդկային արժեք ունենալուն, քանի որ գրեթե ամեն բնականոն մարդ, որուն տրամաբանելու կարողությունը չէ աղոտած, և շիտակը սխալեն զատորոշելու բնազդը չէ թթացած, պիտի ընդունի, որ Տասնաբանյա պատվիրանները անհրաժեշտ օրենքներ են ամբողջ մարդկային ընկերության համար. հետևաբար անոնց կիրարկումը՝ մեր ամենօրյա կյանքին մեջ՝ ամեն անհատի քարոյական հիմնական պարտավորությունը պիտի ըլլա:

Անկասկածաբար ուրեմն Աստվածաշունչի գիրքերուն պատմական ու գեղարվեստական մեծ նշանակություններեն, անոնց բուն արժեքը կկայանա իրենց ներկայացված կրոնական, բարոյական և իմաստասիրական հարցերուն մեջ, և իրենց այդ հանգամանքով մանավանդ կշահագրգռեն ամբողջ մարդկությունը, քանի որ մարդ խորքին մեջ կրոնական, բարոյական և իմաստասիրական բնազդի տեր էակ մըն է: Աստվածաշունչի մեջ գործող, ապրող, մտածող և խոսող անձերը մարդկային ազգի ներկայացուցիչներ են նախքան ցեղի մը անդամ ըլլալը: Ու պատգամը, որ թնարորդվի անոնց բերանով կամ կյանքով, կոչվի նաև համայն մարդկության: «Քու Աստվածդ պիտի սիրես ամբողջ հոգիովդ և ընկերդ պիտի սիրես անձիդ պես», կկազմե խտացումը Աստվածաշունչի կրոնա-բարոյական ուսուցման և իբրև այդ կուղղվի որչափ Իսրայելի՝ նույնքան նաև բոլոր ժողովուրդներուն: Արդարև ուղիղ մտածումի և օրինակելի կենցաղի անհատնում շտեմարան մըն է ա. Գիրքը, որ ցարդ չէ գերազանցված ոչ մեկ ուրիշ մատյանով և պիտի չգերազանցվի: Մեր երկրագունդը, որչափ մենք գիտենք, Հիմալայաներեն ավելի բարձր գագաթներ ստեղծելու ի վիճակի չէ այլևս. իր բարձրագույնը տված է անոնցմով իր ելևէջի և վերիվայրումներու ուսուցանելու: Նույն է ճշմարտությունը Աստվածաշունչի պարագային, կրոնական և բարոյական բնագավառի մեջ:

Ա. Գրքի մեջ գործող եբրայեցի ժողովուրդը գրեթե ոչինչով կտարբերի մարդկության մյուս ժողովուրդներեն, բացի թերևս թիվով, որ միշտ փոքր եղած է. և քաղաքական ու տնտեսական դերով, որ միշտ անշնչաղ եղած է: Այս ժողովուրդը օժտված է մարդկային ազգին հատուկ նույն ձիրքերով և նույն կիրքերով, ու վարակված է նույն առավելություններով և նույն թերություններով: Տարբերությունը այն է, որ Աստված «ԽՈՍԱԾ» է այս ժողովուրդի լավագույն ներկայացուցիչներուն բերանով, այս խեր ու խստապարանոց ժողովուրդեն տիպարային ժողովուրդ մը կերտելու համար՝ հօրինակ այլ ազգերու: Թեև գործնականապես այդ չէ հաջողված, բայց գեթ կազմված է այն ընկերային դրությունը, ըսենք այն ընկերային կաղապարը, որուն մեջ կրնա թափվիլ ոևէ ժողովուրդ: Աստված մասնավոր կերպով զբաղված է այս ժողովուրդով, ոչ թե անոնց ունեցած ոևէ առավելության համար, այլ՝ բոլոր ազգերեն կիրարկելի ընկերային օրինակ մը կամ դրություն մը ստեղծելու համար: Ու աստվածային այս մանկավարժական գործողությունը ի վերջո իր գործնական և ընկերային լրումը գտավ Քրիստոսով. Անոր քարոզած վարդապետությամբ, կատարած տնօրենություններով և հիմնած նոր ընկերությամբը: Հրեա ժողովուրդին մեջ միայն տիպար ընկերությունը ստեղծելու աստվածային այս ՓՈՐՁԸ՝ Քրիստոսով դուրս եկավ եբրայական ժողովուրդի նեղ շրջանակեն և տարածվեցավ ամբողջ մարդկության վրա, առանց ցեղի և լեզվի խտրության: Ստեղծվեցավ ԵԿԵՂԵՑԻՆ, Աստուծո նոր ժողովուրդը, որ

շարունակողը և իրականացնողը եղավ Հին Ուխտի մեջ ստեղծված ընկերային տիպարին, այս անգամ համամարդկային տարողությամբ:

Պետք է հաստատել, որ Աստվածաշունչի «ընտրյալ ժողովուրդը» երկինքեն իրեն տրված աստվածային պատգամները ոչ միայն ինք լրիվ չգործադրեց, այլ նաև չկրցավ հեթանոսներուն ավանդել: Ընդհակառակը շարունակ հակամետ եղավ մարգարեներու ցույց տված սրբության և արդարության շավիղներեն դուրս գալու և իյնալու կռապաշտության մոլորության մեջ: Հրեա ժողովուրդի այս անհավատարմական հակումները տիրականորեն մատնանշված են քրիստոնյա նորածին եկեղեցիի առաջին մեծ քարոզիչներեն Ստեփաննոսի կողմե: «Գործք առաքելոց»-ի մեջ պահված իր պատմական մեծ ճառին մեջ կրսե ան.

Մովսես Աստուծմե «ընդունեց կենդանի պատգամներ մեզի տրվելու համար, սակայն մեր հայրերը չուզեցին հնազանդիլ անոր, ու մերժեցին զայն և իրենց սրտով ետ Եգիպտոս դարձան... և շինեցին (ոսկե) հորթ և կուռքի զոհ մատուցին»: Ու մեծ քարոզիչը իր հոյակապ խոսքը կավարտե այսպես. «Խստապարանոցներ և սրտով ու ականջով անթլփատներ, դուք շարունակ սուրբ Հոգիի հակառակ կկենաք, ինչպես արդարև ըրին ձեր հայրերը: Մարգարեներեն ո՞ր մեկը չհալածեցին ձեր հայրերը, և սպաննեցին զանոնք որոնք կանխագուշակեցին գալուստը Արդարին (Մեսիային, Քրիստոսին) որուն մատնիչները և սպաննողները եղաք դուք, որ հրեշտակներու միջոցավ օրենքներ առիք և չպահեցիք զանոնք» (Գործ. Է 38—41 և 51—53):

Գերության ընթացքին և անկե հետո, այսինքն նախ քան Քրիստոս Զ և Ե դարերուն, հրեաներ թեև իսպառ բուժվեցան կռապաշտության ախտեն, բայց մյուս կողմե դարձան մոլեռանդ օրինապաշտներ, լեցված զորավոր հակակրությամբ հանդեպ հեթանոսներու: Աստուծո համամարդկային պատգամները ծրարեցին իրենց նեղմտության վարշամականներու մեջ և թաղեցին զանոնք իրենց հորինած հազարումեկ ավանդություններու և մանր օրենքներու մեջ, «Միթրաս»-ներու և «Թելմուտ»-ներու մեջ, և չուզեցին ոչ իրենք հաղորդ դառնալ, ոչ ալ հեթանոսները բաժնեկից դարձնել իրենց մեծ մարգարեներու լուսամիտ գաղափարներուն:

Հրեա լայն մտածողներեն շատեր հավանաբար նշմարած պիտի ըլլային այս նոր և նույնքան վտանգավոր շեղումը. բայց համարձակություն չէին օգար մատնանշելու վտանգը, քանի որ հակաժողովրդական պիտի ըլլար նման ցուցմունք մը: Ի վերջո Իսրայելի մեծ մարգարեներուն արժանավոր մեկ ժառանգորդը՝ աստվածային ներշնչումը զգաց իր մեջ գրելու Հովնանի գիրքը, և առակի մը ձևին տակ մատնանշելու այն սխալ մտայնությունը, որուն գերին դառնալ սկսած էր Իսրայելը, պատմական իր գերութենեն դարձեն հետո:

ՀՈՎՆԱՆԻ ԳԻՐՔԸ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԵՋ

Հին Կտակարանի գիրքերը կարելի է բաժնել երեք խումբերու.

ա.—Պատմական գիրքեր.

բ.—Բանաստեղծական և իմաստասիրական գիրքեր.

գ.—Մարգարեական գիրքեր:

Հովնանի գիրքը վերջին խումբին մեջ դրված է. սակայն իրականին մեջ համադրությունը կրնա նկատվիլ երեքին, քանի որ երեքեն ալ տարրեր կան իր մեջ: Նախ ամբողջ գիրքը պատմվածք մըն է ծայրե ի ծայր. ուրիշ խոսքով՝ մարգարեի մը արկածներուն պատկերացումն է: Երկրորդ, անոր միջին մասին մեջ կմտնե սաղմոս մը, այսինքն հոգևոր բանաստեղծություն մը: Երրորդ, ամբողջ գիրքը կուտա մարգարեական պատգամ մը, այսինքն կրոնա-բարոյական մեծ ճշմարտություն մը:

Հովնան գրքին հերոսն է քան թե՝ հեղինակը, ինչպես են արդարև, օրինակ, Հեսու, Հռութ, Հուդիթ և նմանները, որոնք իրենց անունը կրող աստվածաշնչական գիրքերուն գլխավոր դեմքերն են և ոչ՝ գրողները: Ստույգ է թե Հովնան անունով մարգարե մը կհիշվի Աստվածաշունչի Դ Թագավորության ԺԴ 25-ին մեջ, սակայն ոչ մեկ բացահայտ ապացույց կա, թե այդ Հովնանը եղած ըլլա այս գիրքին հեղինակը: Ընդհակառակը ս. Գրոց մասնագետներ կպնդեն, որ այս գիրքը գրված է հրեական պատմական գերությենեն կամ աքսորեն հետո, այսինքն Զ—Ե դարերուն նախքան Քրիստոս. մինչդեռ Դ Թագավորությանց մեջ հիշված Հովնանը ապրած է ն. Ք. 770-ական թվականներուն:

Հակասություններով լեցուն նկարագիր մըն է Հովնան, ճիշտ իր պատկանած ժողովուրդին պես: Աստուծմե պատգամ կստանա «քարոզելու Նինվե մեծ քաղաքին մեջ», ինչ որ հաճելի չեկավ իրեն: Սակայն փոխանակ իր անարժանությունը կամ անկարողությունը պատճառ բռնելով հրաժարելու

նման առաքելութեան մը. ինչպես փորձեցին ընել Մովսես և ոմանք մյուս մարգարեներեն, Հովնան դիմեց արտասովոր միջոցի մը. «Փախչիլ Աստուծո ներկայութենեն»: Ուստի Ցաֆա նավահանգիստը իջավ, նավ վարձեց փախչելու համար «Թարսիս», որ կենկատվեր այն ատենվան ծանոթ աշխարհի հեռավորագույն մասը, հարաբերաբար Պաղեստինի: Այս կետեն կսկսին Հովնանի արկածները, որոնք տեղի կունենան չորս տարբեր վայրերու մեջ՝ հետաքրքրական դրամայի մը չորս կարճ տեսարաններով:

1.—ԾՈՎԻ ՎՐԱՑ

Հովնան Թարսիս կփախչեր խորհելով որ իր Աստուծույն իշխանությունը կտարածվեր լոկ Իսրայելի երկրին վրա, և հետևաբար չէր հասներ այնքան հեռու տեղերը, և ինք ազատ կըլլար Անոր հետապնդումեն: Գրքին հեղինակը սակայն քայլ առ քայլ կփորձե սրբագրել Հովնանի սխալ և նեղմիտ գաղափարները: Նախ կսորվեցնե թե Աստուծո իշխանությունը կտարածվի ամենուրեք, թե՛ անշունչ տարրերուն և թե՛ շնչավոր արարածներուն վրա:

Ուստի Հովնան հազիվ հեռացած էր իր երկրեն, երբ «Տերը սաստիկ հով մը հանեց և մեծ մրրիկ մը եղավ ծովուն վրա, և նավը խորտակվելու վտանգին ենթարկվեցավ»: Երբ ամեն ոք երկյուղի և տագնապի մատնված էր, Հովնան քաշված նավի խորշը՝ խոր քունի մեջ թաղված «կխորդար»: Նավապետը մշտեց Հովնանի կողին, արթնցուց զայն, ու կես հանդիմանական շեշտով ըսավ անոր. «Հերիք է խորդաս, ելիր, դուն ալ աղոթե քու Աստուծույդ, թերևս քու Աստվածդ ազատե զմեզ և չկորսվինք»: Գրքին մեջ ոչինչ ըսված է, թե Հովնան աղոթե՞ց կամ ոչ. իրողությունը այն էր, որ ծովը տակավ առ տակավ ավելի կատաղի կդառնար և ալիքները նավուն մեջ կխուժեին: Մարդիկ ի վերջո այն եզրակացության եկան, թե մեղավոր մը կար իրենց մեջ, որուն պատճառով այս անակնկալ փոթորիկը փրթած էր իրենց գլխուն: Ուստի կդիմեն այն ժամանակներու հատուկ միջոցի՝ հանցավորը գտնելու համար: «Վիճակ նետեցին և վիճակը Հովնանին ելավ»: Հովնան պատմեց ամեն բան առանց վերապահության:

Տեսարանի տագնապալի այս կետին մեջտեղ կուգան թե՛ նավաստիներու և թե՛ Հովնանի մարդկային գովելի գիծերը: Վտանգը հաճախ կեղծայրացնե մարդերը, որչափ չըներ անդորրությունը կամ խաղաղությունը: Նավաստիներ, որոնք հեթանոսներ են, այսինքն ըստ հրեական տեսության անխիղճ և անաստված մարդեր, հասկնալով հանդերձ որ իրենց գլխուն եկած այս փորձանքին պատճառը Հովնանն է, անմիջապես ծով չեն նետեր զայն. այլ ազնվաբար կուզեն իմանալ խորհուրդը նաև «Աստուծո ծառային», ու կհարցնեն անոր. «Այժմ ի՞նչ ընենք քեզի որ ծովը դադարի» իր կատաղությունեն: Ու մեջտեղ կելլե Հովնանի գրեթե միակ դրական գիծը իր պատասխանին մեջ. «Բռնեցեք զիս և ծով նետեցեք, և ծովը պիտի դադարի իր ալեկոծությունեն, որովհետև գիտեմ թե իմ պատճառովս եկած է այս մեծ մրրիկը ձեր վրա»:

Արդարև ապշեցուցիչ է Հովնանի արտահայտած ոգին. քայց չի դադարիր հակասական ու հեգնական լինելե: Այս մարդը չուզեր հեթանոսներուն քարոզության երթալ. որպեսզի անոնք կորուստի մատնվին. բայց այժմ այդ միևնույն մարդը պատրաստակամություն կհայտնե ինքզինքը զոհել ուրիշ հեթանոսներու համար...: Հովնանի ապշեցուցիչ առաջարկը կդիմագրավվի նույնքան ազնիվ վերաբերմունքով հեթանոս նավազներու կողմե: Ասոնք իրենց գերագույն ճիգը ի գործ կդնեն նավը դեպի ցամաք դարձնելու: Կուզեն իրենց հետ ազատել նաև Հովնանը: Ու լակոնակասնորեն կմիջամտե գրքին ծուժկալ հեղինակը. «Չէին կրնար»: Ի վերջո նավաստիներ դիմեցին Հովնանի Աստվածին և ըսին. «Քավ լիցի, Տեր, որ կորսվինք այս մարդուն պատճառով. բայց մյուս կողմե կխնդրենք որ մեր ընելիքը մարդասպանություն չհամարես. քանի որ դուն այսպես ուզեցիր և այսպես ըրիր»: Եվ բռնեցին Հովնանը և ակամա ծով նետեցին: Փոթորիկը որքան անակնկալորեն եկած էր, նույնքան հանկարծակաև ձևով իջավ: Մարդիկ երկյուղով և երախտիքով լեցվեցան Հովնանի Աստուծույն նկատմամբ և ի նշան շնորհակալության Անոր զոհեր մատուցին և ուխտ ըրին որ ավելի մարդասիրի կյանք պիտի վարեն այս ազատումեն հետո: Այստեղ կիջնե վարագույրը առաջին տեսարանին:

2.—ԿԵՏ ՁՈՒԿԻ ՓՈՐԻՆ ՄԵՋ

Երկրորդ տեսարանը տեղի կունենա ամենեն անակնկալ վայրի մը մեջ: Հովնան ծով նետվելեն հետո «Աստուծո հրամանով» կկլանվի կետ ձուկի մը կողմե: Այս տեսարանը ամբողջությամբ մենախոսություն մըն է առ Աստված ուղղյալ: «Նեղությանս մեջ Տիրոջ աղաղակեցի ու Անը լսեց ինձի»: Այս խոսքը ոչ միայն առաջին տողն է չափաբերական այս աղոթքին, այլ նաև խտացումն է այս սաղմոսի ամբողջ իմաստին: Մնացյալ տողերը բանաստեղծական ու պատկերալից նկարագրությունն է մարգարեի «նեղության» և Աստուծմե «լսված ըլլալու» երախտագիտության:

Այս աղոթքին մեջ ամենեն տարօրինակ երևոյթը սակայն այն է, որ Հովնանի կուլան զլխումի ոչ մեկ արտահայտություն կա, գործված անհնազանդության համար: Ամբողջությամբ ցավագին աղաղակ մըն է «դժոխային» վիճակի մատնված ըլլալուն և ուժգին փափաք մըն է անկե դուրս գալու և «Տիրոջ Տաճարը անգամ մըն ալ տեսնելու»: «Հոգիս իմ մեջ նվաղեցավ. բայց աղոթքս պիտի հասնի Քեզի Քու տաճարիդ մեջ»: Տակավին կշարունակե իր մտքին մեջ գամված մնալ այն գաղափարը թե Աստված աղոթքները կլսե լոկ իր Երուսաղեմի սուրբ տաճարեն, որուն մեջ կբնակեր Անը ըստ հրեական նեղմիտ տեսակետին: Կընդունի որ տրվածը պատիժ մըն էր իրեն. բայց երբեք մեղանչած ըլլալու և դարձի գալու արտահայտություն չկա Հովնանի այս աղոթքին մեջ: Վերջավորության՝ թեև մեր թարգմանության մեջ կա սա խոսքը. «Այլ ես ի ձայն օրհնութեան եւ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ մատուցից պատարագ», սակայն գլխագրյալ բառը կպակսի եբրայական բնագրի՝ և անկե կատարված բոլոր թարգմանությանց մեջ: Բաց աստի՝ «խոստովանութիւն» իր զրաբար առումին մեջ անպատճառ մեղքի խոստովանություն չի նշանակեր. այլ Աստուծո փառքը և մեծությունը հայտարարելն ալ «խոստովանութիւն» է. և այս իմաստով գործածված է մեր թարգմանության մեջ: Սաղմոսը կավարտի, դարձյալ ըստ եբրայական բնագրի, «Տեառն է Փրկութիւն» խոստովանությամբ: Ու արդարև տրված պատիժը բավ համարելով Աստված կփրկե զայն. «Տերը կհրամայե վիշապ ձուկին որ թքնե զայն ցամաքի վրա»:

3.—ՆԻՆՎԵԻ ՄԵՋ

Լույս աշխարհ գալեն հետո՝ Աստված վերըստին կհրամայե Հովնանին երթալ և քարոզել Նինվեի մեջ: Հովնան թեև չկամ՝ բայց կհամակերպի այս անգամ աստվածային հրամանին ու կերթա Նինվե: Կքարոզե հրապարակե հրապարակ, փողոցե փողոց: Լոկ մեկ նախադասություն է իր ամբողջ քարոզը. «Երեք օրեն (ըստ եբրայական բնագրի՝ քառասուն օրեն) Նինվե պիտի կործանի»: Չկա ոչ մեկ հորդոր ապաշխարանքի, չկա ոչ մեկ հուսադրական կամ պայմանական խոսք, որ եթե ապաշխարեն, պիտի ազատին: Այլ նույն ծլատ, չկամ, միօրինակ և դատապարտող հանկերգը ...Նինվե պիտի կործանի»:

Ու տեղի կունենա անակնկալ հրաշքը: Եվ նինվեցիներ հավատացին Աստուծո... պահեցողություն հայտարարեցին. քուրձ հագան՝ մեծամեծներեն մինչև իրենց փոքրիկները»: Ուրեմն գրչի երկու ժուժկալ հարվածով գրչին հանճարեղ նեղինվակը մեզի կպատկերացնե այն հոգեկան հեղաշրջությունը, որ կկատարվի այս զեղխ, ապականված ու բարոյապես դատապարտյալ աշխարհաքաղաքին մեջ, Հովնանի ակամա քարոզությամբ: Հաջորդող տողերը նույնքան ճարտար, զուսպ և բանաստեղծական մանրամասնություններն են կատարված հոգեփոխության, որ եզրակացության կբերվի սա հավաստումով. «Աստուծո աղաղակեցին սրտով և մտքով, ու դարձան իրենց չար ճանապարհներեն և իրենց ձեռքով գործված անօրենություններեն և ըսին. «Ով գիտե, գուցե միտքը փոխե Աստված և հրաժարի իր սաստիկ բարկութենեն և չկորսվինք»:

Տեսավ Աստված այս հրաշքը և ի գործ չդրավ իր սպառնալիքը:

Տեսավ Հովնան այս հոգեփոխությունը «և սաստիկ տրտմեցավ ու խռովեցավ»: Ու աղոթքի ձևին տակ գրեթե դառնությամբ Աստուծո երեսին տվավ բան մը, որ իրականին մեջ Աստուծո փառքը կկազմեր. և մեջտեղ հանեց իր իսկական դրդապատճառը նման առաքելութենե մը խուսափելուն. «Ով Տեր, այս չէ՞ր պատճառը իմ Թարսիս փախչելուս. որովհետև գիտեի թե ողորմած ես դուն, գթած, երկայնամիտ ու բազումողորմ. և կհրաժարիս մարդոց գլխուն չարիք բերելե»: Ու Հովնան իր հաջողության գագաթնակետին վրիպած մարդու մը ամբողջ վհատությամբ Աստուծմե խնդրեց վերջ տալ իր կյանքին: Ու Աստված ինչպես ներած էր ամբարիշտ քաղաքին, ներող աչքով նայեցավ նաև Հովնանի այս մեղադրելի կուրության, և կես հանդիմանական ու կես հեգնական ձևով հարցուց. «Արդարև շատ տրտմած ես...»: Եթե ուզեինք այս խտացյալ ու լակոնական հարցումը իջեցնել մեր հասարակ խոսակցության ձևին և քչիկ մը բանալ անոր ծալքերը, պիտի ըսեինք. «Հովնան, կյանքիդ մեծագույն հաջողությունը ունեցար. նմաններդ, որոնք կորուստի դատապարտված էին, քու քարոզությամբդ ազատագրվեցան. ուստի պետք չէ՞ր որ դու ալ ուրախանայիր: Կվայելե՞ քեզի այդ կախ երեսը, այս մարդոց դարձի գալուն առիթով...»: Որքա՜ն կհիշեցնե Հովնանի ընթացքը Անառակ որդիի առակին երեց եղբոր ունեցած հոգեվիճակը: Աստուծո նշանակալից հարցումը սակայն ազդեցություն չգործեց Հովնանի վրա: Նինվեն չէր կործանած. այդ պատճառով սուտ մարգարե եղած ըլլալու հիմար գաղափարը կայրեր զինքը...: Հովնանի այս տրրտում տրամադրության վրա կիջնե վարագույրը պատմվածքի վերջընթեր տեսարանին;

4.—ՀՈՎՆԱՆ ԵՎ ԴԴՄԵՆԻՆ

Հովնան տակաւին տարված էր հեթանոս քաղաքը կործանված տեսնելու սնեղյալ մտածումով: Ուստի վերջին տեսարանը երբ կբացվի, կտեսնենք զայն, որ եված է քաղաքեն դուրս բարձրադիր վայր մը. և որովհետև չափազանց տաք էր՝ շոր ճյուղերե կազմվված հապճեպ հովանի մը սարքված է իր գլխուն վերև և անոր ներքև նստած կսպասեր տեսնելու թե «ի՞նչ պիտի պատահեր քաղաքին»:

Քանի որ Հովնան չէր կրցած հասկնալ Աստուծո նշանակալից հարցումին տարողությունը, Աստված դիմեց գործնական միջոցի մը հասկցնելու համար իր միտքը: Հրամայեց որ մագլցող դդմենի մը բուսնի մեկ գիշերվան մեջ ու բարձրանա Հովնանի շինած հովանիին վրա, «զովացնելու համար զայն տաքության իր տառապանքեն»: Հովնան առավոտ կանուխ հրճվանքով տեսավ դդմենին և ժպտեցավ առաջին անգամ ըլլալով՝ իր առաքելության ելնելե ասդին: Արդարև շուտով զգալի եղավ դդմենիին զովարար ազդեցությունը, և սիրո կապ մը ստեղծվեցավ իր սրտին մեջ դդմենիին նկատմամբ, որ իր միակ մխիթարությունը եղած էր իր անհաճո առաքելության ամբողջ ընթացքին, և ընդդեմ ցերեկի դժոխային տաքին:

Հաջորդ գիշերը Աստուծո հրամանով որդ մը կծեց արմատները դդմենիին: Առավոտ երբ արթնցավ Հովնան, տեսավ, որ դդմենին թառամած էր արդեն: Կացությունը ավելի վատթարացավ, երբ տապակեցուցիչ խորշակ ալ եկավ և իսկապես ցամքեցուց դդմենին: Խեղճ մարգարեն գրեթե կիսեղդվեր տաքեն. «Ոգին կքաղվեր»: Տագնապալի այս կացությունը անգամ մը ևս կրկնել տվավ իրեն նախապես ըրած հուսահատական իր արտահայտությունը. «Ավելի լավ է մեռնիլը, քան՝ ապրիլը»: Ու Աստված ալ իր կարգին կրկնեց իր խորհրդավոր հարցումը. «Արդարև շա՞տ տրտմած ես դդմենիին վրա»: Ու Հովնան անտրբագրելի մարդու մը կամակորությամբ պատասխանեց. «Այո, շատ տրտմած եմ. մեռնելու աստիճան»:

Ու հաջորդեց Աստուծո շնորհաց հարվածը. «Դուն կմեղքանաս այն դդմենիին, որուն վրա ոչ մեկ աշխատանք թափած ես, ոչ ալ՝ ոնէ խնամք տարած. որ գիշեր մը բուսավ և մյուս գիշերը կորավ: Ես ինչպե՞ս չմեղքանամ Նինվեի պես մեծ քաղաքի մը վրա, ուր կբնակին ավելի քան տասներկու բյուր մարդիկ, որոնք չեն կրնար զանազանել իրենց աջը՝ ձախեն. ու այնքան շատ անասուններ»:

Գիրքը կվերջանա այս կտրուկ պատգամով: Այնքան պարզ ու թափանցիկ էր թելադրանքը, որ ոչ թե Աստուծո մարգարե մը, այլ՝ ամենեն հասարակ ընթերցող մը անգամ պիտի կրնար հասկնալ և իրավունք տալ Աստուծո, որ խնայած էր Նինվե քաղաքին, տեսնելե հետո անոր բնակիչներուն անկեղծ ապաշխարությունը:

ՀՈՎՆԱՆ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Առակ կամ այլաբանություն մը կնկատենք մենք Հովնանի պատմվածքը: Երբ ընդունինք այս տեսակետը՝ այն ատեն գրքին դեմ հարուցված բնախոսական և այլ առարկություններ ինքնին կհարթվեն և ՀՈՎՆԱՆԻ՝ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ կվերածվի գրական ու կրոնական գլուխ-գործոցի մը: Մարդիկ առակներուն մեջ գիտական կամ բանական շարահարություն չեն փնտրեր. այլ՝ միտք և իմաստ: Ի՞նչ ըսել կուզե առակը. այս է հիմնական հարցումը առակ մը արժևորելու: Օրինակ, չենք հարցներ թե աղվեսը կամ ագռավը կխոսի՞ն. ընդհակառակը հաճույքով և հետաքրքրությամբ կհետևինք անոնց «խոսակցության», գիտնալով հանդերձ թե անոնք չեն խոսիր: Անոնց վերագրված խոսքերուն կամ արարքներուն մեջեն կնշմարենք մարդկային գովելի կամ պարսավելի բարքերը:

Հոգեբանական իրողություն է, որ մեկին հանցանքը կամ թերի կողմը մերկապարանոց իր երեսին զարնելը, զայն սրբագրելու կամ սխալը մատնանշելու դիտավորությամբ, հաճախ չի ծառայեր իր նպատակին, և կրնա մինչև իսկ հակառակ արդյունք տալ: Բայց եթե մեղքը կամ սխալ մտայնությունը առակի մը կամ օրինակի մը ձևին տակ ներկայացվի, ընդհանրապես հասկանալի և երբեմն ալ ընդունելի՝ մինչև իսկ սրբագրելի կըլլա ենթակային կողմե: Դանոթ է Դավիթ թագավորին գործած ծանր մեղքը, և Նաթան մարգարեին կողմե օրինակով մը զայն իրեն ներկայացնելու ճարտար կերպը, ուր Գավիթ անգիտակցաբար ինք կուտա իր դատավճիռը (Բ. Թագ. ԺԲ գլուխ): Նույն կերպը կիրարկեց նաև Հիսուս ծաղկելու համար հրեա մեծամեծներու բարոյական կուրությունը և Հին Կտակարանի Ուխտին հանդեպ իրենց անհավատարմությունը: Օրինակ, Այգեստերի (Մատթ. ԻԱ 33—46) կամ Կոչնատերի (Մատթ. ԻԲ 1—14) առակներով, ուր արդարև անոնք «գիտցան, թե իրենց համար ըսված էր» այդ առակը:

Արդ, Հովնանի գիրքը նման նպատակ հետապնդող պատմվածք մըն է:

Թե արդարև հեթանոսներն ալ ի վերջո

պիտի արժանանային աստվածային շնորհներու՝ նախատեսված և հաստատված էր Հին Կտակարանի մեջ: Նախ Աստվածաշունչի առաջին էջերուն մեջ կնշվին արդարներ, որոնք ապրած են նախքան «Եբրայեցի» ժողովուրդի մը ծագումը. Աբել, Սեթ, Ենովք (Ծննդ. Ե 21) Նոյ, Մելքիսեդեկ (Ծննդ. ԺԴ 18—20) հրեա չեն բառին ազգագրական իմաստով: Բաց աստի Աստված կխոստանա Աբրահամին, որ «Քու սերունդովդ պիտի օրհնվին երկրի բոլոր ազգերը» (Ծննդ. ԻԲ 18): Այլուր ըսված է. «Բոլոր ծայրերը աշխարհին պիտի հիշեն և պիտի դառնան Տիրոջ և բոլոր ազգերու տոհմերը քեզի երկրպագություն պիտի ընեն» (Սղմ. ԻԱ 28):

Այս ուղղությամբ ավելի հատկանշանական են Եսայի մարգարեի պատգամները: Աստված խոսքը ուղղելով Իսրայելի ժողովուրդին կըսե. «Թեթև պաշտոն մըն է քեզի համար իմ ծառաս ըլլալը, լոկ Իսրայելի ցեղերը կանգուն և կենդանի պահելու նպատակով... Քեզ հեթանոսներու համար լույսի մը պիտի վերածեմ, որպեսզի իմ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸՍ հասնի աշխարհի հեռավորագույն ծագերը» (Ես. ԽԹ 6): Ուրիշ խոսքով, Իսրայելի կոչումն էր նախ մարմնավորել այն «ԾԱՌԱՆ», զոր այնքան սրտագրավ կերպով նկարագրած է Եսայի մարգարեն, և ապա ըլլալ հեթանոսներու դարձին պատճառ և առաջնորդ. «Հակոբ իմ ծառաս է, օգնական պիտի ըլլամ անոր. ոգիս անոր վրա դրած եմ. հեթանոսներուն իրավունք պիտի ընե. անոր անունին հեթանոսներ պիտի հուսան: Ես, Տեր Աստված, կոչեցի քեզ և զորացուցի քեզ, որպեսզի «Ուխտ» ըլլաս ազգերու և լույս՝ հեթանոսներու» (Ես. ԽԲ 1—6: Բդ. նաև Ես. ԾԵ 4, 5 — Դան. Է 14 — Հովս. Բ 23 ևն): Բայց այս բոլորը գրեթե մոռացության տրված էին, և Իսրայել ինքզինքը նկատած էր Տիրոջ ընտրյալը, որով միայն պիտի զբաղեր Աստված: Բոլոր մյուս ազգերը արժանի չէին Աստուծո ուշադրության: Հետևաբար գրեթե ոչ մեկ ճիգ ըրավ Իսրայելը իր ստացած լույսը տարածելու նաև հեթանոսներուն մեջ, այլ գրեթե գրվանի տակ պահեց. որովհետև ինքն ալ ակընկալված ափով չօգտվեցավ անկե, շարունակ իյնալով կռապաշտության մեջ և բարոյապես մյուս ազգերեն շատ քիչ տարբերություն ցույց տալով:

Հատկապես գերությունն դարձին՝ (516 ք. Ք.) Իսրայելը առավել լեցված էր հեթանոսաց հանդեպ դառնությամբ և ատելությամբ: Արդարև այնքան շատ տառապանք քաշած էր այս ժողովուրդը օտարներեն, որ այնու գրեթե ամբողջությամբ օտարատյաց դարձած էր: Այս ոգին հաճախ ուժգնորեն կերևի սաղմոսներեն ոմանց մեջ, ինչպես նաև Եզրայի գիրքերուն մեջ: Այս ոգիին արձագանքներ կլսենք նաև Նոր Կտակարանի մեջ շատ տեղեր: Օրինակ, երբ Հիսուս օրին մեկը ջուր ուզեց սամարացի կնոջմե մը, այս վերջինը զարմացած անոր երեսը նայեցավ և ըսավ. «Դուն որ հրեա մըն ես, ինչպե՞ս կրնաս ջուր ուզել ինձմե, սամարացի կնոջմե մը, քանի որ հրեաներ երբեք չեն խառնակիր սամարացիներու հետ» (Հովհ. Դ 9):

Խտրականության և չկամության այս ոգին այնքան արմատացած էր այս ժողովուրդին մեջ, որ այնպես գրեթե մոռացության տված էր իր մեծագույն կոչումը, որուն համար Աստված ընտրած էր զայն. այսինքն նախ կենսագործել Աստուծո պատգամները իր կյանքին մեջ և ապա փոխանցել զանոնք ուրիշ ազգերուն: Այս երկու կետերուն մեջ ալ թերացած էր Իսրայել: Ինքզինքը հեթանոսներեն հեռու կպահեր պիղծ նկատելով զանոնք:

Ի տես իր ժողովուրդի այս նեղմտության Իսրայելի լուսամիտ մարգարեներեն մեկը գրեց Հովնանի գիրքը ցույց տալու համար իր ժողովուրդի հակասականությունները, և հեթանոսներու հանդեպ իրենց բռնած ծրխտական դիրքին հակառակ լինելը Աստուծո կամքին:

Այս գեղեցիկ գրականության հերոսը, Հովնան, նույնինքն Իսրայելի ժողովուրդն է: Երբ Հովնան դժկամություն կհայտնե հեթանոս քաղաք մը քարոզության երթալու՝ սրտեն կխոսի ամեն հրեայի. որովհետև իր կացության մեջ ամեն հարազատ իսրայելացի պիտի ըներ այն, ինչ որ ըրավ Հովնան: Սակայն հեղինակը պատմությունը կբերե այնպիսի ճարտար վերջավորության, որ ամեն հրեա կամավ կամ ակամա գինաթափ պիտի ըլլար իր նեղմտութենեն, և իրավունքը Աստուծո պիտի տար, մինչև իսկ մեղադրելով Հովնանը իր այս կամակորության համար: Ուրիշ խոսքով իր իսկ դատապարտության վճիռը պիտի տար, առանց սակայն ունենալու Դավիթի քաջությունը ճանչնալու իր սխալը և սրբագրելու զայն:

Եթե Հովնանը Իսրայելն է, ո՞վ կամ ի՞նչ է կետ ձուկը, որմե կկլանվի ան: Վիշապ ձուկը Իսրայելի գերությունը կամ աքսորն է: Ձուկի փորին մեջ Հովնանի շրթունքներուն վրա դրված ամեն մեկ նախադասությունը պատկերավոր և այլաբանական ակնարկություն է իսրայելյան գերության, զոր թեև «նեղության մեջ» և «դժոխային տառապանքով» անցուցին, բայց ի վերջո արժանի եղան Աստուծմե «լսվելու», գերութենեն դառնալու և վերաշինելու իրենց տաճարը զոր անգամ մըն ալ տեսնելու կարողանալ կմաշեր Հովնան ձուկի փորին մեջ. (Բ 5, 8): Արդարև մար-

գարեական գիրքերուն մէջ գիրությունը ներկայացուած է պատկերումը վիշապին, որ թեև կուլ տալով՝ բայց չկրցաւ մարսել Իսրայելի ժողովուրդը: Կը սեսնենք Երեմիա մարգարեն. «Կերաւ զիս Նաբուգոդոնոսոր՝ (Իսրայելը գերի վարող թագաւորը). կլլեց զիս (Իսրայելի ժողովուրդը) վիշապի մը պէս» (Երեմ. ԾԱ 34): Ու Ասուած կրկնեցուած. «Վրեժ պիտի լուծեմ Բաբելոնեն. և պիտի հանեմ անոր բերանեն իր կուլ տուածը» (Նույն. ԾԱ 44):

ՀՈՎՆԱՆ ԵՎ ՄԵՆՔ

Երբ մեր ժողովուրդը և Հովնանը դեմ-դիմաց բերել կփորձենք, մեր միտքը կուգան առաջին առիթով երկու պարագաներ, ուր արդարև Հովնան մասնաւոր կերպով մտած է մեր կյանքին և մշակույթին մէջ: Առաջինը Աղթամարի եկեղեցիի պատին վրա քանդակված Հովնանի պատկերացումն է, որ միաժամանակ ներկայացուցիչն է մեր մանրանկարային արվեստին բազմաթիվ նույն պատկերացումներուն, որոնց մեջ ան վիշապ ձկան երախը կնետվի: Հնութենեն մեզի եկած քիչ պատկերներ այնքան խոսուն ե գրաւիչ են, որքան այդ քանդակը: Արվեստի գործ մը հաջողած է կըսենք, երբ դիտողին ուշադրությունը ամբողջությամբ իր վրա կկեդրոնացնե և հուզական վիճակ մը կըստեղծե մարդու մեջ: Արդ, Հովնանի Աղթամարի պատկերացումը իր պարզության, նախնականության ու խոշոր գիծերուն մեջ այդ է որ կընե տպավորվելու ատակ աչք ունեցող գրեթե ամեն դիտողին վրա: Կառինքնե քեզ պահ մը. ու դուն հանդուրժով կդիտես զայն իր ժուժկալ գիծերուն մեջ և նշանալից ժպիտ մը կուրվագծվի դեմքիդ վրա: Ու եթե ծանոթ ես Հովնանու Գիրքին, հետաքրքրությամբ կնշմարես, որ հարազատ համանմանություն մը կա երկուքին ոգի և ոգիին միջև. երկուքն ալ երևութապես նախնական ու ժողովրդային են, մատչելի ամենքին և հասկնալի ամենքեն: Խորհրդանշական արվեստը իր բնական կատարելությունը գտած է այդ պատկերացումին մեջ, ինչպես «սեմպոլիկ» գրականությունը իր գրավիչ կատարը գտած է Հովնանի մարգարեական գիրքին մեջ: Երջանիկ զուգահեռականություն մը կա երկուքին միջև, ուր գրականությունը և գծագրությունը գիրար գրկած են հարազատորեն:

Սակայն ավելի կարևոր է երկրորդ դեմ հանդիմանությունը հայ ժողովուրդին և Հովնանին: Այդ նախ կպատահի ամեն կիրակի, երբ Հովնանի սաղմոսը կերգենք Ավագ օրհնության մեջ: Օրինակ. «Ընդ Յովնանու աննն իմ ծփեալ յալիս ծովու. աղաղակեմ ի նեղութեան իմում առ փրկողդ եւ լոյս, լուր ձայնի իմում»: Կպատահի նաև Հովնանի տարեկան հիշատակությամբը մեր տոնացույցին մեջ: Մեծ պահքեն երեք ուրբաթներ առաջ Հովնան կուգա ամեն տարի իր տեղը գրավելու մեր տոնացույցին մեջ, իբրև լրումը կամ կնքումը ԱՌԱՋԱՎՈՐԱՑ պահքին, որ կհիշեցնե հինվեցվոց խիստ պահեցողությունը: Երբ Աղթամարի արվեստագետը պատկերացուցած է պատմվածքի ամենեն դրամատիկ պահը, որ մասնաւոր կոչում կընե մեր երևակայության, Հայց. եկեղեցին ալ բռնած է այդ գրքին բարոյապես ամենեն նշանակալից դեպքը և բանած է անոր վրա համապատասխան շարականներով:

Օրվան շարականներու եղանակները ծանրաքեռն և ծանրագնաց են ցորեցի պարկերով լեցուն սայլի մը պես: Կարծես մեկ ձայնանիշի այլազան արժեքներու վրա գրված նույն եղանակն է, որ կհնչեցնեն «Հարց»-են մինչև «Համբարձի» շարականները: Բառերն ալ պարզ են գրքի ոճին՝ և Աղթամարի քանդակին պես: Ահավասիկ երկու պարզ նմուշներ անոնցմե:

«Ապաշխարությամբ ապրեցալ քաղաքն հինվեցվոց.
Լսել ձայնի մարգարեին՝ եղալ թողություն մեղաց»:

կամ

«Որ լվար ձայնի աղոթից երկոտասան բյուրուց
Եվ մանկանց տղայոց, ներող, գթած և երկայնամիտ.
Լուր այժմ և ինձ, որ կարդամս առ քեզ»:

* * *

Արդյոք այս երկո՞ւ մարզերուն մեջ միայն շփում կամ կապ ունինք մենք Հովնանի հետ. ուրիշ նմանության գիծեր չկա՞ն իր և մեր միջև: Որոնենք:

«ՔԱՐՈԶԵԼԸ» քրիստոնեական եկեղեցիի, հիմնական «փոնկցիոն»-ներեն մեկն է: Իր հիմնադրին և Փրկչին առաջնահերթ գործունեությունը եղալ այդ, և վերջին հրամանը՝ իր աշակերտներուն. «Գացեք, ուրեմն, բոլոր հեթանոս ազգերը ինձի աշակերտ ըրեք, մկրտեցեք զանոնք անունովը Հոր և Որդվո և սուրբ Հոգիի. և սորվեցուցեք անոնց պահել ամեն ինչ, որ պատվիրեցի Ձեզի»: Շնորհիվ այդ. պատվերին այսօր քրիստոնեական կրոնքը տարածված է աշխարհի գրեթե բոլոր անկյունները: Ան-

սայով այդ պատուերին Հիսուսի աշակերտներեն առնվազն երկուքը եկան նաև Հայաստան և մինչ դրին այնտեղ քրիստոնեական Եկեղեցին:

Հովնանի մեղքը քարոզելու աստվածային պատգամին չանսալը եղավ: Մի կերպ իր սրտեն չեկավ Աստուծո շնորհքին մասնակից դարձնելը նաև ուրիշներ, երբ մանավանդ անոնք իրեն արեևնակից ու կրոնակից չէին: Նթե Քրիստոսի աշակերտները մեկական Հովնան ըլլային, քրիստոնեությունը Պաղեստինի սահմաններեն դուրս պիտի չգար և զանգառելի հրեական աղանդ մը պիտի ըլլար, եթե մինչև իսկ պահեր իր գոյությունը: Քրիստոնեությունը իր այսօրվան տարածումը կպարտի հայտնի կամ անհայտ բյուրավոր քարոզիչներու, որոնք արդարև կազմեն իր իսկական պարծանքները:

Հովմի եկեղեցին այսօր արդար պարծանքով կրնա անդրադառնալ, որ ավելի քան 500 միլիոն հետևորդներ ունի աշխարհի ամեն կողմերը: Բյուզանդական եկեղեցին դարձի բերած ու դարերով հովված է սլավ ժողովուրդները, որոնք երբեմն կկազմեն և այսօր ալ չեն դադրած կազմելե փառքը և մեծամասնությունը իր գլխավորած եկեղեցիներու միասնականության: Բողոքական եկեղեցիներ աշխարհով մեկ տարածված են շնորհիվ ավետարանելու իրենց անհագ տենչին: Ղպտի եկեղեցին կրնա մատնանշել հապեշական եկեղեցին իբրև իր դուստրը: Ասորի եկեղեցին անգամ, որ երբեմն թափանցեր էր Պարսկաստանի գրեթե ամեն կողմերը և Ալետարանի լույսը տարածեր էր Կենտրոնական Ասիո և Չինաստանի խորերը, այսօր ալ ունի Հնդկաստանի մալապար նահանգին մեջ ծաղկյալ պատմական քրիստոնեական հավաքականություն մը, իբրև իրեն դավանակից և դուստր եկեղեցի:

Իսկ մենք... ինչով կրնանք ներկայանալ առաջի Քրիստոս դատավորին, երբ մեզմե հաշիվ պահանջե, թե ի՞նչ ըրած ենք իր շնորհած Ավետարանի քարոզության քանքարները: Կրնա՞նք ըսել. «Տեր, ինձի երկու քանքար տված էիր, երկուք ալ անոր վրա ես շահեցա...»: Աղվանաներ չկան այսօր իբրեվ ուրույն եկեղեցի: Վրացիներ չեն իսկ ընդունիր, որ հայ եկեղեցիեն ղրկված քարոզիչներով դարձի եկած են. ամեն պարագային այսօր մեզի հետ ի հաղորդության չեն: Կրնա՞նք արդարանալ արդյոք պատճառանք բերելով այն դժվար կացությունը, որում մեջ ապրած ենք դարերով: Տարակույսե վեր է, թե դժվար պայմաններու մեջ ապրիլ ու պահել աստվածային ավանդը ինքնին մեծ արժանիք մըն է. սակայն այսօրվան արևելյան եկեղեցիներեն ո՞ր մեկը չէ գոյատևած նույնքան ծանր խաչերու ներքեվ: Ավելին: Ոչ մեկ եկեղեցի ավելի ծանր ու կարկանդյալ պայմաններու ներքև ապրած է քան առաջին երեք դարերու առաքելական Եկեղեցին: Հակառակ այս իրողության սակայն ոչ մեկ եկեղեցի կրնա պարծենալ, թե առաքելական դարերու եկեղեցիեն ավելի՝ կամ առնվազն անոր չափ՝ եռանդուն և արդյունավոր եղած է քարոզչության մեջ...:

Պատմական ու այժմեական իրականության լույսին տակ բացահայտ է նմանության գիծերը, որ կան հրեական եկեղեցիի մարմնացումը հանդիսացող Հովնանի և մեր եկեղեցիին միջև: Այսօր մեր ժողովուրդին ու մեր եկեղեցականության համար մեզմե դուրս քարոզչություն կատարելու գաղափարն անգամ տարօրինակ պիտի թվի: Արդյոք չե՞նք կամենար մենք ալ, Հովնանին պես, ուրիշներուն «դառնալը չար ճանապարհներեն և աստվածգիտության գալը»: Նման հարցումին պատասխան անգամ չունինք, քանի որ չէ անցած մեր միտքեն: Առհասարակ այնպես կխորհինք, որ մեր ունեցածը մեզի համար լավ է, և բավ է. և ուրիշներունը՝ ուրիշներուն: Թող ամեն մարդ իր ունեցածը պահե... Այն ատեն սակայն ո՞ւր պետք է տեղավորել տերունական վերջին պատգամը. «Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս...»:

Գոնե ներքին առաքելություն ունենայինք: Գոնե մեր եկեղեցիեն դուրս ինկածները ներս բերելու աշխատանքին լծված ըլլայինք: Որևէ ատեն մտքեն անցուցա՞ծ է Հայաստանյայց եկեղեցին գեթ նման առաքելություն մը կազմակերպելը: Արդյունքը չէ կարևորը. ոչ ալ հաջողությունը, այլ նման տրամադրություն մը ունենալը և այդ ուղղությամբ քայլեր առնելն է կարևորը: Տարօրինակ կթվի այսօր մեզի համար մինչև իսկ եկեղեցվո բեմեն քարոզելը զուտ ավետարանական հիմնական նյութերու մասին. օրինակներ.

«Եթէ կամիս կատարեալ լինել, ե՛րթ, վաճառեա զամենայն ինչ զոր ունիս, եւ եկ զկնի իմ»: Գեթ կիրարկելու համար զայն կուսակրոն հոգևորականության:

«Եթէ ոչ ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աստուծոյ»:

«Տէր, առ յո՞վ երթիցուք մեք, զի զբանս կենաց յաւիտենականաց ունիս դու»:

«Տէր իմ եւ Աստուած իմ». Քրիստոսի համար ըսված:

«Առանց իմ ոչինչ կարէք առնել»: Այլովքը հանդերձ:

Մեզմե ոմանց համար եթե ոչ իմաստե զուրկ՝ գեթ կասկածելի բառեր են օրինակ. «Ապաշխարանք», «Փրկություն», անձնական «հաղորդակցություն» Քրիստոսի հետ

և նմանՆեր, որոնք կարևոր տեղ կգրավեն Ավետարանի ուսուցման մեջ: Հանախ այս գաղափարները կնկատվին բողոքական ապրանքներ, որոնցմե հեռու պետք է կենալ: Մյուս կողմեն երբ մեկը եկեղեցական իշխանության, միության, օրենքի և կարգի կանոնի գաղափարները կկորձե շեշտել, կկարծվի, որ կաթոլիկության մտայնությանե պարապված է, հակառակ անոր, որ Քրիստոս կըսե. «Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք երկրի՝ եղիցի կապեալ յերկինս» (Մատթ. ԺԸ 18): Կամ երբ Պողոս առաքյալ կհորդորե. «Ամենայն ինչ ձեր պարկեշտութեամբ եւ ոստ կարգին լինիցի» (Ա Կոր. ԺԴ 40):

Արդարև ալեկոծության բռնված է այսօր նաև մեր եկեղեցիի նավը: Արտաքին ազդակներ չեն այդ ալեկոծության պատճառները, այլ՝ ներքին: Դժբախտաբար ալեկոծության պատասխանատուները մտած են նավուն խորշը, «կքնանան և կխորդան», ըստ Հովնանի: Սակայն անգամ մը որ հանոզում գոյացուց Հովնան, թե ինք էր պատճառը այդ ալեկոծության, պատրաստակամություն հայտնեց, որ ծով նետեին զինքը, քան թե պատճառ դառնար այդչափ մարդերու կորուստին: Մեր ակնկալածը մեր եկեղեցիին «Նավը խորտակվելու վտանգին» առաջնորդողներեն Հովնանի քաջությունը չէ, այլ՝ հինվեցվոց լրջությունը «Անտուծո հավատալու» և «սխալ ճամբայեն դառնալու», որպեսզի Հայաստանյայց եկեղեցին «չկորսվի» այս ալեկոծության պատճառով:

Այս է Ավետարանի մեջ ակնարկված «Հովնանի նշանը»: «Զի ինչպես Հովնան նշան մը եղավ հինվեցիներուն, որոնք ապաշխարեցին իր քարոզությամբ, նույնպես պիտի ըլլա նաև ՄԱՐԴՈՒ ՈՐԴԻՆ (Քրիստոս) այս ազգին համար»:

Պիտի ըլլա՞ արդյոք Քրիստոս այդ «Նշանը» նաև մեր ազգին համար:

ԶԿԱՌՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ*

«...Լուսաձեւ յորինմամբ հրաշակերտեցեր զՄայր Աթոռն մեր զսուրբ Էջմիածին եւ արարեր զնա շտեմարան անսպառելի շնորհացդ աստուածայնոց՝ ի լինել դաստիարակ եւ կատարելագործիչ ամենայն եկեղեցեացս Հայաստանեայց»:

Ժամամուտ

«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Շարական

Ժամագիրքն ու Շարականը այսպես կը-բնորոշեն հորինվածքը, կոչումն ու դերը Մայր Աթոռ կաթողիկե սուրբ Էջմիածինի:

Ըստ Ագաթանգեղոսի՝ ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին մեջ (302) Աստուծո Միածին Որդին՝ լուսակերպ մարդու նմանությամբ՝ երկինքեն հոսող լույսերու մեջ՝ հրաթով լուսեղեն ոգիներե շրջապատված՝ Հորը մոտեն արծվի արագությամբ, ահագին դղրդումով, կիջնե Հայոց մայրաքաղաքը Վաղարշապատ՝ Տրդատի արքունիքին մոտը և կկանչե. **«Գրիգոր, Գրիգոր, վեր նայե և տես աքանչելիքը զոր կցուցնեմ քեզի»**[1]:

Եվ ահա սուրբը պակուցումով կտեսնե բարձրահասակ, լուսատեսիլ մարդն ահեղ, որ ձեռքին բռնած ոսկի ուռնովը կբախե գետինը, ուր կտեսնվի ոսկի խարիսխ մը խարսխաձև, ճախարակաձև, բլուրի մը մեծությամբ, վրան հրեղեն այուն մը խաչապակ՝ և այունանման ուրիշ երեք խարիսխներ՝ Գայանեի, Հռիփսիմեի նահատակության տեղերուն և հնձանի վրա: Անոնք իրարու կկապվին լուսեղեն կամարներով և կկազմեն համալիր (complex) մը՝ ս. Էջմիածինը:

Աշխարհի Լույսը կիջնե Հայաստան:

Լուսավորչի միտքին մեջ կկազմվի առաջին ուրվագիծը Էջմիածինի և կաթողիկե Մայր տաճարին:

* * *

Էջմիածինը իբրև տեսլական պատկերացումը Աստուծո Միածինին Հայաստան էջքին՝ տեսիլքն է մեր հավատքին հորը ս. Գրիգորի, ուրեմն նաև տեսլականը հայության:

Սկիզբեն տեսիլքի երևույթով պատկերացված Էջմիածինը՝ հետո Աստուծո Բանին պես՝ մարմին կառնե: Անոր հորինվածքին լուսեղեն գիծերը հետզհետե կլեցվին ոսկորով, ջիղով, մկանով և հոգիով:

Եվ Էջմիածինը կլինի կաթողիկե...

«.....տեղ, եւ տաճար Աստուծոյ, եւ տուն աղօթից խնդրուածոց ամենայն հաւատացելոց, եւ աթոռ քահանայութեանն..... Իսկ կամարքն որ ի սեանց անտի ի միմեանս կապէին, այսինքն է հաւասարութիւն միաբանութեան կաթողիկէ եկեղեցւոյ: Իսկ խորանն ի վերայ, ունի զօրինակ վերնոյ քաղաքին՝ զժողովարանն միաբանութեան արքայութեան երկնից»[2]:

Այսպես ահա Էջմիածինի իմանալի խորհուրդը և զգալի լինելությունը կմիավորվին, կիմաստավորվին և կդառնան պատմություն

---

* Կաթողիկե ս. Էջմիածնի տոնի առթիվ հաճույքով հրատարակում ենք տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանի ձոնը՝ նվիրված ս. Էջմիածնին:

[1] Ագաթանգեղոս, հտծ. ՃԲ:

[2] Ագաթանգեղոս, հտծ. ՃԲ:

Հայաստանյայց առաքելական եկեղեցվո, սլատմությունն հայոց:

Էջմիածինը Հորը Միածնին, Արդար Արեգակին ծագումն է Հայաստանի և հայ հոգիներուն վրա, հայոց գոյության և կենսունակության աղբյուրը հորդահոս, քանի որ հրշված տեսիլքին մեջ «Աղբիւր բղխեցաւ յորդարուղխ, եւ հոսեցաւ ծաւալեցաւ առ հասարակ ամբողջ դաշտի՝ աչք կտրելու չափ: Եւ եղաւ լեցուն եւ կապուտագոյն ծով, եւ դաշտերն առ հասարակ երեւցան երկնագոյն»[3]:

Ասոր համար ալ հայ ժողովուրդին համար Էջմիածինը լուսաղբյուր է և լուսամայր, ընդմանությամբ ս. Աստվածածինին, որ ասնունն իսկ է կաթողիկե Մայր տաճարին:

Բնականաբար Էջմիածինի հետ կապված են ողջ աշխարհի հայոց սիրտերը: Անոր վրա կենտրոնի հայոց աչքերը Իսֆահանի Նոր Ջուղայեն մինչև աշխարհի չորս ծագերը:

«Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի»:

Այս է համոզումը հայուն, որուն հավատքին խարիսխն է Փրկիչը Հիսուս Քրիստոս:

«Ով որ կհավատա Որդվույն՝ կընդունի հավիտենական կյանքը» (Հովհ. Գ 36):

Եվ տուն մը՝ հայոց տունը՝ Էջմիածին, որ հաստատված է ճշմարիտ հավատքի վեմին վրա, չի սասանիր, չի կործանիր ամենևին: Ան կապրի հավիտյան, թե իսկ արհավիրքի, արյան, սուրի և հուրի հեղեղները թափին անոր վրա և հարվածեն զայն:

Էջմիածինը դարերով կուրծք տվավ ահավոր աղետներու, որ փոթորիկի պես խուժեցին Հայոց աշխարհին վրա: Էջմիածինը բազում անգամ վերածնավ արյունի և կրակի մկրտությամբ: Ան իր մոտ երկու հազար տարիներու կյանքին մեջ քանի՞-քանի՞ անգամ մինչև մրուրը քամեց չարչարանքի բաժակը, կրակի բովեն անցավ՝ բայց ողորմությամբն Աստուծո ձույլ ոսկի դուրս եկավ. սուրբ Հոգիին մկրտության հետ հուրի և արյունի մկրտությամբ ալ սրբացավ, արդարացավ, արմավենիի պես ծաղկեցավ, կաղնիի պես արմատացավ, ճյուղավորվեցավ:

* * *

Էջմիածինը կանգ ու կծաղկի հավետ, քանի հաստատված է և հավատարիմ կմնա մեր լույս հավատքի վեմին, քանի կքալե Ավետարանի ճամբեն, քանի աչքի լույսի պես կպահի, կսլանդարեն հայոց լուսավորիչներու ավանդները ազգային կրոնական, որոնք ծնունդ և սնունդ կառնեն փրկության Ավետարանեն, հայրենի հողեն, հայ հանճարի ցոլքեն, հայոց եկեղեցվո և հայ ժողովուրդի պատմությենեն:

Էջմիածինը տեսիլք լուսեղեն, Էջմիածինը տաճար Աստուծո և տուն աղոթքի, Էջմիածինը աթոռ քահանայության, Էջմիածինը «սիւնն հրեղէն՝ կաթողիկէ եկեղեցի է, որ ժողովէ զամենայն ժողովս ի միաբանութիւն հաւատոց, ի ներքոյ թեւոցն իւրոց»[4]:

Ահա Էջմիածինը: Ան կանգուն կմնա և անսասան մեր լույս հավատքի վեմին վրա, որ փրկիչն է աշխարհի, նույն ինքն Հիսուս Քրիստոս՝ Աստուծո Միածինը իջած Մայր Հայաստանի սիրտին մեջ, հայ հոգիին խորը... Ասոր համար է, որ դրունք դժոխոց անգամ չեն կրնար հաղթահարել զայն:

—«Իջին անձրեւք եւ խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բաղխեցին զտունն, եւ ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր» (Մտթ. Է 28):

* * *

Աղոթենք և ջանանք, որպեսզի Էջմիածինը միշտ լինի և՛ մարմին, և՛ տեսիլք, ինչպես որ է իր սկիզբն ու հորինվածքը:

Հիմակ ալ ատենն է, որ ամբողջ ազգով միասին համախմբվինք Էջմիածնի շուրջը, սիրենք և գործենք, շինենք և շենցնենք մեր ս. Էջմիածինը մեսիական, որպեսզի նա այսուհետև ալ, որպես տուն աղոթքի և տաճար Աստուծո, որպես կաթողիկե Մայր Աթոռ Հայաստանյայց՝ շարունակե բաշխել ս. Հոգիին անսպառ շնորհները՝ լինելով իսկական ծնող, դաստիարակ և կատարելագործիչ բոլոր Հայաստանյայց եկեղեցիներուն, զորս իրավամբ և գործնապես կանձնավորե իր կաթողիկեովն ու կաթողիկոսով Ամենայն Հայոց:

«Էջ Միածինն ի Հօրէ...
Եւ լոյս փառաց ընդ նըմա...
Եկայք շինեսցուք սուրբ ըզխորանըն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս
Ի Հայաստան աշխարհի»:

[3] Նույնը:

[4] Ագաթանգեղոս, անդ:

[5] Շարական:

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԿԱԹՈՂԻԿԵԻ Ս. ԽԱՉԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՕԾՈՒՄԸ

Մայիսյան գեղեցիկ առավոտ։ Հանդիպակաց ձորերի կանաչը այնքան հմայիչ և շոյող է, և Հրազդանը այնքան մեղմ է հոսում, որ մի պահ փախչելով քաղաքային աղմուկից, ուզում ես ձուլվել և անէանալ բնության հրաշալի աստվածային գրկում։

Վաղ առավոտից հանդիսավորությամբ հնչում են Երևանի առաջնորդանիստ ս. Սարգիս եկեղեցու զանգերը. այսօր մայիսի 20-ն է։ Եվ կարծեք այն պատմական պիտի դառնա գոնե մեր ներեկեղեցական կյանքի առումով։ Այսօր պիտի օծվի և սրբագործվի Մայր եկեղեցու կաթողիկեի նորահաստատ խաչը. ի դեպ, այն պատրաստված է մեկ կտոր բրոնզից (200 կգ), Հայաստանի գործարաններից մեկում հայ վարպետների ձեռքերով։ Նախագծի հեղինակն է հանգուցյալ հարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը՝ գործակցությամբ Մայր Աթոռի գլխավոր հարտարապետ Ա. Գալիկյանի։ Խաչն արդեն տեղադրված է նորաշեն գմբեթի վրա և տեղվույն վրա էլ պիտի կատարվի օծումը։

Առավոտվա ժամը 11-ն է։ Եկեղեցական թափորը առաջանում է դեպի վեր և նվաճում բարձունքը ու հասնում «Տենչալույն ամենեցուն»։ Վերընթաց թափորը գլխավորում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոս Տեր-Ստեփանյանը։ Հատուկ սկուտեղով թափորի առջևից տանում են ս. Մյուռոնը և ս. Խաչը ու օծման այլ պարագաներ։ Շուրջառազգեստ բահանա հայրերը ուղեկցում են սրբազանին։ Հանդիսությանը ներկա են հարտարապետ Արծրուն Գալիկյանը, կառուցող-ինժեներ Միքայել Հովհաննիսյանը, շինարար-վարպետ Նիկողայոս Խաչատրյանը, բանվորներ, թեմական և եկեղեցական խորհուրդների հարգո անդամներ՝ գլխավորությամբ Մուշեղ Սերոբյանի, թեմի աշխարհիկ աշխատակիցներ և հյուրեր։

Եվ ահա թափորը բոլորվում է տերունական խաչի շուրջը։ Շրջակայքից հազարավոր աչքեր վեր են նայում։ «Աչք ամենեցուն ի քեզ յուսան»։ Սկսվում է օծման արարողությունը։

Սրբազանը նախ ջրով և գինիով լվանում է խաչը։ Այն իսկապես հոյակապ է և գեղեցիկ։ Արևի կենսատու ճառագայթների տակ այն շողում է, հմայում և հավատ ներշնչում հավատավոր սրտերին։

Կարդացվում են ս. Գրական ընթերցվածքները և ապա ս. Ավետարանը։ Մի փոքր հետո սրբազանը ձեռքը վերցրած սուրբ մեռոնը, կարդում է աղոթքը։ «Եւ արդ մեք ծառայքս քո և հաւատացեալքս ի քեզ, արարաք զխաչս զայս, ոչ զնիւթս սորա պաշտելով, և ոչ զաստուածս ձեռագործս անուանելով, այլ արարաք զսա նշան սուրբ խաչի քո, յորոյ վերա տարածեցեր զքազուկս քո՝ Միածին Որդի Տէրդ մեր Յիսուս Քրիստոս։ Ուրեմն ընկալ զսա ի ձեռաց մերոց և օրհնեա՛ և սրբեա՛ զսա լինել արժանի և կոչիլ աստուածային նշան...»։

«Ապա արքեպիսկոպոսն տեառնագրէ սուրբ Միւռոնաւն նախ զԱԿՆ խաչին ապա զթագն և ապա աջ և ահեակ Թևսն և զբունն...

Օրհնեսցի, օծցի և սրբեսցի ս. Խաչիս և ս. Միւռոնաս և աւուրս շնորհիւ...»։

Սրբազան մյուռոնի կաթիլները ոսկեփայլ շողում են նորահաստատ խաչի վրա։ Հեռու հորիզոնի վրա զույգ Մասիսներն են հսկում անքթիթ։ Նրանք մեծ վկաներն են մեր երեքհազարամյա մշակույթի, պայքարի և վերածնման։ Այս սքանչելի պահին նորից վկա են նրանք և լուռ ունկնդիր։ Ծարունակվում են սրբազան աղոթքներն ու ընթերցվածքները։ Եվ ի՞նչ հոյակապ բնորոշումներ կան Մայր Մաշտոցի մեջ սուրբ Խաչի համար։ Աղոթքի բառերը սքանչացնում են մեզ և ոգեպնդում։

«Եւ արդ արա զսա քերդ ամրութեան և աշտարակ հզօր, զի հովանացեալք ընդ սորին զօրութեամբ ամրակուռ զինուս այսօրիկ աներկիւղ լիցուք յայս կեանս...»։ Եվ մտածում ես. մի՞թե մեր դարավոր վանքերն ու

սրբարանները չեղա՞ն այն հզոր բերդերն ու ամրոցները, որ պաշտպանեցին ու պահեցին մեր հոգևոր մշակույթն ու արվեստը: Եվ մանավանդ անհատաբար պահեցին մեր քրիստոնեական հոգու ամրողջականությունն ու մաքրությունը:

Բազան առաջնորդ հայրը օրհնում է բոլորին, հուսադրում և մաղթում, որ մոտ ապագայում Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն II Սրբազնագույն կաթողիկոսի հայրական Աջով կօծվի վերակառուցված սուրբ տաճարը—սրբույն Սարգսի զորավարին՝ ի

Մի պահ Երևանի ս. Սարգիս եկեղեցու նորակառույց կաթողիկեի ս. Խաչի օրհնության արարողությունից

«Խաչի քո Քրիստոս երկիր պագանեմք» շարականի քաղցրահնչյուն ելևէջները օդն են թնդացնում և թունդ հանում հավատացյալների սրտերը, բարձրաթռիչ կաթողիկեին (31 մ բարձր) զուգընթաց թևածում են ճերմակաթույր աղավնիներ: Մթնոլորտն ամբողջությամբ խնդությամբ է լցված և անպատմելի ուրախությամբ:

Սրբազան արարողությունները վերջացած են: Թափորը հանդարտիկ ցած է իջնում: Ներքևում ցնծության աղաղակներ են: Սրբ-

մխիթարություն և հուրախություն հավատացյալ հայության:

Հավատացյալները դեռ երկար ժամանակ օրվա սքանչելի տպավորության տակ են ու չեն ուզում հեռանալ: Նորաշեն խաչը հիմա երևում է քաղաքամայր Երևանի բոլոր ծայրերից և ամենից առաջ այն երևում է մեր հոգու միջից, «Մեք ի յայն փայտն եմք լուսացեալ, յոր Տեր Յիսուս բևեռեցաւ...»:

ՌՈՒԲԵՆ ՔՀՆ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մայր Աթոռս ուրախությունն ունի ծանուցելու, որ լույս է ընծայել հայ եկեղեցական արվեստին նվիրված իր երկրորդ հրատարակությունը՝ «Հայկական խաչքարեր» ալբոմը, որը պարունակում է հարյուր գունավոր և հարյուր տասնհինգ սև-սպիտակ լուսանկարներ արդի Հայաստանի հողամասի վրա գտնվող խաչքարերի ընտիր նմուշների, ինչպես և մի քանի խաչքարերի լուսանկարներ Արևմտյան Հայաստանի շրջաններից:

Ալբոմի տեքստի հեղինակն է հայրենի ծանոթ արվեստաբան Լևոն Ազարանը: Տեքստը տպագրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով: Սույն գործի մակետը և գեղարվեստական խմբագրումը կատարել է Հայաստանի ժողովրդական նկարիչ և Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գրիգոր Խանջյանը, իսկ տեքստի խմբագրումը՝ ճարտարապետ Վարազդատ Հարությունյանը՝ նախագահը Հայաստանի ճարտարապետների միության: Ալբոմի բոլոր լուսանկարները պատրաստել է բեյրութաբնակ արվեստագետ-լուսանկարիչ Մանուկ Ալեմյանը:

Մայր Աթոռիս պատվերով «Հայկական խաչքարեր» ալբոմը տպագրել է «Էրեբունի» հրատարակչությունը ի Բեյրութ, գեղարվեստական և տեխնիկական բարձր մակարդակով:

Սույն ալբոմի հրատարակության գործին նյութապես օժանդակել է նաև «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությունը ի Լիսաբոն, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Մայր Աթոռս հայտնում է նաև իր ջերմագին գնահատանքը վերոհիշյալ հայ արվեստագետներին և «Էրեբունի» հրատարակչությանը:

«Հայկական եկեղեցիներ»-ի և «Հայկական խաչքարեր»-ի հրատարակումից հետո Մայր Աթոռս ծրագրել է լույս ընծայել երրորդ մի ալբոմ ևս՝ նվիրված սուրբ Էջմիածնում պահվող հայ եկեղեցական արվեստի տարբեր տեսակի գործերին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒ

12-ը հունիսի 1974 թ.,
Ս. Էջմիածին

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Հունիսի 2-ին, կիրակի.—Հոգեգալուստ (Պենտեկոստէ, յիսներորդ օր ի Զատկէն).

Այսօր, օրվա հանդիսավոր տոնի առիթով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հայրապետական ս. պատարագ է մատուցում Երևանի ս. Սարգիս առաջնորդական եկեղեցում:

Ժամը 11-ին Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով հասնում է Երևանի Մայր եկեղեցի, ուր Նրան դիմավորում և ողջունում է Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանը՝ շրջապատված քահանա հայրերով և թեմական խորհրդի անդամներով:

Ս. պատարագի ընթացքում, «Հայր մեր»-ից առաջ, օրվա խորհրդի առթիվ, հոգեշունչ քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը՝ վեր հանելով Հոգեգալստյան տոնի նշանակությունը քրիստոնյա եկեղեցու կյանքում և այդ տոնի ուսուցողականը՝ հայ ժողովրդի համար:

Ս. պատարագի ավարտին, ի պատիվ Նորին Ս. Օծության, Երևանի առաջնորդարանում կատարվում է հյուրասիրություն:

* * *

Նույն օրը Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

* * *

Հունիսի 8-ին, շաբաթ.—Այսօր հոգևոր ճեմարանում ավարտվում են 1973—1974 ուսումնական տարվա ամավերջի քննությունները:

* * *

Հունիսի 9-ին, կիրակի.—Ա կիրակի զկնի Հոգեգալստեան: Սկիզբն Յարութեան կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը:

«Հայր մեր»-ից առաջ, Հոգեգալստյան տոնի կապակցությամբ, իմաստալից քարոզ է խոսում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Վերջում Նորին Սրբությունը ողջունում է ներկայությունը Մայր տաճարում ստամբուլահայ, երուսաղեմահայ և ամերիկահայ ուխտավորների ու օրհնում նրանց պանդուխտ եղբայրներին:

* * *

Հունիսի 10-ին, երկուշաբթի.—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց.

Այսօր ս. Հռիփսիմե տաճարում պատարագ է մատուցում ս. Հռիփսիմե վանքի վանահայր տ. Եղիշե քհն. Բաղրամյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Հռիփսիմե կույսի կյանքի և նահատակության հոգևոր նշանակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ

Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի սաները:

* * *

Հունիսի 11-ին, երեքշաբթի.—Սրբոց կուսանացն Գայիանեանց.

Այսօր ս. Գայանե տաճարում պատարագ է մատուցում ս. Գայանե վանքի վանահայր տ. Գուրգեն քհն. Աշուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Գայանե կույսի կյանքի և նահատակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Մայր Աթոռի միաբանությունը՝ գլխավորությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի սաները:

* * *

Հունիսի 13-ին, հինգշաբթի.—Տօն սրբոյն Յովհաննու Կարապետին եւ Աթանագինեայ եպիսկոպոսին.

Այսօր ս. Շողակաթ տաճարում պատարագ է մատուցում ս. Շողակաթ վանքի վանահայր տ. Միքայել քհն. Թեմուրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում է ս. Հռիփսիմյանց կույսերի նահատակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Մայր Աթոռի միաբանությունը:

Ս. պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի սաները:

* * *

Հունիսի 15-ին, շաբաթ.—Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ելն ի վիրապէն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը:

* * *

Հունիսի 16-ին, կիրակի.—Բ կիրակի զկնի Հոգեգալստեան: Տօն կաթուղիկէ ս. Էջմիածնի.

Օրվա հանդիսավոր տոնի առիթով Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Ժամը 11-ին, եկեղեցական մեծաշուք թափորով, Նորին Սրբությունը առաջնորդվում է Մայր տաճար:

Սկսվում է ս. պատարագը՝ ներկայությամբ ուխտավորների խուռներամ բազմության:

«Հայր մեր»-ից առաջ ս. Էջմիածնի դերի և նշանակության մասին բովանդակալից քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, մեծաշուք հանդիսադրությամբ, կատարվում է Հայրապետական մաղթանք:

* * *

Հունիսի 23-ին, կիրակի.—Գ կիրակի զկնի Հոգեգալստեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը:

* * *

Հունիսի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր հյուրաբար Մայր Աթոռ է ժամանում ռուս ուղղափառ եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Ս. Բուևսկին՝ իր տիկնոջ հետ:

* * *

Հունիսի 27-ին, հինգշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում իտալահայ համայնքի հոգևոր հովիվ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյանը և Միլանի հայ եկեղեցու վարչության ատենապետ դոկտ. Տիգրան Ալեքսանյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ:



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 14-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում, բարձր նախագահությամբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի, տեղի է ունենում 1973—1974 ուսումնական տարվա ամավերջի հանդիսությունը, որին ներկա են լինում Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, Մայր Աթոռի միաբանությունը, պաշտոնեությունը, ճեմարանի դասախոսական կազմը և այլ հրավիրյալներ:

Հանդիսությունը սկսվում է Տերունական աղոթքով:

Ներկաները հոտնկայս լսում են Հայկական ՍՍՀ պետական հիմնը:

Հոգևոր ճեմարանի սաները երգում են ճեմարանի քայլերգը:

Այնուհետև ներկաները հոտնկայս, լռությամբ հարգում են հիշատակը կյանքից առհավետ բաժանված հոգևոր ճեմարանի ավագ դասախոս, հանգուցյալ Գրիգոր Գյուլյանի:

Հոգևոր ճեմարանի ավագ վերակացու Սարգիս սրկ. Սարգսյանը բաց է անում հանդեսը հետևյալ խոսքով.

«Վեհափառ Տեր,

Գերաշնորհ, հոգեշնորհ և արժանապատիվ հայրեր,

Սիրելի ներկաներ,

Նորից հավաքվել ենք հոգևոր ճեմարանի այս լուսավոր հարկի տակ՝ ի մի բերելու 1973—1974 ուսումնական տարեշրջանի արդյունքները, որոնք ձեռք են բերվել ուսանողության կողմից՝ շնորհիվ իրենց ջանասիրության և համառ աշխատանքի:

Ձեռք բերված արդյունքներն արգասիքն են հանդիսանում Վեհափառ Հայրապետի հովանավորության, հոգևոր ճեմարանի տեսչության և դասախոսական կազմի կողմից ի գործ դրված այն անդուլ ջանքերի, որոնք Ավետարանի օրինակով և բացատրությամբ սերմի նման ընկնելով ուսանողների մտքի ու հոգու մեջ, ծլել, ծաղկել ու բերքի են վերածվել:

Քիչ հետո տեսուչ հայր սուրբն իր զեկույցի մեջ հանգամանորեն պիտի անդրադառնա այն ամենին, ինչ կատարվել է հոգևոր ճեմարանի կյանքում անցնող տարեշրջանին:

Այս հակիրճ խոսքից հետո թույլ տվեք, Վեհափառ Տեր, ամավերջի հանդեսը հայտարարել բացված և անցնել հայտագրի գործադրությանը»:

Այնուհետև հոգևոր ճեմարանի երգչախումբը կատարում է «Որք զարդարեցին» և «Աշակերտք Քրիստոսի» շարականները:

Ամավերջի հանդիսության առաջին մասի ընթացքում (գեղարվեստական բաժին) Գ լսարանի սան Սարգիս Մանուկյանն արտասանում է Դ. Վարուժանի «Հայր, օրհնե», Բ լսարանի սան Հակոբ Գալընճյանը՝ Վ. Թեքեյանի «Բարձրացում», և Բ դասարանի

սան Սարգիս Կարապետյանը՝ Ավ. Իսահակյանի «Հայաստանին» բանաստեղծությունները:

Գ. լսարանի սան Ավետիս սրկ. Արթինյանը անգլերեն լեզվով արտասանում է Ռոբերտ Բրոնմի քերթվածներից մեկը, իսկ Ա. դասարանի սան Գագիկ Գարգալաջյանը՝ ռուսերեն լեզվով Ա. Պուշկինի «Զմեռվա ճանապարհը» քերթվածը:

Հոգևոր ճեմարանի սաները երգում են ժողովրդական մի քանի խմբերգեր:

Այնուհետև Գ. լսարանի սան Գրիգոր սրկ. Զմրուխտյանը դաշնամուրի վրա կատարում է Ալ. Հարությունյանի «Հայկական պար»-ը, իսկ Գ. դասարանի սան Խաչիկ Մարտիրոսյանը՝ Ա. Խաչատրյանի «Պոեմ» ստեղծագործությունը:

Հանդիսության երկրորդ բաժնում, հանուն շրջանավարտների, Գրիգոր սրկ. Զմրուխտյանը երախտագիտության և շնորհակալության հետևյալ հրաժեշտի ուղերձն է կարդում՝ ուղղված Վեհափառ Հայրապետին, հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին.

«Վեհափառ Տեր,

Դերաշնորհ սրբազան հայրեր, հոգեշնորհ հայ սուրբեր, արժանապատիվ քահանա հայրեր,

Հարգելի դասախոսներ, սիրելի ուսանողեղբայրներ և հարգարժան ներկաներ,

Մեզ համար նշանակալից է այս օրը: Մենք հրաժեշտ ենք տալու մեր սիրելի հոգևոր ճեմարանին, մեր դասախոսներին և ուսանող եղբայրներին: Մեր հոգիները բերկրանքի մեջ են, բայց և, միևնույն ժամանակ, խիստ հուզված: Ուրախ ենք, որովհետև բարեհաջող ավարտեցինք հոգևոր ճեմարանի վեցամյա ուսումնական ծրագիրը և այսուհետև սկսելու ենք ծառայել մեր Մայր եկեղեցուն, որ տարիներ ամբողջ գուրգուրել, սնել ու դաստիարակել է մեզ հարազատ մոր նման: Բայց և հուզված ենք, որովհետև բաժանվելու ենք մեր շատ սիրելի ճեմարանից, դասախոսներից և ուսանողներից, որոնց մենք հոգով ու սրտով կապված ենք եղել միշտ:

Այս առթիվ անկեղծ սրտով, որդիական անխառն զգացմունքներով մեր երախտագիտական խոսքն ունենք հարտնելու մեր սիրելի դասախոսներին՝ գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի:

Սիրելի և անմոռանալի դասախոսներ, մենք մեր ունեցած ամեն լավի համար պարտական ենք ձեզ: Մեզնից ամեն մեկը, երբ առաջին անգամ լինելով ոտք դրեց այս սուրբ հաստատության շեմքից ներս, դուք հայրաբար ընդունեցիք նրան և առաջին իսկ օրից չզլացաք բաշխել ձեր մտքի լույսը, ձեր սրտի ջերմությունը, նրան մի օր մեր եկեղեցուն ու ազգին պիտանի, օգտակար անձնավորություն դարձնելու ազնիվ ակնկալությամբ: Մեր հոգու ու մտքի խուսան անդաստանները ձեր բազում շնորհների, ձեր գիտության արորներով ակոսեցիք ու մշակեցիք, այնտեղ սերմանեցիք բարի սերմեր, որոնք պարարտ հող գտնելով արմատ գցեցին, աճեցին, ուռճացան և բարձրացան իբրև ատոք հասկեր: Հետագա մեր ամբողջ կյանքն ու գործունեությունը իմաստավոր դարձնելու համար դուք մեզ ներշնչեցիք այաշտամունքը վսեմագույն իդեալների, ինչպիսիք են՝ հայրենիքը, եկեղեցին, ժողովուրդը: Եվ մենք մեր ամբողջ սրտով կապվեցինք մեր մայր հայրենիքին, մեր առաքելական սուրբ եկեղեցուն և մեր անմահ ստեղծագործ ժողովրդին: Դուք միշտ խրախուսեցիք մեր ազնիվ ձգտումներն ու ջանքերը, թելադրեցիք մեզ՝ վստահություն ունենալ մեր սեփական ուժերի նկատմամբ և մեր կյանքի ու գործունեության ասպարեզում բնավ չհուսահատվել, այլ, ընդհակառակը, արի կամքով դիմագրավել ամեն վտանգություն ու դժվարություն և դրանց հաղթահարմա՛ն մեջ գտնել կյանքի իմաստը:

Մենք շատ ուրախ ենք, որ իբրև գիտակից պատանիներ կազմավորվեցինք մայր հայրենիքում, քրիստոսահիմն Էջմիածնի պատմական կամարների և մեր սիրելի Վեհափառ Հայրապետի հայրական հոգատարության ներքո: Մենք, իբրև ապագա հայ հոգևորականներ, անշահախնդիր նվիրումով ծառայելու ենք այս սուրբ հաստատությանը՝ հանուն նրա փառքի, պայծառության ու ծաղկման:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, իմ դասընկեր եղբայրների անունից մի անգամ ևս հայտնել Ձեզ մեր խորին երախտագիտության զգացմունքները մեր հանդեպ Ձեր տածած խնամքի ու հոգատարության համար և համբուրել Ձեր մյուռոնաբույր սուրբ Աջը՝ ուխտելով միշտ հավատարիմ մնալ հայ ազգին, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնին և հավերժական մեր հայրենիքին»:

Ապա հոգևոր ճեմարանի 1973—1974 ուսումնական տարվա ամավերջի հետևյալ զեկուցագրի ընթերցումով հանդես է գալիս հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը.

«Վեհափառ Տեր և

Սիրելի հանդիսականներ,

Այսօր հավաքված ենք այստեղ 1973—1974 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի հաշվետվակը հաստատելու: Այն հանդիսավոր պահն է, երբ իբրև տնտես այս

հոգևոր հաստատության պարտավոր ենք մեր տնտեսության համարը ներկայացնել խղճմտությամբ ազգիս Վեհափառ Հայրապետին:

Ահա արդեն երկու տարիներ սահած են այն օրեն, երբ Վեհափառ Հայրապետին հրավերին սիրով ընդառաջելով Կալիֆորնիայեն ուղևորվեցա դեպի սուրբ Հայոց Հայաստան և Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ իմ ծառայությամբ մասնակցելու հոգևոր ճեմարանի արբազան գործին:

Ես մեկն եմ անոնցմե, որոնք կնային այս հոգևոր հաստատության վրա իբրև Հայաստանյայց եկեղեցվո ամենակարևոր կրոնական օջախը, ուրկե դուրս եկած են և պետք է շարունակեն գալ լուսամիտ հոգևորականներ, որոնք կոչված են ծառայելու թե՝ որպես խոնարհ սպասավորներ և թե՝ որպես եկեղեցական-ազգային առաջնորդներ հայրենիքի և աշխարհացրիվ մեր հայ ժողովուրդին: Այս տեսիլքով և հավատքով մենք, մեր սիրելի Վեհափառ Հայրապետեն ընկալած, բոլորս՝ հոգևորական և աշխարհական մշակներս, փարած ենք հոգևոր ճեմարանին եռանդով և նվիրումով, որովհետև կհավատանք, թե ան մեծ դեր ունի կատարելիք Հայց. եկեղեցվո և հայ ժողովուրդի համար: Հոգևոր ճեմարանը անբաժան մասն է ս. Էջմիածնի, իսկ ս. Էջմիածինը այն հոգևոր մայրն է, որ իր սուրբ և հարազատ մայրական կաթով կդիեցուցանե անխտիր կերպով իր բոլոր զավակները:

Նախանցյալ տարեշրջանին իբրև փոխտեսուչ պաշտոնավարելես ետք՝ Վեհափառ Հայրապետը նվաստիս նշանակեց տեսչական պատասխանատու պաշտոնին, 1973—1974 ուսումնական տարեշրջանի սկիզբը: Պարտիմ հայտնել, որ պաշտոնիս բերմամբ ես ավելի մոտեն ճանչցա Ամենայն Հայոց Հայրապետի՝ Վազգեն Ա-ի վեհ անձնավորությունը, Իր գորովալից սիրտը և հայրական ջերմ հոգածությունը առհասարակ բոլորին և մասնավորաբար հոգևոր ճեմարանիս նկատմամբ, որով Ան միշտ սիրով ընդառաջած է մեր խնդրանքներուն: Այս առիթով մեր երախտիքը և ջերմ շնորհակալությունը կհայտնենք մեր շատ սիրելի Վեհափառին:

Ուրախ ենք շեշտելու, որ ներկա տարեշրջանին սկիզբը ճեմարանը վերջապես օժտվեցավ արդիական հանրակացարանով, որ կգտնվի Ղազարապատ կոչված շենքին մեջ, երկրորդ հարկի վրա: Սա զգալիորեն նպաստեց ուսանողներու բարեկեցության, առողջապահական պայմաններուն և կարգապահության բարվոքման: Նույն հարկին տակ հաստատեցինք սերտարանը և հեռուստացույցի սենյակը: Ավելցնենք, որ ուրաշին հարկին վրա կգտնվին միաբանական և ուսանողական մարմարակերտ և հանակաց նոր ճաշարանները՝ խոհանոցային նոր սարքավորումներով: Ղազարապատի շենքին հիմնովին այս վերանորոգումը և ներկա մեր պահանջներուն պատշաճեցումը մենք նախ կպարտինք Վեհափառ Հայրապետին և ապա «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության, որու ծախսով կարելի եղավ իրագործել այս ծրագիրը: Պաշտոնական բացումը Ղազարապատի շենքին տեղի պիտի ունենա հառաջիկա սեպտեմբերին: Մեր սրտի խորքեն բխող ջերմ շնորհակալությունն կհայտնենք թե՝ Վեհափառ Հայրապետին և թե՝ «Կյուլպենկյան» հիմնարկության հոգևոր ճեմարանիս տրված այս մեծ նվերին համար:

Հոգևոր ճեմարանի սաները

1973—1974 ուսումնական տարեշրջանի սկիզբը հոգևոր ճեմարանի սաներու ընդհանուր քանակը 45 էր, որոնցմե 25-ը նախորդ տարվա ուսանողներ էին և 20-ը՝ նոր ընդունվածներ: 14 ուսանող բանակ մեկնելու և այլ պատճառներով հեռացած կամ հեռացված են տարվան ընթացքին և իբրև հետեվանք Ա և Բ լսարանները ցրված են: Ուստի այսօրվան պատկերը հետևյալն է. ունենք 31 ուսանողներ՝ բաշխված 4 դասարաններու վրա.

Գ լսարան՝ 9 ուսանող. 6-ը սարկավագ և 3-ը ուրարակիր

Գ դասարան՝ 5 ուսանող

Բ դասարան՝ 7 ուսանող

Ա դասարան՝ 10 ուսանող

Ընդամենը՝ 31 ուսանող

Ասոնցմե 17-ը օտարահպատակներ են՝ եկած Լիբանանեն, Սուրիայեն և Ռումինիայեն, իսկ մնացյալ 14-ը՝ Հայաստանի զանազան շրջաններեն:

Ուրախ ենք հայտնելու, որ Գ լսարանեն 8 հոգիներ այսօր շրջանավարտ կելլան՝ կազմելով հունձքի բարձր տոկոս մը նախորդ տարիներու արդյունքին հետ համեմատած:

Դասախոսական կազմ

Հոգևոր ճեմարանիս դասախոսական կազմը կգլխավորե Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոսը:

Այստեղ սրտի ցավով պիտի հիշեմ շուրջ 40 օրեր առաջ մեզմե անակնկալորեն առհավետ բաժանված հայ ժողովուրդի պատմության սիրելի դասախոս պրն. Գրիգոր Գյուլլանին: Աստված հոգին լուսավորե:

Հոգևոր ճեմարանիս ներկայի դասախոսական կազմը հետևյալն է.

Վեհափառ Հայրապետ, Արիս ծ. վրդ.

Շիրվանյան, Ալան վրդ. Բալիոզյան, Հովհաննես ավագ քհն. Մարությունի, Սարգիս սրկ. Սարգսյան, պրն. Արամ Սահակյան, պրն. Արթուն Հատիտյան, պրն. Պարգև Շահրազյան, պրն. Սամվել Անթոնյան, պրն. Սարգիս Իշեճյան, պրն. Կամսար Ավետիսյան, պրն. Երվանդ Մելքոնյան, պրն. Խաչատուր Ներսիսյան, պրն. Բարսեղ Թաշճյան, պրն. Խորեն Մելխանեջյան, պրն. Հայկ Ֆրունջյան, պրն. Հարություն Սիմոնյան և պրն. Թադևոս Ասմարյան:

Իսկ տեսչական կազմը հետևյալն է.

Տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյան՝ տեսուչ.

Պրն. Արամ Սահակյան՝ ուսմասվար.

Բարեշնորհ Սարգիս սրկ. Սարգսյան՝ ավագ վերակացու.

Բարեշնորհ Աղվան սրկ. Գասպարյան և պրն. Վարդեվառ Սիմոնյան՝ վերակացուներ:

Հաշվապահ-քարտուղարն է՝ պրն. Բարսեղ Թաշճյան, իսկ գրադարանավարն է՝ պրն. Տաճատ Վարդանյան:

Հիշյալ անձերը իրենց դասախոսական և բարոյա-դաստիարակչական պարտականությունները խղճմտորեն կատարած են՝ աշխատելով ուսանողների մեջ մշակել ազգային, հոգևոր և բարոյական ոգի, որուն համար իմ անկեղծ գնահատանքը և սրտագին շնորհակալությունը կհայտնեմ բոլորին: Առանց Վեհափառ Հայրապետին հայրական խորհուրդներուն, ուսմասվարին և վերակացուներուն անվերապահ գործակցության և դասախոսներուն աջակցության, ես պիտի չկարենայի ինձի վստահված պաշտոնը գլուխ հանել:

Այս առիթով մասնավոր գնահատանքի խոսքս կուզեի ուղղել հոգ. տ. Աղան վրդ. Բալիոզյանին, որ երեք տարիներե ի վեր մեր մեջ կգտնվի որպես դասախոս և սակայն այսօր իրեն ևս հրաժեշտ կուտանք՝ տրված ըլլալով, որ Երևանի համալսարանի իր դասընթացքը ավարտած ըլլալով մոտ օրեն պետք է վերադառնա Երուսաղեմ: Մենք բոլորս զինք այստեղ սիրեցինք իբրև անկեղծ և ճիրյալ հոգևորական. և ի նշան գնահատության՝ տեսչությանս կողմե կուզեինք իրեն ոսկյա գրիչ և մատիտ մը նվեր տալ: Սիրելի Աղան հայր սուրբ, ամեն անգամ որ ասոնք գործածեք, հիշեցեք Մայր Աթոռ ս. Էջմիածինը իր հոգևոր ճեմարանով: Տերը առաջնորդե Ձեր ապագա քայլերը:

Ուսումնական և ներքին կյանք

Հոգևոր ճեմարանը նպատակ ունի հոգևորականներ պատրաստել Հայց. եկեղեցվո սպասավորության համար, ըլլան կուսակրոն, ըլլան ամուսնացյալ: Ասոնի դասավանդվող կարվի հայկի և կրոնական բարձրագույն կրթություն:

Ունինք օրական 6 դաս և շաբաթը 6 օր դաս: Ուսանողներու առօրյան կկազմեն, դասերեն բացի, առավոտ և երեկո ժամերգությանց մասնակցիլը, մարզանք, ֆուտբոլի, փինկ-փոնկի, շախմատի և այլն խաղեր:

Բարոյա-դաստիարակչական բնույթ կրող հաճախակի հավաքույթներ տեղի ունեցած են Վեհափառ Հայրապետին հետ թե՛ սարկավագներուն հետ առանձնապես և թե՛ մնացյալ ուսանողներու հետ:

Ներկա տարեշրջանին հոգևոր ճեմարանի հարկին տակ տեղի ունեցած են հետևյալ զեկուցումները, հանդիսությունները և հանդիպումները.

1. «Աստվածաշնչի բնագրային քննադատություն»՝ դոկտ. Մեթիյուս Պլեք.
2. «Աստվածաշնչի թարգմանության գործը ներկայիս»՝ Ուիլյամ Ռեյպրրն.
3. Ընդունելություն ի պատիվ Քենթրբերիի արքեպիսկոպոսի արտաքին հարաբերությանց բաժնի վարիչ հայր Մայքլ Մուրի.
4. «ԺԹ դարու հայ թատրոնը»՝ պրն. Ռուբեն Զարյան.
5. Ամանորի տոնակատարություն.
6. Ասմունքի երեկո՝ «Սասունցի Դավիթ»՝ պրն. Ժան Էլոյան.
7. Վարդանանց տոնակատարություն, զեկուցող՝ Եզնիկ աբեղա Պետրոսյան.
8. «Արտային հիվանդություններ»՝ բժիշկ Զավեն Դոլաբջյան.
9. Ընդունելություն ի պատիվ Բուլղարիո Մաքսիմ Պատրիարքի:

Բացի վերոհիշյալներեն ունեցած ենք միօրյա պտույտներ դեպի Մեծամոր, Այղր լիճ, Սարդարապատ, Գյուսնի, Գեղարդ, Հավուց թառ, Խորվիրապ, երկօրյա ձյունաուահք Ծաղկաձորի մեջ: Իսկ հունիսի 17-ին ճեմարանի ուսանողությունն ու դասախոսական կազմը չորսօրյա պտույտի կմեկնին դեպի Լենինական, Հառիճա վանք, Մարմաշեն, Կիրովական և Սևան:

Տարվա ընթացքին մեր ուսանողներուն հաճախ տարած ենք թատրոն, օպերա, ֆիլհարմոնիա, կրկես, կինո և ֆուտբոլ, Էջմիածնի և Երևանի մեջ:

Այս տարի դաշնակուրե զատ ունեցանք կիթառի հատուկ դասեր պրն. Արմեն Վարդանյանի կողմե մեր «Զվարթնոց» նվագախումբի անդամներուն համար:

Իսկ այսօր, ժամը 16.30-ին, պիտի ունենանք մարզահանդես՝ մարզիչ պրն. Հարություն Սիմոնյանի ղեկավարությամբ: Ձեզ կհրավիրենք:

Այժմ կուզեմ հիշատակել այս տարվան հոգևոր ճեմարանի հունձքը կազմող 8 շր-

ջանավարտները, որոնք են. Քերոբ սրկ. Արթինյան, Գրիգոր սրկ. Զմրուխտյան, Հակոբ սրկ. Զմրուխտյան, Վաչե սրկ. Նալբանդյան, Հարություն սրկ. Սարգսյան, Գրիգոր սրկ. Քեշիշյան, Սարգիս Մանուկյան, Նշան Մանուկյան:

Ասոնք թեև այժմ կավարտեն իրենց դասընթացքը, սակայն իրենց դիպլոմային աշխատանքները պիտի ներկայացնեն հառաջիկա տարեշրջանին: Հոգևոր ճեմարանի տեսչությունը և դասախոսական կազմը լիահույս են, որ անոնք հաջողությամբ այդ ևս կհանձնեն ու հետագային ամբողջովին կընվիրվեն եկեղեցվո ծառայության՝ դառնալով մեկ-մեկ քաջ հովիվներ:

Սիրելի շրջանավարտ սաներ, աճա դուք արդեն իրագործեցիք ձեր կարևոր մեկ երազը՝ ավարտելով հոգևոր ճեմարանը: Դուք այստեղ աճեցաք հոգվով, մտքով, մարմնով Վեհափառ Հայրապետին սրբազան շունչին և ձեր դասախոսներուն հովանիին ներքև: Անոնք ձեզի տվին սուրբ Մեսրոպի ոսկեղեն լեզուն, Վարդանի և Անդրանիկի հոգին, Քրիստոսի Ավետարանը և մեր նախնյաց հավատքը: Գացեք և այսուհետև ծառայեցեք ձեր եկեղեցիին և ժողովուրդին ի սփյուռս աշխարհի՝ սիրով և անկաշառ նվիրումով: Ձեզի հրաժեշտ կուտանք այս պահուն հոգևոր ճեմարանեն, սակայն ոչ Հայաստանյայց եկեղեցիեն, որ ձեզ կկանչե: Տերը թող օգնական ըլլա ձեզի և առաջնորդե ձեր քայլերը: Մեր սերն ու օրհնությունը կուտանք ձեզի:

Վերջացնելով իմ խոսքը, Վեհափառ Տեր, կրկին անգամ կուզեի իմ, դասախոսական կազմին և ուսանողության կողմե ջերմ շնորհակալություն հայտնել Ձեզի՝ հոգևոր ճեմարանիս հանդեպ Ձեր ցույց տված հայրական հոգածության համար, ու թույլ տվեք ի դիմաց բոլորին համբուրել Ձեր ս. Աջը՝ մաղթելով Ձեզի քաջառողջություն և երկար տարիներ:

Այժմ թույլ տվեք Ձերդ Սրբության ներկայացնել հոգևոր ճեմարանիս հառաջադեմ ուսանողներու անունները՝ Ձեզմե ստանալու իրենց նվեր տրվող գիրքերը.

Գ դասարան

9.20 միջինով առաջին կհանդիսանա Հակոբ Գրլբնճյան.

8.88 միջինով երկրորդ կհանդիսանա Սարգիս Մանուկյան:

Գ դասարան

8.77 միջինով առաջին կհանդիսանա Խաչիկ Մարտիրոսյան.

7.50 միջինով երկրորդ կհանդիսանա Կիվոն Բալդասարյան:

Բ դասարան

8.80 միջինով առաջին կհանդիսանա Բյուզանդ Գալայճյան.

8.60 միջինով երկրորդ կհանդիսանա Սորին Մանդալյան:

Ա դասարան

8.58 միջինով առաջին կհանդիսանա Գեվորգ Արամյան.

8.27 միջինով երկրորդ կհանդիսանա Հրաչ Օղլուգյան:

Իսկ գերազանց վարքի համար ճեմարանի տեսչությունն կցանկանա պարգևատրել Հակոբ Գրլբնճյանին, Սորին Մանդալյանին և Գրիգոր Հաճյանին:

Այժմ, Վեհափառ Տեր, կխնդրենք, որ Ձեր օրհնության խոսքը ըսեք մեր սաներին»:

Մրցանակի արժանացած ուսանողները մոտենում են պատվո սեղանին և աջահամբույրով Վեհափառ Հայրապետից ստանում իրենց նվերները:

Մրցանակաբաշխությունից հետո տեսուչ հայր սուրբը հրավիրում է Նորին Սրբությանը՝ ասելու Իր օրհնության խոսքը:

Վեհափառ Հայրապետը օրհնության և շնորհավորանքի խոսք է ասում հոգևոր ճեմարանի տեսչությանը, դասախոսական կազմին և ուսանողությանը, հայտնում Իր գնահատանքը՝ անցնող ուսումնական տարում ճեմարանի կատարած քարոզա-դաստիարակչական և կրթական աշխատանքի համար:

Ամավերջի սույն հանդիսությունն ավարտվում է Տերունական աղոթքով:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

Հայոց Հայրապետի 1973 թվականի հունվար 16 թվակիր կոնդակի հրահանգով, սփյուռքի մեր թեմերում շարունակվում են ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսությունները:

Այս առթիվ «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանը ենք ներկայացնում, ժամանակագրական կարգով, եգիպտահայ և ռումինահայ թեմերում կատարված հանդիսությունների համառոտ նկարագրությունները:

Ս. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԵԳԻՊՏԱՀԱՅ ԵՎ ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ԹԵՄԵՐՈՒՄ

Կահիրե, Հելիոպոլիս

1974 թվականի փետրվարի 17-ին, կիրակի օրը, Հելիոպոլսի «Հուսաբեր» ակումբի «Վ. և Ս. Գարագաշյան» հանդիսասրահում տեղի է ունենում ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հանդիսություն՝ հովանավորությամբ Եգիպտահայոց առաջնորդական տեղապահ տ. Ներսես ծ. վրդ. Բապուճյանի և նախագահությամբ «Հուսաբեր» մշակութային ընկերակցության նախագահ Ավետիս Զագճյանի:

Հանդիսությանը ներկա էին նաև տ. Նարեկ քհն. Ֆրընճյանը, գեր. հ. Պետրոս Թարմունին, Հելիոպոլսի հայ կաթողիկե համայնքի ժողովրդապետ գեր. հ. Հովհաննես Ահմարանյանը և բազմաթիվ հրավիրյալներ:

Հանդիսության առթիվ բացման խոսք է ասում Կայծ Կոկանյանը և ապա հրավիրում օրվա գլխավոր բանախոս, սիրված արվեստագետ-երաժշտագետ, մայեստրո Էդվարդ Հակոբյանին:

Հարգարժան բանախոսը բացառիկ հաջողությամբ ներկայացնում է Շնորհալուն «իբրև բազմատաղանդ անձնավորություն և հոգևորական՝ կենսագրական լայն ծանոթագրություններով, իբրև մեծ արվեստագետ-բանաստեղծ, երգաստեղծ-երաժիշտ, բազմահմուտ գիտնական, դավանաբանական վարդապետությունների պայծառամիտ տեսաբան, քաղաքական և հասարակական հեռատես գործիչ, օժտված սրտի և մտքի լայն հորիզոններով»:

Այնուհետև գործադրվում է գեղարվեստական փոքրիկ մի կոկիկ հայտագիր:

Շնորհալու երաժշտական ստեղծագործությունների փայլուն կատարմամբ հանդես եկան «Եգիպտահայ» երգչախումբը և առանձին շնորհալի մենակատարներ:

Երգչախմբի մենակատարներից տիկ. Մարգարիտ Հակոբյանը երգեց «Նոր ծաղիկ» Հարության տաղը և «Խաչի սրբասացութիւն»-ը, տիկ. Զապել Ոշտունին՝ «Երգ առ սուրբ Հոգին», պրն. Հարություն Լևոնյանը՝ «Գիշերապաշտաման երգ»-ը:

Երգչախմբին և մենակատարներին դաշնամուրի վրա ընկերակցում էր տիկ. Շամիրամ Դարմանյանը:

Հանդիսությունը փակվում է տեղապահ հոր «Պահպանիչ»-ով:

* * *

Ալեքսանդրիա

1974 թվականի փետրվարի 24-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11.30-ին, Ալեքսանդրիայի ազգային իշխանության որոշումով և նախաձեռնությամբ, «Կոմիտաս» սրահում կայացած հրապարակային հանդիսությամբ ոգեկոչվեց ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը:

Բեմի վրա, հանդիսության առթիվ, դրված էր, այս նպատակով հատկապես պատրաստված, ս. Ներսես Շնորհալու մեծադիր յուղաներկ նկարը:

Հանդիսությանը ներկա էին ազգային ներսփոխանները՝ թեմական ժողովի ատենապետ տիար Մարտիկ Զարպհանալյանի

գլխավորությամբ, ինչպես նաև բոլոր հասանելիների ներկայացուցիչներ:

Ալեքսանդրիայի ազգային իշխանության անունից հանդիսության բացման խոսքով հանդես է գալիս ազգային երեսփոխան Պարգև Մազլումյանը՝ շեշտելով, որ Շնորհալին «մեր ոգեղեն մեծագույն բարձունքներեն մին է և պաշտպանը մեր ազգային ինքնության»:

Օրվա գլխավոր քանախոսն էր Կահիրեից ժամանած ծանոթ երգահան, մայեստրո Էդվարդ Հակոբյանը, որը ներկայացնում է Շնորհալուն իբրև հայ եկեղեցու սրբազան արարողությունների բարեկարգիչ, մեր ազգային ավանդությունների և դիմագծի ջերմ պաշտպան ու եկեղեցական մեծ գործիչ:

Հանդիսության երկրորդ գլխավոր քանախոսն էր տ. Զավեն եպս. Չինչինյանը, որը «համապարփակ ելույթով տվեց ս. Ներսես Շնորհալիի կյանքի գլխավոր հանգրվանները՝ ժամանակակից դեպքերով, քաղաքական-եկեղեցական հակամարտ հոսանքներով»:

Հանդիսության ժամանակ գործադրվում է գեղարվեստական մի ճոխ հայտագիր:

Հանդիսությունն ավարտվում է ժամը 10.30-ին տ. Զավեն եպս. Չինչինյանի «Պահպանիչ»-ով:

«Այս հանդիսությամբ ալեքսանդրահայ գաղութը իր հարգանքի արժանավայել տուրքը մատուցեց ս. Ներսես Շնորհալի մեծագործ Հայրապետի հիշատակին»:

* * *

Կահիրե

1974 թվականի փետրվարի 28-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 21.30-ին, Հ. Ա. Հ. Կոկանյան սրահում տեղի է ունենում քանախոսություն ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակի առթիվ:

Բանախոսել է Հակոբ Համբիկյանը «Գեղեցիկի գաղափարը ս. Ներսես Շնորհալու կյանքում և գործում» թեմայով:

* * *

Կահիրե

1974 թվականի մարտի 10-ին, կիրակի օրը, երեկոյան ժամը 19-ին, Կահիրեի ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում, Կահիրեի ազգային իշխանության նախաձեռնությամբ, տեղի է ունենում ս. Ներսես Շնորհալի Հայրապետի մահվան 800-ամյակին նվիրված հանդիսություն, «հիշատակի ոգեկոչում և սրբազան համերգ»:

Հանդիսությանը ներկա են եղել եգիպտահայոց եկեղեցական դասը՝ գլխավորությամբ առաջնորդական տեղապահ տ. Ներսես Ծ. վրդ. Բապուճյանի, թեմական ժողովի անդամները՝ սուենսպետ Արթուր Պլեր, սուենսյանի գլխավորությամբ, բալարական ժողովի անդամները՝ սուենսպետ Հայկազուն Քյուրքճյանի գլխավորությամբ, վոխատենապետ Փոլ Քիլիտճյանը, երեսփոխաններ, ազգային մարմինների անդամներ, հայ ավետարանական համայնքի նախագահ Ավետիս Զաքրճյանը, մամուլի ներկայացուցիչներ և այլ հրավիրյալներ:

Եկեղեցու տիկնանց միության խնամակալության անդամուհիները հանդիսականներին էին բաժանում այս առթիվ պատրաստված ս. Ներսես Շնորհալու դիմանկարով կրծքանշաններ և խնամքով պատրաստված օրվա հայտագիրը: Ս. Խորանի վրա զետեղվել էր ճերմակ ծաղիկներով գեղեցիկ մի ծաղկակողով, կարմիր վարդերով ընդելուզված խաչով և «Ն. Շ.» սկզբնատառերով երանաշնորհ Հայրապետի:

Շնորհալի մեծ Հայրապետի կյանքի և գործունեության մասին բովանդակալից և գեղեցիկ զեկուցումով հանդես է գալիս առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ Ծ. վրդ. Բապուճյանը:

Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ից ընթերցումներ է կատարում տ. Նարեկ քհն. Գլըճճյանը:

Ապա «Եգիպտահայ» և «Շնորհալի» երգչախմբերը, ղեկավարությամբ մայեստրո Էդվարդ Հակոբյանի և երգեհոնային նվագակցությամբ տիկ. Շամիրամ Դարմանյանի, կատարեցին Շնորհալու ստեղծագործություններից ընտիր հատվածներ, այդ թվում՝ «Առաւօտ լուսոյ»-ն, «Յարևելից մինչ ի. մուտս»-ը, «Նայեաց սիրով»-ը, «Տարածեալ»-ը, «Ամէն, հայր երկնաւոր» և այլ երգեր ու շարականներ:

Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքը ընթերցում են Գալուստյան և Նուբարյան ազգային վարժարանների աշակերտները:

Հանդիսության խանդավառությունը ավելացնում են մենակատարներ Զապել Ոշտունին և Մարգարիտ Հակոբյանը իրենց մեներգերով, «Նոր ծաղիկ պայծառ» Հինանց տաղը: Զապել Ոշտունին մեներգում է նաև «Հոգի Աստուծոյ»-ն, իսկ Մարգարիտ Հակոբյանը՝ «Արծաթսիրութեամբն» շարականը և «Ով է որպէս» սրբասացությունը:

«Ողջոյն տուք միմեանց»-ի մեներգով հանդես եկավ Հարություն Լևոնյանը:

Բովանդակալից այս հանդիսությունը ավարտվում է հոտնկայս երգված «Հայրապետական մաղթանք»-ով, Տերունական աղոթքով և «Ուրախ լեր» շարականով:

Ս. Ներսես Շնորհալու հիշատակի «ոգեկոչումը իրապես հոգեկան խնջույքի վայելք մը պարգևեց բոլոր ներկաներուն ան-

խրտիր... Ներկաները ցրվեցան Շնորհալի մեծ Հայրապետին հոգվոյն խաղաղության աղոթքներով»:

* * *

Կահիրե

1974 թվականի մարտի 29-ին, երեկոյան, հայկական ընթերցասրահում երաժշտական բացառիկ երեկոյթով նշվում է ս. Ներսես Շնորհալի Հայրապետի մահվան 800-ամյակը:

Հանդիսությանը ներկա են տ. Զավեն եպս. Չինչինյանը, առաջնորդական տեղապահ տ. Ներսեհ ծ. վրդ. Բապումյանը, հայ կաթողիկե համայնքից Հովհաննես վրդ. Ահարանյանը, տ. Նարեկ քհն. Ֆրընջյանը, Կահիրեի թեմական ժողովի ատենապետ Արթո Պլըքտանյանը, ազգային երեսփոխաններ, մշակույթի և կրթական գործիչներ, բազմաթիվ այլ հրավիրյալներ և մի հոծ բազմություն:

Հանդիսության ժամանակ բացման խոսքով հանդես է գալիս հայկական ընթերցասրահի նախագահ Սարգիս Պալայանը:

«Ներսես Շնորհալին որպես ստեղծագործ երաժիշտ» թեմայով բովանդակալից և շահեկան զեկուցումով հանդես է գալիս մայեստրո Էդվարդ Հակոբյանը:

Բանախոսությունը հաճախ ընդմիջվում է Շնորհալուց բերված բացատրական երաժշտական օրինակներով:

Հանդիսության գեղարվեստական բաժնում հանդես են գալիս «Եգիպտահայ» երգչախումբը և նրա մենակատարները:

Հարություն Լևոնյանը մեներգում է «Ցիշեսցուք» և «Զարթիք» երգերը, Մարգարիտ Հակոբյանը՝ «Նոր ծաղիկ» տաղը և «Արծաթսիրութեամբ» շարականը:

«Եգիպտահայ» երգչախումբը կատարում է Շնորհալու երգերից և շարականներից մի գեղեցիկ փունջ՝ ղեկավարությամբ մայեստրո Էդվարդ Հակոբյանի և դաշնակահարությամբ տիկ. Շամիրամ Դարմանյանի:

Հանդիսության վերջում հնչում է «Հայրապետական մաղթանք»-ը:

«Այս փառաշուք և ոգեշունչ երեկոյթը, որ անցավ ներկաներու միահամուռ գնահատանքի խանդավառ ցույցերուն, վերջ գտավ սրահին նախագահին շնորհակալիքի անկաշառ խոսքերով և հոգեշնորհ տ. Ներսեհ ծ. վրդ. Բապումյանի «Պահպանիչ»-ով:

* * *

Բուխարեստ

Ամենայն Հայոց Հայրապետի հրահանգի համաձայն ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակին նվիրված հանդիսություններ կատարվել են նաև Բուխարեստում, հայոց թեմում, Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանի և տեղի թեմական պատվարժան խորհրդի նախաձեռնությամբ:

Այս առթիվ մարտի 24-ին, կիրակի օրը, Բուխարեստի հայոց ս. Հրեշտակապետաց եկեղեցում մատուցվել է հանդիսավոր ս. պատարագ, որին ներկա են եղել Ռումինիայի կրոնական գործերի մինիստրության և ռումին արևելագետների միության, մշակութային այլ կազմակերպությունների պաշտոնական ներկայացուցիչներ, ինչպես նաև հայ և ռումին հավատացյալների մի հոծ բազմություն:

Ս. պատարագի արարողությունից հետո առաջնորդ տ. Տիրայր եպիսկոպոսը իր բովանդակալից ելույթում ս. Ներսես Շնորհալուն ներկայացրել է որպես հայ եկեղեցու մեծագույն սրբերից ու հոգելից մատենագիր-երաժիշտներից մեկը, որը և ջերմորեն ցանկացել է իրականացած տեսնել Քրիստոսի ընդհանրական եկեղեցու միությունը բոլոր եկեղեցիների՝ ի Քրիստոս սիրո և եղբայրության գաղափարի լույսի տակ:

Այնուհետև եկեղեցու երգչախումբը, Կ. Հարությունյանի ղեկավարությամբ, կատարել է հաջողությամբ ս. Ներսես Շնորհալու շարականներից և երաժշտական ստեղծագործություններից ընտիր նմուշներ՝ մեծապես տպավորելով բոլոր ներկաներին: Համերգին մեներգներով մասնակցել են տիկ. Սմարանիա Տոսկանին և ռումին պետոպերայի մեներգիչ Էդվարդ Թումաճանյանը:

Առաջնորդարանը և թեմական խորհուրդը այս առթիվ պատրաստել էին Հայոց վաստակաշատ և սուրբ Հայրապետի կյանքն ու գործը ներկայացնող հուշաթերթիկ, ռումիներեն լեզվով, որոնք բաժանվեցին բոլոր ներկաներին:

Ս. Ներսես Շնորհալու հոբելյանի առիթով հայտնի նկարիչ Չիկ Դամադյանը պատրաստել և եկեղեցուն է նվիրել հոբելյար Հայոց Հայրապետի մեծադիր նկարը:

ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ ս. Էջմիածինը և վերածնված հայոց հայրենիքը միշտ երազական զգացումներով են լցնում աշխարհով մեկ ցրված հայերի սրտերը:

Ու միշտ սփյուռքահայությունը ուխտի է գալիս իր հայրենիքը, իր ամենանվիրական սրբավայրը՝ հայ հավատքի կենտրոն ս. Էջմիածին, հոգեպես լիցքավորվելու քրիստոնեական և հայկական զգացմունքներով:

Հունիսի 9-ին, կիրակի օրը, ուխտավորաբար Մայր Աթոռ այցելեցին մի քանի տասնյակ հավատավոր հայ հոգիներ Ստամբուլից: Նրանց հետ Մայր Աթոռ այցելեցին նաև այլ ուխտավորներ Երուսաղեմից և Հարավային Ամերիկայից:

Ուխտավորները նախ մտան Մայր տաճար և կատարեցին իրենց ուխտը քրիստոսաէջ ս. Էջմիածնի առջև:

Այնուհետև նրանց բարեհաճեց ընդունել և բարի գալուստ մաղթել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ու միաժամանակ ողջույնի խոսք ասաց՝ ուղղված Շնորհք պատրիարքին:

Ապա պոլսահայ ուխտավորների անունից Կարպիս Ուղուրլյանը կարդում է Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ ուղերձը.

«Վեհափառ Տեր,

Ուխտագնացությունը անդիմադրելի մեկ սլացքն է հոգվույն, որ դեպի սրբատեղի մը կսավառնի իր էության ակունքին վերադառնալու, ոգեկան բարձունքներու օդը շընչելու ու մեր կյանքին ավելի խոր իմաստ մը տալու հզոր տենչանքով:

Ուխտավորներ ենք մենք ալ ու եկեր ենք դեպի Աղբյուրը լույսին, այն լույսին, որուն մեկ ճառագայթը հազարամյակներե ի վեր կապրի յուրաքանչյուր հայու սրտին խորը ու զայն կմղե դեպի մարդկայնական գերազանց տեսլականի մը իրագործումը: Միածին Որդին նյութին ու եսին կապանքներուն մեջ տվայտող մարդկության բերած է հույսի և սիրո գերագույն սփոփանքը, իսկ ս. Էջմիածինը եղած է հայուն սեփական հրաշքը, այն քուրան, որուն մեջ հալած են իր ցավերը, տառապանքը և տկարությունները ու դարձած են հավատք, ույժ և խոյանք: Այդ լույսը իբր Լուսավորչի կանթեղ շողացեր է մեր հոգիներուն վերև, ամենեն խավար պահերուն մեջ անգամ ավետելով պայծառ ապագայի մը վարդագեղ արշալույսը: Ու մենք այսօր կապրինք անպատմելի երանությունը Լուսավորչի փառահեղ գահին առջև գտնվելու և ողջունելու Ձերդ Վեհափառությունը՝ իբր արժանընտիր հաջորդը այս նվիրական Աթոռին Մեծն Ներսեսի, Շնորհալիի, Խրիմյան Հայրիկի նման մեծանուն գահակալներուն:

Մենք կուգանք Իսթանպուլեն, քաղաքակրթության այն վաղեմի ոստաններն, ուր դարեր ամբողջ հայ մշակույթը ապրած, ուռճացած, Եվրոպայի հետ լայն հարաբերություն մշակած ու հետո տարածած է սփյուռքահայության մեջ: Այսօր ալ հանրապետական Թյուրքիո սահմաններուն մեջ կանգուն կըմնան մեր կրոնական, կրթական և բարեսիրական հաստատությունները, ու մենք կջանանք իբր լուսամիտ և գիտակից քաղաքացիներ առավելագույն չափով սատար հանդիսանալ մեր հայրենիքին բարօրության ու վերելքին, ինչպես Ձերդ Վեհափառությունն ալ Իր շինիչ պատգամներով կթելադրե միշտ սփյուռքի հայության:

Հոգևորական կյանքի այս վեհաշունչ կեդրոնին մեջ մենք կուգանք հայտնել մեր խոր

ու անայլայլ վարումը հանդեպ ս. Էջմիածնին ու բարոյական այն բարձր արժեքներուն, որոնց կոթողացումն է մեր փառապանծ Մայր եկեղեցին:

Սրտանց կմաղթենք, որ սիրո և եղբայրության այն սրտառուչ հրավերը, զոր Ձերդ Վեհափառությունը ամեն առթիվ կուղղե համայն աշխարհին, արձագանք գտնե բոլոր հոգիներուն մեջ, և մարդկությունը իր կոչումին վայել բարձրության վրա ապրի՝ խաղաղ ու երջանիկ:

Սիրո և հարգանքի ջերմ ու սրտաբուխ զգացումներով արևշատություն և հոգեկան անբավ գոհունակություն կմաղթենք Ձեր վեհ անձին ու որդիական ակնածանոք մատչիմք ի համբույր ս. Աջոյդ»:

Այնուհետև պոլսահայ երիտասարդության անունից Վեհափառ Հայրապետին ուղղված ուղերձ է կարդում Ռաֆֆի Մանգասարյանը.

«Վեհափառ Տեր,

Ձեր թույլտվությունը խնդրելով, պիտի ուզեի մի քանի խոսք ալ ես ըսել՝ իբր այս խումբի ամենաերիտասարդ մեկ անդամը: Երբ տարիներ առաջ տխուր մեկ պարագայի առթիվ Ձերդ Վեհափառությունը վայելելու առիթը ունեցայ խոթանպուլահայությունը, պատանի մը ալ կար Ձեզ այցելող հյուզարավորներու կողքին, որ հմայված պատկառելի Ձեր անձնավորությենեն, Ձեր մեջ տեսավ դարավոր անցյալը իր պապենական օջախին, և այս գաղափարը իր մեջ տարիներու ընթացքին աճելով, ուզեց տեսնել իր բուն ակը:

Ու այսօր ես բախտավորությունն ունիմ թարգման հանդիսանալու, խոթանպուլահայ երգչախումբերու անունով հայտնելու մեր որդիական փարումը՝ հանդեպ ս. Էջմիածնի և անոր արժանընտիր Գահակալի:

Մատչելով ի համբույր ս. Աջիդ»:

Խորապես զգացված Իրեն ուղղված ուղերձներից, Ամենայն Հայոց Հայրապետը օրհնում է ս. Էջմիածնի ուխտավորներին և համայն սփյուռքահայ հավատավոր հոգիներին:

Ծամը 11-ին Մայր տաճարում սկսվում է ս. պատարագը: Ուխտավորները խոր հուզումով և ջերմեռանդությամբ ներկա են լինում ս. պատարագի արարողությանը և ս. հաղորդություն ստանում:

Նրանք կատարում են իրենց ուխտը և թեթևացած ու զվարթ սրտերով մեկնում ս. Էջմիածնից՝ կրկին ուխտի գալու անհուն ցանկությամբ:

«ՀԱՅ-ՋՎԻՑԵՐԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԵԼԻ ՕՐ ՄԸ»

Մայիսի 5-ին Լոզանում, «Հ. Բ. Ը. միություն-զվիցերական իրավիճակ» կազմակերպության նախաձեռնությամբ և տեղի Հ. Բ. Ը. միության գրասենյակում, Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի նախագահությամբ, խանդավառ ու հանդիսավոր մթնոլորտում, «Հայերու բարեկամներու զվիցերական ընկերության» պատվին ճաշկերույթ է տրվում։

Ընդունելությանը մասնակցում են այս առթիվ Շվեյցարիայից, Փարիզից, Մյունխենից, Մոնակոյից և այլ հայկական շրջաններից ժամանած շուրջ 200 հրավիրյալներ, որոնց թվում նաև՝ 40 հոգի շվեյցարացի ծանոթ անձնավորություններ։

Ճաշկերույթի ընթացքում տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը հանդիսավորապես ընթերցում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ապրիլ 2 1974 թվակիր հմր. 769 հետևյալ կոնդակը՝ ուղղված «Հայերու բարեկամներու զվիցերական ընկերակցության», կոնդակ, որի ընթերցումն ունկնդրվում է բոլոր ներկաների կողմից երախտագիտությամբ և հոտնկայս.

«ՀԱՅԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ԶՈՒԻՑԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ
FEDERATION SUISSE DES AMIS DES ARMENIENS,
ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՆՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ի Ցիւրիխ

Աստուծոյ օգնականութեամբ, շուտով կը լրանայ ութսուն տարին ձեր ընկերակցութեան հիմնադրութեան, որ 1895 թուականէն ի վեր կը գործէ իբրեւ բարեկամ եւ բարերար հայերուն եւ պաշտպան հայ ժողովուրդի արդար դատին։

Ձեր մարդասիրական գործունէութիւնը ի նպաստ մեր ժողովուրդին, անմոռանալի եւ անբաժանելի մէկ էջը կը կազմէ մեր դարաշրջանի հայոց փոթոր-

կայի պատմութեան, էջ որ պայծառ մէկ վկայութիւնն է այն ճշմարիտ առաքելական ոգիին, որով ձեր ընկերակցութեան մեծահոգի հիմնադիրները եւ բոլոր ժամանակներու ղեկավարները տասնեակ տարիներ շարունակ, իրենց եղբայրական սէրը, հոգածութիւնը եւ պաշտպանութիւնը լիութեամբ բաշխեցին անցեալի մէջ այնքան տառապած ու անարդարուած հայ ժողովուրդի զաւակներուն:

Մեզի համար խոճի պարտք կը նկատենք, հայ քրիստոնէական հաւատքի կեդրոն Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն Մեր հայրապետական երախտագիտութեան խօսքը եւ օրհնութիւնը յղել ձեզի բոլորիդ, ընկերակցութեան ղեկավարներուդ եւ անդամներուդ, աղօթելով որ Տէրը քաղցրութեամբ ընդունի ձեր բարի գործերու վկայութիւնները և զձեզ ամէնքդ զօրացնէ սուրբ Հոգիով, որպէսզի նոյն նուիրումով շարունակէք ձեր աստուածահաճոյ գործը:

Այս առթիւ, խոր յուզումով կը յիշենք մանաւանդ անմոռանալի անունը ձեր ընկերակցութեան փաղուն ղեկավարներէն հանգուցեալ հայր Քրաֆթ Պոնսրի, որ գրեթէ իր կեանքի կարեւոր մէկ մասը նուիրեց հայոց վշտին, հայ որբերուն եւ հաւատաց հայ ազգի ու հայրենիքի վերածնունդին, որ պայծառ իրականութիւն մը է այսօր:

Թող Տէրը յաւերժական լոյսի մէջ պահէ բարի յիշատակը հայր Քրաֆթ Պոնսրի եւ հայերու բարեկամ բոլոր լուսաբնակ զուիցերացիներուն:

Թող Տէրը ձեզի բոլորիդ պարգեւէ քաջառողջութիւն եւ բարին գործելու նոր ներշնչումներ:

Թող Տէրը խաղաղութեան մէջ յաւէտ ծաղկեալ պահպանէ ձեր հայրենիքը՝ մարդասէր Զուիցերիան և միշտ անսասան ու անսնուազ՝ սրտառուչ բարեկամութիւնը զուիցերացի եւ հայ ժողովուրդներուն միջեւ:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ առաւելով ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 18):

ՎԱՉԳԷՆ Ա
ԵԱՅՐԱՊԱՏՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 2-ը ապրիլի
1974 փրկչական ամի,
եւ ի տուժարիս հայոց ՌՆԼԳ,
ի Մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 769»

Հայրապետական սոյն կոնդակի ֆրանսերեն թարգմանությունը ընթերցման պահին կատարում է Ժնեյցարիայի հայոց հոգևոր հովիվ տ. Դավիթ ծ. վրդ. Սահակյանը:

Տ. Սերովբե արքեպիսկոպոսը, հայրապետական կոնդակի ընթերցումից հետո, այն պաշտոնապես հանձնում է վերոհիշյալ ընկերության պատվո նախագահ դոկտ. Կարլ Ծենքելին, որն այն ընդունում է «հուզումով, երախտագիտությամբ և խանդավառ պատասխանով մը» (Հաղորդագրություն):

Այս առթիվ Հայոց Հայրապետը բարեհաճել էր նաև Իր ողջույնն ու օրհնությունն ուղարկել ապրիլ 8 1974 թվակիր ՀՄՐ. 770 հետևյալ մասնավոր կոնդակով «Հ. Բ. Ը.» միություն-զվիցերական իրավավիճակ» կազմակերպությանը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԶՈՒԻՑԵՐԱԿԱՆ ԻՐԱՒԱՎԻՃԱԿՈՎ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Լօգան

Ողորմութեամբն Աստուծոյ Ամենակալին, մօտ եօթը տասնամեակներ առաջ, Նեղոսի պատմական ափերուն վրայ հիմը դրուեցաւ բարի գործի նուիրուած ձեր մեծ կազմակերպութեան, որ այսօր ալ նոյն ոգեշնչումով ու նուիրումով կը շարունակէ իր կրթական, մշակութային եւ բարեսիրական առաքելութիւնը հայ սփիւռքի ամբողջ տարածքին վրայ:

Այսօր, Մեր օրհնութիւնը կ'ուզենք բերել յատկապէս ձեր՝ զուիցերական իրաւավիճակով ընկերակցութեան, որ կոչուած է իր կարեւոր և ուրոյն գործունէութիւնը ծաւալելու վերին հովանաւորութեամբը միութեանդ կեդրոնական վարչութեան, անմիջական ղեկավարութեան ներքոյ եօթը հանրածանօթ հայազգի անձնաւորութիւններու:

Նոյն Մեր կոնդակով սրտանց կ'ողջունենք նաև «Հայերու բարեկամներու զուիցերական ֆետերասիոն»-ը և յոյժ գովելի կը գտնենք ձեր բոլորի գնահատանքը եւ յարգալիր վերաբերումը այս մարդասէր կազմակերպութեան անոր ազնուահոգի ղեկավարներուն հանդէպ, որոնք իրաւ աւետարանական ոգիով գրահուած՝ անմոռանալի ծառայութիւններ մատուցած են հայ ժողովուրդին եւ շատ բարիք կատարած անոր զաւակներուն, երկար տարիներէ ի վեր:

Մեր սրտաբուխ իղձն է որ ձեր ընկերակցութիւնը և առհասարակ մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդի բոլոր զաւակները, միշտ յարգանքով լեցուն իրենց երախտագիտութիւնը մատուցանեն մարդասէր ու արդարամիտ Զուիցերիային եւ ի մասնաւորի հայ ժողովուրդի բարեկամ զուիցերացիներուն:

Թող Տէրը յաւէտ խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահպանէ դրախտանման Զուիցերիան եւ իր քրիստոսասէր ժողովուրդը:

Թող Տէրը միշտ օգնական մնայ Հայկական բարեգործական ընդհանուր միութեան եւ զուիցերական իրաւավիճակով ձեր ընկերակցութեան և լիակատար յաջողութեամբ պսակէ ձեր աստուածահաճոյ ազգանուէր առաքելութիւնը:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ» ամէն:

ՎԱՉԳԷՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 3-ն ապրիլի
1974 փրկչական ամի,
եւ ի տուժարիս Հայոց ՌԿՀԻԳ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 770»

Այնուհետեւ կրկին անգամ խոսք առնելով տ. Սերովբէ արքեպ. Մանուկեանը, հանուն Հայոց Հայրապետի, սրտառուչ մի ուղերձով ու երախտագէտ խորը զգացմունքներով, ողջունում է նաշկերոյթում ներկայությունը Ժնեւում հաստատված «Հայ տուն»-ի նախագահ դոկտ. Ալբեր Բերթուի, որն այնքան

նվիրումով, մարդասիրական ու քրիստոնեական վեհ ոգով շարունակել է առաջին համաշխարհային պատերազմի և 1915 թվականի եղեռնի օրերից հայ ժողովրդի մեծ բարեկամ և ազնվասիրտ հայր Կրաֆտ Բոնարի հայասիրական, որբախնամ մեծ ու նվիրական գործը, գործ, որի շնորհիվ հազարավոր հայ որբեր փրկվեցին ստույգ բնաջնջումից, դաստիարակվեցին, տուն-տեղ դարձան՝ շվեյցարացի ազնիվ ու քրիստոնյա ժողովրդի անհաչառ օգնությամբ:

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանն այս առիթով, խանդավառ ու ջերմ մթնոլորտում, ողջույն. Ալբեր Բերթուի կուրծքը, հանուն Հայոց Հայրապետի, զարդարում է ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ադամանդակուռ շքանշանով և ընթերցում Ն. Ս. Օծության ապրիլ 4 1974 թվակիր հմր. 771 կոնդակը՝ ուղղված Ալբեր Բերթուին:

«ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻՒՐ ԱԼՊԷՐ ՊԷՐԹՈՒԻՆ ՈՂՋՈՒՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ծնեւ

Հայոց քրիստոնէական հաւատքի բազմադարեան կեդրոն սուրբ Էջմիածնեն Մեր օրհնութեան հետ ձեզի կը բերենք վկայութիւնը թէ երկար տարիներու բարի ու հոգատար ձեր աշխատանքը ի պաշտպանութիւն եւ ի դաստիարակումն բազմաթիւ հայ որբերու, Ծնեւ հաստատուած «Հայ տուն»-ի մէջ, մեր ժողովուրդը երբէք չէ մոռցած:

Այն մարդասիրական և քրիստոնէական բարի գործը զոր կատարեցին ազնիւ հոգի շատ զուիցերացիներ մեր ազգի ծանր դժբախտութեանց օրերուն, միշտ պիտի յիշուի երախտագիտութեամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի ողբերգական տարիներէն անմիջապէս յետոյ, Զուիցերիան հանդիսացաւ փրկութեան ովասիս մը բազմահարիւր անտէր մնացած հայ որբերու համար, մանաւանդ շնորհիւ մեր ժողովուրդի անմոռանալի բարեկամ հայր Քրաֆթ Պոնարի եւ Ձերդ սիրելիութեան որ աննքան սիրով ու անձնազոհութեամբ շարունակեցիք եւ ի կատար ածեցիք սկսուած բարի գործը:

Արդ, սոյն Մեր կոնդակով, խղճի պարտք կը համարենք յանուն Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ ձեզի մատուցանել մեր ամբողջ ժողովուրդի յարգանքի ու գնահատանքի զգացումները եւ ձեր կատարած աստուածահաճոյ գործի համար ձեզի շնորհել սուրբ Գրիգոր Լուսաւորչի շքանշանը, մաղթելով որ զայն կրէք ձեր բարի սրտին վրայ երկար արեւոտ տարիներ քաջառողջութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ սուրբ Հոգւով եւ յաւէտ օրհնեալ ի Տեառնէ եւ ի Մէնջ». ամէն:

ՎԱԶԳԷՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԻՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 4-ն ապրիլի
1974 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԳ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄՐ. 771»

Օժտված բացառիկ աշխատասիրությամբ Սիրունիի թողած ժառանգությունը այսօր անհավատալի ծավալի է հասնում և թվում է պատկառելի նույնիսկ մի ամբողջ գիտա-հետազոտական հիմնարկության համար: Նրա գրական գործերն ու հայագիտական երկերը հասնում են շուրջ 1000 մեծագրության և հոդվածի:

Միայն նրա գրած կենսագրական բնույթի դիմաստվերների շարքը բազմաթիվ հատորներ կարող է կազմել: Դրանից դուրս, մեծագրական բնույթի ծավալուն գործերից են Դանիել Վարուժանին նվիրված հատորը (1940), ինչպես նաև եղիշե արքեպ. Դուրյանի, Գարեգին արքեպ. Խաչատուրյան-Տրոսյիզոնցու, Մաղաքիա արքեպ. Օրմանյանի, «Կոմիտասին հետ», «Էջմիածին» սմ-սագրում հրատարակված ստվար գործերը: Ունի նաև «Զոհրապը և իր ժամանակը» երկու հատորանոց աշխատությունը, որը մեծ գրողի կյանքի ու նրա ժամանակաշրջանի ամենակատարյալ հայելին է հանդիսանում, գրված ականատեսի բազմաթիվ հուշերի հիման վրա:

Սիրունի-հայագետը մեծ երախտիք ունի հայ ժողովրդի հին, միջին և նոր պատմության, հայ հին և նոր գրականության, ձեռագրագիտության, աղբյուրագիտության, մատենագիտության, հայ քառարանագրության և բարբառագիտության, հայ թատրոնի պատմության և այլ հարցերի ուսումնասիրության ուղղությամբ:

Նա ռումինահայ գաղութի պատմության խոշորագույն հետազոտողն էր և ընդհանրապես հայ գաղթավայրերի պատմության լավագույն գիտակներից մեկը: Մեծ թիվ են կազմում նրա ռումինահայերի պատմությունը նվիրված հայերեն և ռումիներեն լեզվով լույս տեսած գործերը, որոնք նոր խոսք են հիշյալ գաղութի մշուշապատ պատմության համար: Հայագիտությանն մեջ խոշոր ներդրում է նաև «Պոլիսը և իր դերը» հինգ հատորանոց կոթողային գործը, որի երկու հատորները արդեն իսկ լույս են տեսել: Բազմավաստակ երախտավորը մինչև իր վերջին շունչը աշխատում էր «Հայ եկեղեցին Հարավ-Արևելյան Եվրոպայի մեջ» ենռահատոր աշխատության վրա, որը վաստորեն հանդիսանում է նաև Ռումինիայի, Հունգարիայի և Լեհաստանի հայերի պատմությունը:

Պրոֆ. Սիրունին խոշոր ավանդ ունի հայ մշակույթը և պատմությունը ռումինական հասարակայնությանը ճանաչելի դարձնելու և հայ-ռումինական դարավոր բարեկամության ամրապնդման գործում: Այս առումով բավական է միայն հիշատակել հայ մշակույթի պատմությանը նվիրված «Անի» ռումիներեն եռամսյա պարբերականը (1935—1938 թթ.) և համանուն տարեգիրքը երկու ստվար հատորներով (1941—1942—43 թթ.), որոնք կազմում են ավելի քան 2000 էջ և իրավամբ դրանք կարելի է համարել ռումիներեն լեզվով գրված հայագիտական հանրագիտարան: Նրա այդ աշխատանքների շնորհիվ է, որ ընդհանուր համակրություն ստեղծվեց երկրում դեպի մեր ժողովուրդը և բազմաթիվ ռումինացի գիտնականներ սկսեցին զբաղվել հայագիտությամբ:

Իբրև հայ-ռումինական բարեկամության մեծ ջատագով՝ Սիրունին 1938 թ. օգոստոսի 21-ին Վրլեանի դե Մունտեում արժանացավ Նիկոլա Յորգայի նախագահությամբ «Լիգա Կուլտուրալայի» կողմից կազմակերպված պատվո ընդունելության: Այս առթիվ «Լիգա Կուլտուրալայի» կողմից նրան տրված վկայագրում ասված էր. «Բարեկամական մնծարանք «Լիգա Կուլտուրալայի» կողմից պր. Հ. Ծ. Սիրունիին, հավատարիմ զավակ իր ազգին, որ մշակույթի մարզի վրա աշխատեցավ զմայլելի եռանդով ամրապնդելու համար կապերը ռումիններուն և իր ազգին միջև»[1]:

[1] Հ. Ծ. Սիրունի, Նիքոլա Եորգային հետ, Անթիլիաս, 1972, էջ 392:

Ռումինիայում պրոֆ. Հ. Ճ. Սիրունիի կատարած հասարակական աշխատանքների թվում հիշատակության արժանի է՝ «Հայ մշակույթի տան» ստեղծումը, իր թանգարանով, մատենադարան-ընթերցարանով և մշակութային շրջանակով։

Պրոֆ. Սիրունին խոշոր արևելագետ էր։ Մեծանուն ռումինացի գիտնական և հայ ժողովրդի մեծ բարեկամ Նիկոլա Յորգայի անմիջական ցուցմունքներով և գործակցությամբ, իր արևելյան լեզուների և աղբյուրների իմացությունը ի սպաս դրեց արևելագիտությանը, դառնալով նրա կարկառուն ներկայացուցիչ Ռումինիայում։ Ինչպես նշում է վերջերս նրա մահվան առաջին տարելիցի առթիվ Ռումինիայի արևելագետների ընկերության ժամանակավոր նախագահուհի պրոֆ. Կորինա Նիկոլեսկուն. «Սիրունի կհանդիսանա ռումինական պատմական գիտության մեջ արևելագետների ամենեն բեղմնավոր և գործունյա հետազոտողը։ Անոր մեծագույն արժանիքը այն է, որ շահագրգռությունը արթնցուցած է խումբ մը երիտասարդներու արևելյան պատմության և մշակույթի հանդեպ, մարզեր, որոնք երեք տասնամյակ առաջ շատ հեռացած կնկատվեին ռումեն աշխարհի արդի ըմբռնումեն»։ Իբրև Ռումինիայի արևելագետների ընկերության պատվո նախագահ «Սիրունի հաստատ հիմերը դրած է շենքի մը, որուն կառուցումը պետք է շարունակվի նոր սերունդներուն կողմե, որոնք ունին այսօր իրենց տրամադրության տակ աշխատանքի, տեղեկանքի ու արժեքավորելու շատ ավելի կազմակերպված միջոցներ, քան անցյալին»[1]։

Նշենք, որ նրա անունը սերտորեն կապված է մնում Ռումինիայում արևելագետների պատրաստման գործի հետ։ Մեծ թիվ են կազմում նրա կողմից հրատարակված հայերեն և թուրքերեն լեզուներով այն աղբյուրները, որոնք նոր լույս են սփռում Ռումինիայի պատմության վրա։ Սիրունին ռումինացի բազմավաստակ հայագետ պրոֆ. Վլադ Բոնոցեանուի հետ հիմնադիրներից մեկը եղավ Ռումինիայի արևելագետների ընկերության և նրա „Studia et Acta orientalia" գիտական աշխատությունների ժողովածուին։ Արևելագիտական նրա տքնաջան աշխատանքներից մեկն է ռուսական կողմնորոշման մեծ ջատագով Մանուկ բեյ Միրզայանի արխիվի ուսումնասիրումն և փաստաթղթերին նվիրված նրա բազմահատոր գործը։ Նրա այդ անտիպ գործը ռումինացի գիտնականների գնահատմամբ կոչված է մեծ լույս սփռելու Հարավ-Արևելյան Եվրոպայի ժողովուրդներից շատերի անցյալի վրա։

Պրոֆ. Սիրունին ապրելով հայրենիքից հեռու միշտ զգացել է հայրենի հողի կենարար ուժը։ Նա դեռևս 1924 թ. Բուխարեստի իր «Նաւասարդ»-ում գրել է. «Հայրենի հողի վրա է, որ պիտի կեդրոնանան վերջ ի վերջո մեր բոլոր հիգերը, մեր հայրենի մշակույթը վերստեղծելու համար։ Դուրսը թափված. սերմերը, որքան ալ զորավոր ոլլան չեն կրնար ինքնորիկներուն դիմանալ»[2]։

Դեռևս 1938 թ. Սիրունին պատվին իր խոսած ճառում Նիկոլա Յորգան մարգարեական շնչով գուշակել էր, որ հայ մշակույթի անխոնջ մշակը մի օր տեսնելու է Հայաստանի հարությունը։ Եվ իսկապես նա արժանացավ հասնելու այդ օրվան։

Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով 1965 թ. մինչև 1971 թ. իր դեպի հայրենիք կատարած հինգ ուխտագնացությունների ընթացքում հայագիտության նահապետը նոր լիցք ստացավ։ Միշտ կարելի էր տեսնել նրան երիտասարդական մեծ խանդավառությամբ լցված։ Նա մայրաքաղաքի հայագիտական գրեթե բոլոր ինստիտուտներում ե բարձրագույն ուսումնական հաստատություններում կարդաց շուրջ 100 դասախոսություններ։ Սիրունին մեծ թվով ուսումնասիրություններ և հոդվածներ հրատարակեց սովետական Հայաստանի գիտական բազմաթիվ հանդեսներում և թերթերում։

Հայրենիքից վերադարձին նա գրում էր. «Երջանիկ եմ կազդուրին համար, զորս հետս բերի հայրենի հողեն և գուրգուրանքին համար, որ ինձ տրվեցավ վայելել հայ մտավորականության բոլոր խավերեն։ Խրթան մըն էին ինձ անոնք՝ արհամարհելու տարիներուն թիվը, որ ուներուս կը կրի, և լրացնելու խղճի պարտքերը, զոր դեռ ունիմ դեպի մեր մեծ ռահվիրաները»[3]։

Պրոֆ. Սիրունիի կողմից հայ մշակույթին մատուցված մեծ ծառայությունները բարձր գնահատվեցին թե՛ Սփյուռքում և թե՛ Հայաստանում։ Նրա ծննդյան 80-ամյակը մեծ շուքով նշվեց Սփյուռքի տարածքի վրա և Հայաստանի գիտությունների ակադեմիայում։ Բազմաթիվ հայ և օտար անվանի գիտնականներ իրենց ելույթներում մեծարեցին ի բարձր գնահատեցին նրա անձն ու վաստակը։ Նա Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ից արժանացավ ս. Գրիգոր Լուսավորչի ադամանդակուռ առաջին կարգի

[1] «Նոր կյանք», Բուխարեստ, 1974, ապրիլի 5, № 14(1214), էջ 2։

[2] Հայկական ՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Հայ ժողովրդի պատմության, հատոր VII, Երևան, 1967, էջ 585։

[3] Հ. Ճ. Սիրունի, Նիքոլա Եորգային հետ, Անթիլիաս, 1972, էջ 455—456։

շքանշանի, Մաշտոցյան Մատենադարանի տնօրենությունը նաև շնորհեց Մեսրոպ Մաշտոցի մեդալ, և այլն:

Հ. Ճ. Սիրունիի ստեղծագործական կենսագրության մեջ հատկապես նրա կյանքի վերջին 10—15 տարիներին մեծ թափով մնայուն արժեքի հայագիտական գործերի ստեղծման հիմնական ոգեշնչողները հանդիսացան Մայր Աթոռն ու Մայր Հայաստանը: Հատկապես Վեհափառ Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա.-ի և հայրենի գիտնականների և գիտական հաստատությունների կողմից նրա նկատմամբ ցուցաբերված գուրգուրանքն ու խանդաղատանքը Վեհափառի բառերով ասած «տառապանքների մեջ աննահանջ կորովով ու նվիրումով հայ մշակույթին ծառայող այդ մեծ նվիրյալին գոգիր դարձան ապրելու իր կյանքի ոսկյա շրջանը և ստեղծելու բացառիկ արժեքի իր ծավալուն մենագրությունները:

Պրոֆ. Հ. Ճ. Սիրունիի մահով ընկավ ափյուռքահայ հայագիտության կաղնին...

Նրա կորստից վեց ամիսներ հետո եղանք Բուխարեստում, իր տանը... Սակայն չկար այլևս Բուխարեստի ճգնավորը, ինչպես սիրում էին նրան կոչել, թափուր էր նրա աշխատանքային խուցը, ուր գիշեր ու ցերեկ նա տքնում էր հակառակ իր վատթար տեսողության և առողջության: Նրա ձեռագրերը ու գրադարանը փոխադրվել էին Պետական արխիվների վարչություն: Տանը մնացել էր միայն իր հավատարիմ քենին՝ օրիորդ Անժելը, որ հսկում էր մնացած վերջին մասունքների վրա... Նա ինձ նվիրեց անխոնջ պրպտիչի վերջին հրատարակված գործը՝ «Նիքոլա Եորկայի հետ» 462 էջանոց ստվար հատորը, որ արժանացել էր Հայկ Սերենկյուլյան գրական մրցանակին, և նրա հեղինակը մահից միայն մի շաբաթ առաջ էր տեսել այն մեծ ցնծությամբ...

Այդ մասին պրոֆ. Հ. Ճ. Սիրունին 1972 թ՝ օգոստոսի 20-ին հիշյալ գրական մրցանակի հանձնախմբին ի միջի այլոց գրել էր. «Երկու ամսվան ընթացքին կրկնվող սրտի զույգ մը տագնապե հագիվ սթափած՝ երբ միտք ակամա կերթար դարակներուս մեջ դիզված նյութերուն, որոնք որբ կրնային մնալ հանկարծ...» լսում է իր «Նիքոլա Եորկայի հետ» աշխատության մրցանակի արժանանալը, որը կարևոր իրադարձություն էր համարում նա իր կյանքում: Նա այդ մասին գրել է. «Հավատացեք՝ իսկական ճիգ մը պետք եղավ զսպելու համար հուզումը, զոր ինձի կուգար պատճառել Ձեր որոշումը, հոգեկան այնպիսի դրության մը մեջ, ուր ամեն վայրկյան ինձի կը հաճախեր դառն այն մտածումը թե հանուն ինչի՞ է այս համառությունը՝ չբաժնվելու աշխատանքի սեղանեն և դիտելու համար նյութերը, որոնք անընդհատ կը դիզվին հոն»[5]:

Այժմ երբ նա այլևս չկա, պետք է որը չը թողնել նաև նրա մյուս ավարտված գործերը և անհրաժեշտ է մտածել նրանց շուտափույթ տպագրության մասին:

Այո՛, չկա՛ այլևս Վարուժանի ու Սիամանթոյի, Կոմիտասի և Ջոհրապի անմահ սերունդը մեզ հետ կամրջող անձնավորությունը, մեզ հետ չէ այլևս հայագիտության բազմավաստակ երախտավորը, սակայն կա՛ իր թողած տպագիր և անտիպ մեծ ժառանգությունը, որի հետզհետե հրատարակումը կոչված է է՛լ ավելի նպաստելու հայ մշակույթի գանձարանի հարստացմանը և միշտ վառ պահելու նրանց երկնող հեղինակի հիշատակը:

---

[5] Հ. Ճ. Սիրունի, Նիքոլա Եորկայի հետ, Անթիլիաս, 1972, էջ 7:



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏԻՐ ԷՋԵՐ
(Եղիվարդ, Երուսաղեմ, 1973)

Երուսաղեմի պատրիարք Եղիշե արքեպս. Տերտերյանի վերջերս հրատարակած գիրքը հեղինակի բանաստեղծական ստեղծագործության ընդհանուր վաստակից ընտրաբար քաղված քերթվածների ժողովածուն է: Սրբազան պատրիարքը ժամանակակից սփյուռքահայ գրականության մեջ հանրածանոթ բանաստեղծ Եղիվարդն է և պատկանում է այն ընտրյալների թվին, որոնք իրենց տաղանդով ու արգասավոր գրչով արժանի և որոյն տեղ են գրավում վերջին երեսնամյակի հայ հոգևոր կյանքի ստեղծագործական անդաստանում: Այսօր նրա զուտ բանաստեղծական երկերը, բացի արձակ գործերից, մոտ մի կես տասնյակի են հասնում, որոնք վկայում են բանաստեղծի անկեղծ ու անվերապահ սերն ու նվիրումը քերթողական արվեստին:

Ի՞նչն է եղել, արդարև, հոգեբանական շարժառիթը սույն գեղեցիկ հատորում բանաստեղծությունների այս վերահրատարակության: Սրբազան կրակի մոտալուտ հանգման մտավախությո՞ւն, թե՞ ստեղծագործական կյանքի մի նոր շրջանի վերահայտնություն:

Բայց բանաստեղծն ինքը հավաստիացնում է մեզ.

—Կլեցվի հոգիս հուշերով ջերմիկ,
Արևով անցյալ,
Կվերադառնան, խաղաղ, համբաքայլ,
Սերերս անանուն և անմխիթար,
Որոնց շունչին տակ
Երգերս ծաղկեցան հասակ առ հասակ,
Հոգիս՝ հարսնարան հին ծանոթներուն:

Եղիվարդը սույն հատորով վերադառնում է իր անցյալի հիշատակներին: Բայց դրանք դեպքեր ու դրվագներ չեն այնքան, որքան հոգեկան հույզեր ու ապրումներ, որոնք մեզ գալիս են բանաստեղծի ներքին ապրումների ու զգայնությունների ճանապարհով:

Հին բանաստեղծություններից կազմված այս նոր հատորի սկզբում զետեղված բանաստեղծությունը, որ մի տեսակ անուղղակի պատասխան է մեր հարցադրումներին ու տարակուսանքներին, հեղինակը վերնագրել է «Վերաբաց»: Նշանակում է՝ նա վերաբացի՛, վերածաղկմա՛ն ցնծություններն է ապրում կյանքի այն հանգրվանում, ուր ուրիշներ իրենց հաշիվները փակած են համարում: Այս առումով հատորը թեպետև գալիս է անցյալից, բայց շեշտո՛ւմ է ներկան: Եվ բանաստեղծը անցյալն ապրում է ներկայի մեջ:

—Սակայն, ո՞վ հրաշք,
Զեռք մը անծանոթ խորն իմ հոգիին,
Կվառե նորեն կանթեղներ հազար,
Իրարու կուգան անցյալն ու ներկան,
Ինձի կթվի թե պարմանն եմ այն,
Ուժեղ ու կայտառ,
Որ տենչանքներու դուռնեն ոսկեսար,
Այն հին օրերուն կմտներ աշխարհ:

Այսօր ավելի քան երեսուն տարիների մի անջրպետ է բաժանում մեզ այն օրերից, երբ Եղիվարդը իր բանաստեղծությունների անդրանիկ գրքով («Մագդաղինեն մեղրամոմե») գրական հրապարակ էր իջնում: Նա չէր գալիս, հարկավ, որպես մի նոր ու անծանոթ անուն, այլ որպես կազմավորված ու հասունացած մի բանաստեղծ, որն արդեն որոշ համբավի էր հասել «Սիոն» ամսագրի

Այս առթիվ Ա. Բերթուն, խորապես հուզված այս ջերմ արտահայտություններից և, մանավանդ, Հայոց Հայրապետի բարձր գնահատանքից, իր երախտագիտությունն ու սրտագին շնորհակալությունն է հայտնում Նորին Ս. Օծությանը՝ խոստանալով միաժամանակ գրավոր ներկայացնել իր երախտագիտությունը հայտնել Հայոց Հայրիկին:

Ընդունելության ժամանակ Լոզանի քաղաքապետարանի ներկայացուցիչ դոկտ. Ռոժե Մյունյին, հանուն Շվեյցարիայի կառավարության և ժողովրդի, հանդես է գալիս Հայոց Հայրապետին, հայ ժողովրդին և բոլոր ներկաներին ուղղված շնորհակալության «կուռ, ազդու և գեղեցիկ մի ուղերձով» (Հաղորդագրություն), որն ընդունվում է սրտագին ոգևորությամբ և բուռն ծափողջույններով:

Սույն ճաշկերույթի ընթացքում տեղի են ունենում նաև նվիրատվություններ: Հ. Բ. Ը. միության նախագահ տիար Ալեք Մանուկյանն իր և կնոջ անունից նվիրում է 10.000 շվեյցարական ֆրանկ «Հայ-զվիցերական բարեկամության» կողմից արդեն իսկ տպագրության հանձնված «Հայաստան և Զվիցերիա» կարևոր հատորի տպագրության համար: «Հայաստան և Զվիցերիա» հատորը տպագրության է պատրաստել դոկտ. Կարլ Մեյերը, որը հիվանդության պատճառով չէր կարողացել ներկա գտնվել ճաշկերույթին, բայց «ճայնագիր ուղերձ մը ղրկած էր՝ հայերեն, որ օրվան անակնկալը հանդիսացավ և ունկնդրվեցավ խորին հուզումով, այնքան շեշտն իսկ հայկական էր» (Հաղորդագրություն):

Դոկտ. Կարլ Մեյերը հանրածանոթ շվեյցարացի մտավորական է, որ ավելի քան 30 տարիներ ծառայել է հայերին Արևելքի մեջ և լավագույնս սովորել հայերեն:

Հեղինակն իր «Հայաստան և Զվիցերիա» տպագրության հանձնված գերմաներեն աշխատության սկզբում խոսում է հայ ժողովրդի 4.000 տարիների պատմության մասին և ապա հանգամանորեն ներկայացնում հայ և շվեյցարացի ժողովուրդների, Հայաստանի և Շվեյցարիայի փոխհարաբերությունների տարեգրությունը:

Վերոհիշյալ հատորի մեջ տեղ են գրավել նաև Հայոց Հայրապետի և ս. Էջմիածնի Մայր տաճարի նկարները և Ն. Ս. Օծության «Հայերու բարեկամներու զվիցերական ընկերակցութեան» („Fédération Suisse des amis des Armeniens") ուղղած ապրիլ 2 1974 թվակիր հմր. 769 կոնդակը:

Տեր և տիկին Սարգիս Քյուրքճյաններն այս առթիվ նվիրել էին 5.000 շվեյցարական ֆրանկ՝ «Հ. Բ. Ը. միություն-զվիցերական իրավավիճակ» կազմակերպության՝ ի գնահատություն նրա բարվոք գործունեության:

Մայիսի 5-ի սույն ճաշկերույթին իրենց շնորհալի մասնակցությունն էին բերել օր. Սիրվարդ Գազանճյանը՝ հայկական երգերով, և շվեյցարացի Շարլ Թոբիեն՝ ժողովրդական երգերով:

Լոզանի երկու ֆրանսատիպ օրաթերթեր՝ „La Tribune" և „Le matin" ու „24 heures-feuille d'avis" լայն տեղ են հատկացրել իրենց էջերում օրվա հանդիսություններին:

«Բոլոր ներկաները ապրեցան հայ-զվիցերական բարեկամության և եղբայրության հիշատակելի օր մը», եզրակացնում է Մայր Աթոռ ուղարկված պաշտոնական Հաղորդագրությունը:

Ս. ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՊՐՈՖԵՍՈՐ Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

(Մահվան առաջին տարելիցի ատթիվ)

1973 թ. ապրիլի 7-ին Բուխարեստում վախճանվեց բազմավաստակ հայագետ և արևելագետ, գրող և հրապարակագիր, աղբյուրագետ և հասարակական բազմաբեղուն գործիչ, Ռումինիայի արևելագետների ընկերության պատվավոր նախագահ պրոֆ. Հ. Ճ. Սիրունին:

Կսկծալի եղավ իր կորուստը մանավանդ հայագիտության համար: Հատկապես շատ ցավալի էր նրա մահը այն պատճառով, որ նա լիովին կարող էր իր թողած հարուստ ժառանգության վրա ավելացնել բազմաթիվ այլ նորեր ևս:

Հ. Ճ. Սիրունին ծնվել է 1890 թ. ապրիլի 6/18-ին Ադաբազարում, Կ. Պոլսում, ավարտելով Կեդրոնական վարժարանը, նա իր բարձրագույն ուսումը ստացել է տեղի իրավաբանական համալսարանում (1908—1913 թթ.): Դեռևս աշակերտական գրասենյակներից 1905 թ. Սիրունին սկսեց աշխատակցել «Մասիս» հանդեսին, իսկ նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Մթընշաղ» խորագրով լույս տեսավ 1908 թ.: Վերջինիս հաջորդեց «Դեպի տաճարն հրաշքին» նոր ժողովածուն (1913 թ.), գրեց նաև արձակ էջեր և այլն:

Հ. Ճ. Սիրունին միաժամանակ զբաղվեց նաև հրապարակագրությամբ, նախ «Արեվելք»-ի և «Սուրհանդակ»-ի խմբագրություններում և ապա «Ազատամարտ»-ում, հիմնավորապես: Կարևոր մասնակցություն ունեցավ Կ. Պոլսի խանդավառ մշակութային կյանքին, նվիրվելով հայ թատրոնի, մարզական և մշակութային ընկերակցությունների ստեղծման և կամ աշխուժացման աշխատանքներին: Անմոռանալի են մնում նրա նախաձեռնությամբ 1913 թ. Զոհրապի, Վարուժանի, Սիամանթոյի և մեր նշանավոր այլ գրողներին նվիրված գրական ասուլիսների կազմակերպումը և համանուն պարբերականի ստեղծումը: Սիրունին դարձյալ Կ. Պոլսում նախաձեռնությունը ստանձնեց Մեծ դարադարձի հանդիսություններին և նույն 1913 թ. Դանիել Վարուժանի հետ խմբագրեց ու հրատարակեց «Նաւասարդ» գրական և գեղարվեստական տարեգիրքը: 1914 թ. առանձին լույս տեսավ նաև նրա «Զինվորական բառարանը»:

Մեր մշակույթի ավագագույն դեմքերից մեծ մասի նման Սիրունիի կյանքի ճանապարհը ևս շատ փշոտ է եղել: Դեռևս նա աշակերտ էր, երբ համիդյան օրերին նրան բանտարկեցին: 1913 թ. երիտասարդ թուրքերը նրան արգելավակեցին, իսկ 1915 թ. մեծ եղեռնի օրերին նա հրաշքով վերապրեց չորս տարի մնալով ծվարած մի տան ձեղնահարկում, դիմագրավելով բազում մղձավանջային արհավիրքների, սակայն անգամ այդ դժնդակ օրերին նա երբեք վայր չդրեց գրիչը իր ձեռքից և շարունակեց ստեղծագործել:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո Սիրունին դարձյալ կարևոր մասնակցություն ունեցավ Կ. Պոլսի մշակութային կյանքին: Նրա ճիգերին շատ բան է պարտական նորաստեղծ «Հ. Մ. Ը. Մ.»-ը, «Հայ Տրամաթիքը», Կոմիտասյան հանձնախումբը, Արվեստի տունը և այլն: Նա 1920 թ. ընտրվեց երեսփոխան, Ազգային ժողովում:

1922 թ. տիրող քաղաքական անբարենպաստ պայմանների հետևանքով Սիրունին ստիպվեց թողնել Կ. Պոլիսը և մեծանուն գիտնական ու հայագետ Նիկոլա Յորգայի խորհրդով և անմիջական աջակցությամբ ընտանյոք իր մշտական բնակությունը հաստատեց Բուխարեստում: Այստեղ նա կարևոր մասնակցություն ունեցավ հայ գաղթավայրի հասարակական-մշակութային կյանքին: Կ. Պոլսում և Բուխարեստում նա խմբագրեց և հրատարակեց 16 անուն պարբերականներ և գրեց 17 անուն թատերախաղեր: 1923—1926 թթ. Բուխարեստում նա լույս ընծայեց «Նաւասարդ» արվեստի և գրականության ճոխ պարբերականը, ուր ձգտեց պահպանել 1913 թ. Կ. Պոլսում Դանիել Վարուժանի հետ հրատարակած համանուն տարեգրքի ավանդույթները: Այստեղ ի հայտ եկան ոչ միայն սփյուռքահայ, այլև Հայաստանի գրողներից շատերի ստեղծագործությունները:

Օժտված բացառիկ աշխատասիրությամբ Սիրունի թողած ժառանգությունը այսօր անհավատալի ծավալի է հասնում և թվում է պատկառելի նույնիսկ մի ամբողջ գիտա-հետազոտական հիմնարկության համար: Նրա գրական գործերն ու հայագիտական երկերը հասնում են շուրջ 1000 մենագրության և հոդվածի:

Միայն նրա գրած կենսագրական բնույթի դիմաստվերների շարքը բազմաթիվ հատորներ կարող է կազմել: Դրանից դուրս, մենագրական բնույթի ծավալուն գործերից են Դանիել Վարուժանին նվիրված հատորը (1940), ինչպես նաև Եղիշե արքեպ. Դուրյանի, Գարեգին արքեպ. Խաչատուրյան-Տրասպիզոնցու, Մաղաքիա արքեպ. Օրմանյանի, «Կոմիտասին հետ», «Էջմիածին» ամենագրում հրատարակված ստվար գործերը: Ունի նաև «Զոհրապը և իր ժամանակը» երկու հատորանոց աշխատությունը, որը մեծ գրողի կյանքի ու նրա ժամանակաշրջանի ամենակատարյալ հայելին է հանդիսանում, գրված ականատեսի բազմաթիվ հուշերի հիման վրա:

Սիրունի-հայագետը մեծ երախտիք ունի հայ ժողովրդի հին, միջին և նոր պատմության, հայ հին և նոր գրականության, ճեռագրագիտության, այբբուրագիտության, մատենագիտության, հայ բառարանագրության և բարբառագիտության, հայ թատրոնի պատմության և այլ հարցերի ուսումնասիրության ուղղությամբ:

Նա ռումինահայ գաղութի պատմության խոշորագույն հետազոտողն էր և ընդհանրապես հայ գաղթականների պատմության լավագույն գիտակներից մեկը: Մեծ թիվ են կազմում նրա ռումինահայերի պատմությանը նվիրված հայերեն և ռումիներեն լեզվով լույս տեսած գործերը, որոնք նոր խոսք են հիշյալ գաղութի մշուշապատ պատմության համար: Հայագիտության մեջ խոշոր ներդրում է նաև «Պոլիսը և իր դերը» հինգ հատորանոց կոթողային գործը, որի երկու հատորները արդեն իսկ լույս են տեսել: Բազմավաստակ երախտավորը մինչև իր վերջին շունչը աշխատում էր «Հայ եկեղեցին Հարավ-Արևելյան Եվրոպայի մեջ» եռահատոր աշխատության վրա, որը փաստորեն հանդիսանում է նաև Ռումինիայի, Հունգարիայի և Լեհաստանի հայերի պատմությունը:

Պրոֆ. Սիրունին խոշոր ավանդ ունի հայ մշակույթը և պատմությունը ռումինական հասարակայնությանը ճանաչելի դարձնելու և հայ-ռումինական դարավոր բարեկամության ամրապնդման գործում: Այս առումով բավական է միայն հիշատակել հայ մշակույթի պատմությանը նվիրված «Անի» ռումիներեն եռամսյա պարբերականը (1935—1938 թթ.) և համանուն տարեգիրքը երկու ստվար հատորներով (1941—1942—43 թթ.), որոնք կազմում են ավելի քան 2000 էջ և իրավամբ դրանք կարելի է համարել ռումիներեն լեզվով գրված հայագիտական հանրագիտարան: Նրա այդ աշխատանքների շնորհիվ է, որ ընդհանուր համակրություն ստեղծվեց երկրում դեպի մեր ժողովուրդը և բազմաթիվ ռումինացի գիտնականներ սկսեցին զբաղվել հայագիտությամբ:

Իբրև հայ-ռումինական բարեկամության մեծ ջատագով՝ Սիրունին 1938 թ. օգոստոսի 21-ին Վրյենի դե Մունտեում արժանացավ Նիկոլա Յորգայի նախագահությամբ «Վիգա Կուլտուրալայի» կողմից կազմակերպված պատվո ընդունելության: Այս առթիվ «Վիգա Կուլտուրալայի» կողմից նրան տրված վկայագրում ասված էր. «Բարեկամական մեծարանք «Վիգա Կուլտուրալայի» կողմից պր. Հ. Ծ. Սիրունիին, հավատարիմ զավակ իր ազգին, որ մշակույթի մարզի վրա աշխատեցավ զմայլելի եռանդով ամրապնդելու համար կապերը ռումիններում և իր ազգին միջև»[1]:

[1] Հ. Ծ. Սիրունի, Նիքոլա Եորգային հետ, Աթենք, 1972, էջ 392:

Ռումինիայում պրոֆ. Հ. Ճ. Սիրունիի կատարած հասարակական աշխատանքների թվում հիշատակության արժանի է՝ «Հայ մշակույթի տան» ստեղծումը, իր թանգարանով, մատենադարան-ընթերցարանով և մշակութային շրջանակով:

Պրոֆ. Սիրունին խոշոր արևելագետ էր: Մեհանուն ռումինացի գիտնական և հայ ժողովրդի մեծ բարեկամ Նիկոլա Յորգայի անմիջական ցուցմունքներով և գործակցությամբ, իր արևելյան լեզուների և աղբյուրների իմացությունը ի սպաս դրեց արևելագիտությանը, դառնալով նրա կարկառուն ներկայացուցիչը Ռումինիայում: Ինչպես նշում է վերջերս նրա մահվան առաջին տարելիցի առթիվ Ռումինիայի արևելագետների ընկերության ժամանակավոր նախագահի պրոֆ. Կորինա Նիկոլեսկուն. «Սիրունի կհանդիսանա ռումինական պատմական գիտության մեջ արևելագետների ամենեն բեղմնավոր և գործունյա հետազոտողը: Անոր մեծագույն արժանիքը այն է, որ շահագրգռությունը արթնցուցած է խումբ մը երիտասարդներու արևելյան պատմության և մշակույթի հանդեպ, մարդեր, որոնք երեք տասնամյակ առաջ շատ հեռացած կնկատվեին ռումեն աշխարհի արդի ըմբռնումեն»: Իբրև Ռումինիայի արևելագետների ընկերության պատվո նախագահ «Սիրունի հաստատ հիմերը դրած է շենքի մը, որուն կառուցումը պետք է շարունակվի նոր սերունդներուն կողմե, որոնք ունին այսօր իրենց տրամադրության տակ աշխատանքի, տեղեկանքի ու արժեքավորելու շատ ավելի կազմակերպված միջոցներ, քան անցյալին»[3]:

Նշենք, որ նրա անունը սերտորեն կապված է մնում Ռումինիայում արևելագետների պատրաստման գործի հետ: Մեծ թիվ են կազմում նրա կողմից հրատարակված հայերեն և թուրքերեն լեզուներով այն աղբյուրները, որոնք նոր լույս են սփռում Ռումինիայի պատմության վրա: Սիրունին ռումինացի բազմավաստակ հայագետ պրոֆ. Վլադ Բրնրցեանուի հետ հիմնադիրներից մեկը եղավ Ռումինիայի արևելագետների ընկերության և նրա „Studia et Acta orientalia" գիտական աշխատությունների ժողովածուին: Արևելագիտական նրա տքնաջան աշխատանքներից մեկն է ռուսական կոլոնիզացիան մեծ ջատագով Մանուկ բեյ Միրզայանի արխիվի ուսումնասիրությանը և փաստաթղթերին նվիրված նրա բազմահատոր գործը: Նրա այդ անտիպ գործը ռումինացի գիտնականների գնահատմամբ կոչված է մեծ լույս սփռելու Հարավ-Արևելյան Եվրոպայի ժողովուրդներից շատերի անցյալի վրա:

Պրոֆ. Սիրունին ապրելով հայրենիքից հեռու միշտ զգացել է հայրենի հողի կենարար ուժը: Նա դեռևս 1924 թ. Բուխարեստի իր «Նաւասարդ»-ում գրել է. «Հայրենի հողի վրա է, որ պիտի կեղրոնանան վերջ ի վերջո մեր բոլոր ճիգերը, մեր հայրենի մշակույթը վերստեղծելու համար: Դուրսը թափված. սերմերը, որքան ալ զորավոր դրված չեն կրնար փոթորիկներուն դիմանալ»[1]:

Դեռևս 1938 թ. Սիրունիին պատվիրեց իր խոսած ճառում Նիկոլա Յորգան մարգարեական շնչով գուշակել էր, որ հայ մշակույթի անխոնջ մշակը մի օր տեսնելու է Հայաստանի հարությունը: Եվ իսկապես նա արժանացավ հասնելու այդ օրվան:

Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի հրավերով 1965 թ. մինչև 1971 թ. իր դեպի հայրենիք կատարած հինգ ուխտագնացությունների ընթացքում հայագիտության նահապետը նոր լիցք ստացավ: Միշտ կարելի էր տեսնել նրան երիտասարդական մեծ խանդավառությամբ լցված: Նա մայրաքաղաքի հայագիտական գրեթե բոլոր ինստիտուտներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կարդաց շուրջ 100 դասախոսություններ: Սիրունին մեծ թվով ուսումնասիրություններ և հոդվածներ հրատարակեց սովետական Հայաստանի գիտական բազմաթիվ հանդեսներում և թերթերում:

Հայրենիքից վերադարձին նա գրում էր. «Երջանիկ եմ կազդուրին հասար, զորս հետս բերի հայրենի հողեն և գուրգուրանքին համար, որ ինձ արվեցավ վայելել հայ մտավորականության բոլոր խավերեն: Խնթան մը էին ինձ անոնք՝ արհամարհելու տարիներուն թիվը, որ ուսերուս կը կքի, և լրացնելու խղճի պարտքերը, զոր դեռ ունիմ դեպի մեր մեծ ռահվիրաները»[2]:

Պրոֆ. Սիրունիի կողմից հայ մշակույթին մատուցված մեծ ծառայությունները բարձր գնահատվեցին թե՛ Սփյուռքում և թե՛ Հայաստանում: Նրա ծննդյան 80-ամյակը մեծ շուքով նշվեց Սփյուռքի տարածքի վրա և Հայաստանի գիտությունների ակադեմիայում: Բազմաթիվ հայ և օտար անվանի գիտնականներ իրենց ելույթներում մեծարեցին և բարձր գնահատեցին նրա անձն ու վաստակը: Նա Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ից արժանացավ ս. Գրիգոր Լուսավորչի ադամանդակուռ առաջին կարգի

[1] «Նոր կյանք», Բուխարեստ, 1974, ապրիլի 5, № 14(1214), էջ 2:

[2] Հայկական ՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտ, Հայ ժողովրդի պատմություն, հատոր VII, Երևան, 1967, էջ 585:

[3] Հ. Ճ. Սիրունի, Նիքոլա Եորկայինի հետ, Ամթիլիսս, 1972, էջ 455—456:

շքանշանի, Մաշտոցյան Մատենադարանի տնօրենությունը նրան շնորհեց Մեսրոպ Մաշտոցի մեդալ, և այլն:

Հ. Ճ. Սիրունիի ստեղծագործական կենսագրության մեջ հատկապես նրա կյանքի վերջին 10—15 տարիներին մեծ թափով մնայուն արժեքի հայագիտական գործերի ստեղծման հիմնական ոգեշնչողները հանդիսացան Մայր Աթոռն ու Մայր Հայաստանը: Հատկապես Վեհափառ Հայրապետի՝ Տ. Տ. Վազգեն Ա.-ի և հայրենի գիտնականների և գիտական հաստատությունների կողմից նրա նկատմամբ ցուցաբերված գուրգուրանքն ու խանդաղատանքը Վեհափառի բառերով ասած «տառապանքների մեջ անհահանջ կորովով ու նվիրումով հայ մշակույթին ծառայող այդ մեծ նվիրյալին գոգիր դարձան ապրելու իր կյանքի ոսկյա շրջանը և ստեղծելու բացառիկ արժեքի իր ծավալուն մենագրությունները:

Պրոֆ. Հ. Ճ. Սիրունիի մահով ընկավ ուիյուրքահայ հայագիտության կաղնին...

Նրա կորստից վեց ամիսներ հետո եղանք Բուխարեստում, իր տանը... Սակայն չկար այլևս Բուխարեստի ճգնավորը, ինչպես սիրում էին նրան կոչել, թափուր էր նրա աշխատանքային խուցը, ուր գիշեր ու ցերեկ նա տքնում էր հակառակ իր վատթար տեսողության և առողջության: Նրա ձեռագրերը ու գրադարանը փոխադրվել էին Պետական արխիվների վարչություն: Տեսնը մնացել էր միայն իր հավատարիմ քենին՝ օրիորդ Անժելը, որ հսկում էր մնացած վերջին մասունքների վրա... Նա ինձ նվիրեց անխոնջ պրպտիչի վերջին հրատարակված գործը՝ «Նիքոլա Եորկայի հետ» 462 էջանոց ստվար հատորը, որ արժանացել էր Հայկ Սերենկյուլյան գրական մրցանակին, և նրա հեղինակը մահից միայն մի շաբաթ առաջ էր տեսել այն մեծ ցնծությամբ...

Այդ մասին պրոֆ. Հ. Ճ. Սիրունին 1972 թ. օգոստոսի 20-ին հիշյալ գրական մրցանակի հանձնախմբին ի միջի այլոց գրել էր. «Երկու ամսվան ընթացքին կրկնվող արտի զույգ մը տագնապն հազիվ պոփոխած՝ երբ միտքս ակամա կերթար դարակներուս մեջ դիզված նյութերուն, որոնք որբ կրնային մնալ հանկարծ...» լսում է իր «Նիքոլաս Եորկայիի հետ» աշխատության մրցանակի արժանանալը, որը կարևոր իրադարձություն էր համարում նա իր կյանքում: Նա այդ մասին գրել է. «Հավատացեք՝ իսկական ճիգ մը պետք եղավ զսպելու համար հուզումը, զոր ինձի կուգար պատճառել Ձեր որոշումը, հոգեկան այնպիսի դրության մը մեջ, ուր ամեն վայրկյան ինձի կը հաճախեր դառն այն մտածումը թե հանուն ինչի՞ է այս համառությունը՝ չբաժնվելու աշխատանքի սեղանեն և դիտելու համար նյութերը, որոնք անընդհատ կը դիզվին հոն»[6]:

Այժմ երբ նա այլևս չկա, պետք է որ չընթողնել նաև նրա մյուս ավարտված գործերը և անհրաժեշտ է մտածել նրանց շուտափույթ տպագրության մասին:

Այո՛, չկա՛ այլևս Վարուժանի ու Սիամանթոյի, Կոմիտասի և Զոհրապի անմահ սերունդը մեզ հետ կամրջող անձնավորությունը, մեզ հետ չէ այլևս հայագիտության բազմավաստակ երախտավորը, սակայն կա՛ իր թողած տպագիր և անտիպ մեծ ժառանգությունը, որի հետզհետե հրատարակումը կոչված է է՛լ ավելի նպաստելու հայ մշակույթի գանձարանի հարստացմանը և միշտ վառ պահելու նրանց երկնող հեղինակի հիշատակը:

---

[6] Հ. Ճ. Սիրունի, Նիքոլա Եորկայիի հետ, Անթիլիաս, 1972, էջ 7:



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԸՆՏԻՐ ԷՋԵՐ
(Եղիվարդ, Երուսաղեմ, 1973)

Երուսաղեմի պատրիարք Եղիշե արքեպս. Տերտերյանի վերջերս հրատարակած գիրքը հեղինակի բանաստեղծական ստեղծագործության ընդհանուր վաստակից ընտրաբար քաղված քերթվածների ժողովածուն է: Սրբազան պատրիարքը ժամանակակից ափլուռքահայ գրականության մեջ հանրածանոթ բանաստեղծ Եղիվարդն է և պատկանում է այն ընտրյալների թվին, որոնք իրենց տաղանդով ու արգասավոր գրչով արժանի և ուրույն տեղ են գրավում վերջին երեսնամյակի հայ հոգևոր կյանքի ստեղծագործական անդաստանում: Այսօր նրա զուտ բանաստեղծական երկերը, բացի արձակ գործերից, մոտ մի կես տասնյակի են հասնում, որոնք վկայում են բանաստեղծի անկեղծ ու անվերապահ սերն ու նվիրումը քերթողական արվեստին:

Ի՞նչն է եղել, այդարև, հոգեբանական շարժառիթը սույն գեղեցիկ հատորում բանաստեղծությունների այս վերահրատարակության: Սրբազան կրակի մոտալուտ հանգման մտավախությո՞ւն, թե՞ ստեղծագործական կյանքի մի նոր շրջանի վերահայտնություն:

Բայց բանաստեղծն ինքը հավաստիացնում է մեզ.

—Կլեցվի հոգիս հուշերով ջերմիկ,
Արևով անցյալ,
Կվերադառնան, խաղաղ, համրաքայլ,
Սերերս անանուն և անմխիթար,
Որոնց շունչին տակ
Երգերս ծաղկեցան հասակ առ հասակ,
Հոգիս՝ հարսնարան հին ծանոթներուն:

Եղիվարդը սույն հատորով վերադառնում է իր անցյալի հիշատակներին: Բայց դրանք դեպքեր ու դրվագներ չեն այնքան, որքան հոգեկան հույզեր ու ապրումներ, որոնք մեզ գալիս են բանաստեղծի ներքին ապրումների ու զգայնությունների ճանապարհով:

Հին բանաստեղծություններից կազմված այս նոր հատորի սկզբում զետեղված բանաստեղծությունը, որ մի տեսակ անուղղակի պատասխան է մեր հարցադրումներին ու տարակուսանքներին, հեղինակը վերնագրել է «Վերաբաց»: Նշանակում է՝ նա վերաբացի՛, վերածաղկմա՛ն ցնծություններն է ապրում կյանքի այն հանգրվանում, ուր ուրիշներ իրենց հաշիվները փակած են համարում: Այս առումով հատորը թեպետև գալիս է անցյալից, բայց շեշտո՛ւմ է ներկան: Եվ բանաստեղծը անցյալն ապրում է ներկայի մեջ:

—Սակայն, ո՞վ հրաշք,
Ջեռք մը անծանոթ խորն իմ հոգիին,
Կվառե նորեն կանթեղներ հազար,
Իրարու կուգան անցյալն ու ներկան,
Ինձի կթվի թե պարմանն եմ այն,
Ուժեղ ու կայտառ,
Որ տենչանքներու դուռնեն ոսկեսար,
Այն հին օրերուն կմտներ աշխարհ:

Այսօր ավելի քան երեսուն տարիների մի անջրպետ է բաժանում մեզ այն օրերից, երբ Եղիվարդը իր բանաստեղծությունների անդրանիկ գրքով («Մագդաղինեն մեղրամոմե») գրական հրապարակ էր իջնում: Նա չէր գալիս, հարկավ, որպես մի նոր ու անծանոթ անուն, այլ որպես կազմավորված ու հասունացած մի բանաստեղծ, որն արդեն որոշ համբավի էր հասել «Սիոն» ամսագրի

ու նոր մուտքի-էջերում հրատարակված իր բանաստեղծություններով: Նշանակալից է սակայն, որ այս նոր ու ինքնատիպ բանաստեղծի մուտքը տեղի ունեցավ առանց ձայնի

ԸՆՏՐ ԷՋԵՐ

ու ցույցի, բայց ինքնավստահ ու վճռական, նման այն քուրմի մուտքին, որն արդեն ընվաճել է տաճար մտնելու և աստվածներին խնկարկելու իրավունքները: Դժբախտաբար այն ժամանակ լրագրական մի քանի ընթացիկ գրախոսականներ միայն լույս տեսան, որոնց մեջ նույնիսկ հանգամանավոր ստորագրություններ քաղաքավարական հյուրընկալությամբ դիմավորեցին այս մեծ բանաստեղծի մուտքը: Հրապարակի գրական մամուլը չկարողացավ ըստ արժանվույն զբաղվել ու համապատասխան գնահատանքի արժանացնել նրան: Այս տեսակետից իրավացի էր Օշականը, երբ Եղիվարդի երկրորդ հատորի («Խորտակման գիշերներ») սկզբում գրած իր հակիրճ առաջաբանի մեջ նշում էր. «Ընդ կարգ մը բաներ առաջին հատորիդ շուրջ, մեծ մասով հեռու և օտար բաներ: Մի՛ ցավիր: Կարգ մը մարդոց գիրն է ասիկա—գլխիվայր հասկցվիլ»:

Եվ իսկապես: Այս տարաշխարհիկ բանաստեղծը իր նյութերի նախասիրություններով ու արվեստի յուրահատկությամբ, ձևի ու բովանդակության գերազանց ինքնատիպությամբ դարս էր գալիս ժամանակակից-ջանի ճաշակի ու ըմբռնողության սահմաններից: Գալթակղանի հոգեբանությունը և մեր պատմական ճակատագրի հանգամանքները բռնցել էին արվեստի մեր ըմբռնումների վրա, և ազգային մտահոգությունների վրա կենտրոնացված ձգտումները գրավել էին մեզ ամբողջապես: Մյուս կողմից, թեքեյանական արվեստի համատարած ու ճանրաճանր տիրապետությունը, Օշականով թևաբրկված, բանաստեղծության գեթ կատարողական ձևի այլամերժ մի գահակալություն էր հաստատել նոր կյանքի կենդանի արտահայտությունների վրա: Ամեն մի երիտասարդ, որ գրիչ էր վերցնում, թեքեյանական վաշտին իր անդամակցությունն էր ստորագրում անվրեպ: Մոռացվել էր անգամ Վարուժանի պես մեծ ու բարձրաթռիչ մի բանաստեղծ, որի արվեստի ոլորտները հոգիների վրա քիչ տարածություններ էին ընդգրկում: Մեծարենցի պես մի չքնաղ երիտասարդի լուսավոր արվեստի կախարդանքը քչերի ստեղծագործություններում իր արտահայտությունն էր գտնում: Մեկ խոսքով՝ իշխում էր Թեքեյանը, ոչ անշուշտ անարժանաբար, բայց միահեծան, որի հմայքին ավյուռքի բանաստեղծների այս անձնատվությունը գինն էր կարծես մեր հոգեկան չքավորության: Ահա թե ինչու Թեքեյանի շնչով պարուրված մթնոլորտին մեր զգայարանների ընտելացումը, որ բնականորեն կազմելու էր նաև մեր գրական ընկրագիրը, դյուրավ պիտի չկարողանար հաղորդվել տարակերպ զգայնությունների հետ:

Եղիվարդը բերում էր իր նոր ձայնն ու շեշտը, նոր գույներն ու երանգները, նոր գծերն ու պատկերները, իր նոր տեսիլներն ու երազները: Նա հայտնվում էր որպես խորապես բանաստեղծական ինքնատիպ զգայնություն:

Ի՞նչ են Եղիվարդի երգած նյութերը: Այսինքն՝ ի՞նչ է ընթերցողին իր «ունեցած ընելիքը»:

Ավետարա՛նը: Կյա՛նքը: Մա՛րդը: Անցյա՛լը: Մանկությա՛ն հիշատակները: Հայրենի՛քը: Հայրենի գյո՛ղը, բնությո՛ւնը: Մեկ խոսքով այն ամենը, ինչ մարդու ներքին աշխարհի խռովքներն ու տագնապներն է կազմում:

Ավետարանը, իհարկե, ոչ միայն կրոնական կենդանի կյանքի ու հավերժական ճշմարտությունների հոգեզմայլ մի մատյան, այլև ինքնին բարձրագույն արվեստի մի չքնաղ գիրք, մշտական ներշնչումների շտեմարան է բանաստեղծի համար: Քարոզիչ քահանան մեզ մատուցում է այն որպես կենդանի կյանքի կանոնների գիրք: Աստվածաբան գիտնականը մեկնաբանում ու

նատուրալիզմում է այն, իսկ արվեստագետ բանաստեղծը՝ **վերստեղծում**: Ո՛չ թե ավելացնում կամ պակասեցնում է, ինչ որ անհնար է, այլ իր մտահղացումներն անդրադարձնում է նրա պրիսմակից: Նշանակալից է, որ Եղիվարդը Ավետարանին չի դիմում առ ի պաշտոն: Ընդհակառակը, եթե ուզում եք, նա հանախ մի կողմ է թողնում եկեղեցական ոչեմի հարկեցուցիչ պայմանադրականությունները, որպեսզի կարողանա ավելի մոտիկից, ավելի ազատ ու անկաշկանդ զգալ ու ապրել մարդուն ու բացահայտել նրա ներքին բարդ ու հակասական վիճակները: Այս տեսակետից բանաստեղծն Ավետարանում է գտնում կյանքի տագնապների ու հոգու տառապանքների բացատրությունները: Բանաստեղծը «Մեղքի շուշաններ» է անվանել ավետարանական նյութերի հերոսուհիներին: Խորապես խոսուն մի վերնագիր, որ թելադրում է **անմեղ մեղավորների** կամ **մեղավոր անմեղների** հավիտենական գոյությունը: Վարուժանի մոտ «Խաբված կույսեր» են նրանք «Գողգոթայի ծաղիկներ» ընդհանուր խորագրի տակ, մեղքի ու մեղանչումի աղետահոտ տառապյալներ, որոնք սակայն այնքան մեղավոր չեն, որքան իրենց դատապարտող մարդիկ ու օրենքները: Նրանք պարզապես անմեղ զոհերն են իրենց դաժան դահիճների, որ բուն մեղավորներն են: Ինչքան էլ նրանք թաթախված են մեղքի տիղմի մեջ, այսուհանդերձ, շուշանների նման մաքուր են ու գեղեցիկ, որովհետև նրանց մեղանչումները իրենցից չեն բխում ու իրենց ներքին մղումի արգասիքը չեն: Եթե սիրտը չի բաժանում ձեռքի կատարած չար գործը, և եթե մարդու գործած հանցավոր արարքներին նրա ներքին բարոյականությունը մասնակցություն չունի, ապա նա անմեղ է ու արդար: Եվ երբ մարդը գիտակցում է իր մեղքը, այդ իսկ որպեսզի նա դադարում է մեղավոր լինելուց: Ահա Մագդաղինեն, Սամարուհին, Սալոմեն և ուրիշներ: Բանաստեղծը բաց է անում ավետարանական դրվագների ծալքերը և նրանց յուրաքանչյուրից ներս իր հզոր երևակայությամբ ցույց է տալիս մեղքի ու անմեղության, հանցանքի ու զղջման, երկրի ու երկրնքի ընդմեջ փոխնիփոխ ձգվող ու քաշքշվող մարդկային հոգու եղերական դրաման:

Ամեն մի բանաստեղծություն պտտվում է քրիստոնեական մի հիմնավոր գաղափարի ու գլխավոր մի բարոյականության շուրջ: Նրա գործողություններն ընթանում են հոգու երկու հակադիր եզրերի՝ աստվածային ոյորտների ու մարդկային տահմանների իրերամերժ բախումներով: Առաջինի տակավ տիրապետումով երկրորդի դիրքերի վրա պայմանավորվում է այն լուսավոր ձրգումը, որ մարդու ազատագրությունն է **ինքնիրենից ու աշխարհից**: Որո՞նք են, սակայն, այն ներգործող ազդակները, որ մարդուն վերադարձնում են աստվածային էակի իր կոչմանը: Սիրո, գութի, ներման, կարեկցանքի, բարության ու քաղցրության բոլոր այն տենչանքները, որոնք ժամանակաշրջանի բութ ու անգութ աշխարհի ճիրանների տառապող մարդու կարոտներն են եղել:

—Զեզմե անմեղն է՛ն առաջ
Նետե թող քարն այս կնոջ:

Դատապարտության բոլոր օրենքների վրա՝ ահա՝ գերագույն դատաստանը: Մարդը բերվում է իր սեփական հոգու պատկերի առջև, ինչպես հայելու դիմաց, այնտեղ տեսնելու իր բովանդակ մեղավորությունը, ուստի և դատելու ու դատապարտելու իր իշխանության անիրավասությունը: Դա մեծագույն վնա՛ռն է, պատգա՛մը, խի՛ղճը զգաստացնող ու սի՛րտն իր անզգայության թմբիրից սթափեցնող ձայնը: Նախ քննի՛ր անձդ, հետո դատի՛ր ուրիշին: Նախ տե՛ս քո աչքի գերանը, հետո ուրիշի աչքի շյուղը: Չէ՞ որ նույնքան և ավելի դու ինքդ ենթակա ես դատապարտության: Ահա՛ արդարության չափանիշն ու մեղադրական օրենսդրությունը: Ահա՛ օրենքի ու օրինաց գրքերը տոմարագիտական մատյանների վերածող մարդկային խղճի ու սրտի մինչև թաքուն խորքերն ու խորշերը թափանցող ահեղ նայվածքը, որ ցնցում է իրենց մեղքերին ճարակ դարձած ամբոխների ամբոխային կրքերն ու սանձահարում նրանց տարերային կատաղությունը:

Քարերն հատ հատ ինկան վար:

Ի՞նչ է, սակայն, այս օրենքի տակ գործող սկզբունքը, որից գործունեության ոգի ու ներշնչում է ստանում համոզումը:

Մարդն ավելի է մեղքեն...

Եվ ի՞նչ է մնում այնուհետև անել այն մեղավոր կնոջը, որ մի կարճ խոսքով, մի բառհրովարտակով մահից դեպի կյանք է վերադառնում: Կինը ոչինչ չունի փոխհատուցելու այն գերագույն շնորհը, որ կյանք է պարգևում իրեն: Մնում է նրան միայն մեկ բան.

—Գնա՛, ալ մի՛ մեղանչեր...

Այս անհնախընթաց ու անօրինակ ներումի ու գթասրտության առջև, որոնց մասին նա երևակայել իսկ չէր կարող, մի հանկարծակաև բեկում է առաջանում նրա մեջ, հզոր թռիչքով մի անջատում իր էությունից՝ մի նոր էության ի խնդիր, ու ծնկի գալով հերարձակ ու լալահառաչ՝ դիմում է Վարդապետին.

—Մեռեմ անցած կրվիս
Դուն՝ ներումի Վարդապետ,
Քեզ փնտրեցի օրերով,
Ժամբաներուն մեջ տրտում.
Երազեցի ես քեզի,
Երբ արևը կրանար
Ժապավենն իր ոսկեգույն
Լրնին վրա Գալիլիո:
Երբ հասկերը նազանքով
Կօրորվեին զեփյուռեն,
Եվ ձիթենին կհևար
Գորշ հեշտությունն իր սրտին:
Քեզ փնտրեցի օրերով
Ոսկեձեղուն հարկերու
Սրահներուն մեջ փարթամ,
Երբ գարշանքեն մարդերու՝
Հալածական, խենթացած,
Կորոնեի ապաստան
Սիրտ մը ներման ընդունակ.
Դուն չկայի՞ր, չկայի՞ր:

. . . . . .

Մեղքերի թողության տակ սրբված ու մաքրված է կինը, և նրա սիրտը գարնանային առավոտյան արևին բացվող ծաղկե բաժակի պես ցնծապատար՝ խայտում է այդ գիտակցությունից:

—Ներումն ոսկին է որով
Փրկությունը կգնվի·

. . . . . .

Արցունքի շիթ մը միայն,
Բավ է փշրել քար առ քար,
Մեղքի լեռները տիտան:

Կասկածելու հարկ չկա բոլորովին: Ներումի այս աստվածային ուժի մասին շուտով մեզ համոզելու է գալիս «Սալոմեն»:

Հիսուսի կերպարի մոտ անա Հովհաննես Մկրտչի՝ Հորդանանու մարգարեի կերպարը: Երկու լուսավոր դեմքեր, մեղքի երկու նշանավոր հակառակորդներ: Բայց ինչքա՞ն տարբեր են նրանք իրենց խորքով: Խստակյաց ու խստակենցաղ մարգարեն միայն անեծք ու լուտանք ունի բոլոր մեղավորների ու մեղանչողների համար, որոնց սպառնում է պատժի ու պատուհասների վրիժառությամբ:

—Եվ վա՛յ ձեզի, դուք մողեզի և իժերու
Պիղծ ծընունդներ,
Ձեր կեղծիքին մեջ մուշտակած՝
Մեղքերը ձեր մետաքսահյուս:
Ան որ կուգա,
Առնե պիտի լեզուն բերնեն
Ձեր բոլորին,
Ինչպես փրտած մրսի կտոր
Ձայն նետելու գազաններուն:

. . . . . .

—Թող անիծվին ու քար դառնան,
Արգանդները պիղծ կիներուն:

Հովհաննես մարգարեն չարիքի հանդեպ իր անհաշտ ատելության մեջ զայրագնած՝ չհասկացավ, ավա՜ղ, որ չարիքը չարիքով չի վերանում: Վախի ու սարսափի սպառնալիքները խաղաղության ու հաշտության երաշխիքներ չեն երբեք, այլ միայն ընդարմացնում են հոգին ու խիղճը՝ աղասերում: Ուստի Հովհաննեսի խոսքերը, որ խիստ էին (բայց ոչ՝ չար), չկարողացան արմատ գցել Սալոմեի սրտում, այլ, ընդհակառակը, վիրավորեցին նրան, գրգռեցին ու հեռացրին իրենից: Անա թե ինչո՞ւ Սալոմեն իր և իր մոր նկատմամբ եղած անարգանքի դիմաց համակվում է ցասումով ու մտածում միայն վրիժառու լինել: Վրեժ, որ մղձավանջային պատկերների հանախանքով հալածում ու փոթորկում է նրա հոգին:

—Ափսեի մեջ արյունաներկ
Գլուխ մարդու
Գոց աչքերով:

Հանախ չարիքը մեր մեջ, մեզանից անկախ, մարդկանց ու շրջապատի ապիրատությունից է ծնվում ու մեզ դարձնում մեր զոհը. Հիսուսի քաղցրությունն է պետք, անհուն ներողամտությունը, որպեսզի Մագդալինեն փրկվի, մինչ Հովհաննեսը իր դաժան ու սուր լեզվի խայթոցներով ակամա կորըստյան է մատնում Սալոմեին: Ճիշտ է, վեհ է հնչում մարգարեի խոսքի շեշտը, և հուզիչ է մեղքի դիմաց նրա մաքրության ու անարատության երազը: Բայց նա չկարողացավ բարձրանալ աստվածային ոլորտներին, որ Հիսուսի սահմաններն էին: Նա երբեք չունեցավ ներումի ու ներողամտության զգացումը, որ մարդու հանդեպ անհուն սիրուց է բխում: Անա թե ինչու Հիսուսը յոթն անգամ յոթանասուն ներել էր պահանջում փրկելու համար մեղավորներին:

Եվ վերջապես, անա, «Սամարուհին» խոր ու թելադրական բանաստեղծությունը: Կերպարն իր անմեղությամբ ու միամիտ գեղեցկությամբ գալիս է ամբողջացնելու իր նախորդ հերոսուհիներին միևնույն ճակատագրականությամբ:

—Դուն քանի՞ անգամ,
Մարդոց սիրտն ի վար
Դույլ արձակեցիր, ով Սամարուհի,
Եվ ամեն անգամ, ջուրի փոխարեն,
Գրտար ափ մը տիղմ:

Եղիվարդի հերոսուհիները կրքերի, տենչերի և բուռն իղձերի կանայք են: Բայց և նրանք իրենց մեջ կրում են որքան մարմնական սիրո ծարավը, նույնքան նրա մեղապարտ վայելքներից փրկվելու երանավետ տենչը, այսինքն՝ ներքին մեղանչականության հակումները, միաժամանակ և նրանից մաքրվելու ու ձերբազատվելու բաղձանք-

ները: Որպես մի ու ոսկորի գոյակցություն հակամետ ենք մեկի, ուսկայն նույնքան և ընդունակ՝ իրականացնելու աստվածային սրբակյաց կյանքի կոչումը երկրի վրա («Միանձնուհին», «Նեղոսի լուտասը»):

«Անոնք որ չեն մեռնիր» վերնագրի տակ շարք կազմած բանաստեղծությունները բաղված են «Խորտակման գիշերներ» հատորից: Դրանք մեզ բերում են այլ մտահոգություններ դրսևորող մի ուրիշ աշխարհ: Մարդկային հոգու նոր երեսներ ցուցադրելու ձգտումով բանաստեղծը դիմում է այս անգամ պատմությանը, պատմական անցյալի դեմքերին, բայց միշտ ժամանակակից մարդու մի շարք կարևորագույն խնդիրներից թելադրված: Պատմական դեմքերի ու դեպքերի ուրվագծային շրջանակից ներս բանաստեղծը վերհիշումում է մտահղացումի մի նոր թեզան՝ նոր ապրումներ ու նոր խնդիրներ արծարծելու համար ժամանակակից մարդը հուզող հարցերի տեսանկյունից: «Ես Եհովան եմ այս գիշեր», «Ես Հուդան եմ այս գիշեր», «Ես Սողոմոնն եմ այս գիշեր», «Ես Արտավազդն եմ այս գիշեր» և այլն, որոնք ներկայացնում են իր հույսի ու հավատի, երազների ու պատրանքների մեջ կործանվող հավիտենական մարդու ողբերգությունները:

Ուշագրավ են «Տեսիլներ տրտում օրերեն» բանաստեղծությունները և «Անցորդը» հատորից քաղված քերթվածաշարքը:

Առաջինները վերարտադրում են բանաստեղծի կյանքի ձախորդ տարիների տխրությունները, հոգու դառնությունները ու հուսախաբությունները: Բանաստեղծը, հիասթափված կյանքից, մարդուց, ընկերոջից ու բարեկամից, երգում է անցյալի ուրախ օրերի ու ներկայի տրտմության ընդմեջ ալեբախ հոգու տվայտանքները: Նշմարելի է սակայն, որ այդ վիճակները ոչինչ ունեն իրենց մեջ ընկճված, նկուն և հուսահատ, որ նրանք արտահայտում են այս աշխարհի սուտ ու անցավոր բաների տառապանքը, որոնց խաբկանքով լի է եղել բանաստեղծի հոգին դեռ մինչև երեկ, բայց և որոնցից դատարկված այսօր՝ նա ողբում է նրանց ունայնությունը: Նշանակալից է, որ բանաստեղծը իր տրտմություններից մեկնում է դեպի կյանքի իմաստասիրություն, դեպի աշխարհաճանաչում: Մյուս կողմից, սույն քերթվածների տողերի տակ բաբախում է իր սկզբունքին նվիրված մարդու անպարտելիության գաղափարը: Մարդը կարող է հաղթվել, որ ուրիշ բան է բոլորովին, բայց մարդը բարոյապես չի պարտվում. ա՛յս է նշանագրելի միտքը: Բանաստեղծի ներքին կորովը մի անընկճելի ուժ ունի, պայքարելու ու պայքարի մեջ թեկուզ զոհվելու մի համարձակ ու անտեղիտալի պատրաստակամություն, որ նույնպես հաղթանակ է նշանակում.

—Տուր ինձի, ով Տեր, ուժ և քաջություն,
Քայել անվարան, ինչպես ուխտավոր,
Իր երազներու ճամբեն լուսավոր,
Որուն փուլթը չէ վերքերն իր բոլոր:

Եվ, վերջապես, «Անցորդը» դիվանից վերահրատարակված բանաստեղծությունները, ահա, գալիս են մեզ պատմելու հեղինակի անցած կյանքի, մանկության հիշատակների, հայրենի գյուղի ու գյուղական հուշերի սրտառուչ վերհիշումները, ապրումները, զգայնությունները՝ անդարձ օրերի կարոտավոր ու սրտահույզ շնչով քնարերգված: Եղիվարդի քերթվածները որքան էլ անձնական մոտիվներ շոշափեն, այս հատորում թե այլուր, միշտ էլ վերածվում են մարդկային համընդհանուր վշտի ու խռովքի:

Այսպիսով.

—Եղիվարդն ավելի քան իր երեսնամյա գրական-քերթողական գործունեությամբ ու նրա արդյունքներով մեզ ներկայանում է այսօր որպես սիրուքահայ բանաստեղծության այն մեծ ու կարկառուն դեմքերից մեկը, որի գրքերը բարեբախտաբար չեղան, Օշականի բացատրությամբ՝ «սկզբնական սրբազան ավիշին տարտղնումը»: Թվում է, որ Եղիվարդն արդեն փարատել է Վարպետի մտավախությունը, որով նա անհանգիստ էր ա՝ն փորձառությամբ, թե «տառապեր են քիչ մը ամեն ժամանակներու իրավ քերթողները, երբ ըսելե վերջ իրենց ըսելիքը, կհամառին տակավին մանրել իրենք զիրենք և հատորներ շարել իրարու ետևեն»: Եվ, ահավասիկ, ճշմարիտ ու արդար փաստն այն է այսօր, որ Եղիվարդը գրել է այն ժամանակ միայն, «երբ նոր աշխարհ մը զգացեր է իր գանկին տակ»:

Եվ, հիրավի, մենք տեսնում ենք, որ Եղիվարդը գրքից գիրք բերում է մեզ նոր մտահղացումների մի նոր աշխարհ, հետաքրքրությունների մի նոր տիեզերք, խոհի ու զգացման նոր ոլորտներ ու ոգեստեղծման նոր թռիչքների նոր հորիզոններ: Առանց մեկը մյուսին կրկնելու, նրա գրքերը, որպես միևնույն հոգու տարբեր էջեր, աստվածաշնչական ներշնչումներից մինչև հայրենասիրական, անձնական ու պարագայական ապրումները, հարազատ բխումն են մարդկային ներքին աշխարհի բարդ ու բազմապիսի վիճակների ու խորհրդասքող տագնապների:

—Արվե՞ստը:

Որպես առանձին բաղադրիչ տարր արվեստը գոյություն չունի ստեղծագործության էությունից անկախ: Արվեստն ինքն առան-

ծին տարազ չէ, այլ բնական մարմնառությունը ներքինից ելնող վիճակների։ Ինչքան էլ ուզում եք, գեղեցիկ ու գունազարդ հանդերձանքներ պատրաստեցեք աշխարհ եկող երեխայի համար, եթե երեխան ինքը հաշմ է ու տխեղծ, ոչինչ չի փոխվի։ Նրա առողջ ու կայտառ տեսքը, շարժումների աշխուժությունը, դեմքի պայծառությունն ու աչքերի քաղցրությունը, մի խոսքով՝ ո՞ղջ գեղեցկությունը, նրա էությունն իսկ է, այդ էության անկորնչելի ու անքաժան մասը, որ բերում է իր հետ՝ չգիտես ժառանգականության ինչպիսի գաղտնի օրենքներից ստացած։ Ուստի առանձինն չկա ձևի գեղեցկություն։ Գեղեցկությունն ինքը էության հատկանիշ է։ Այս իմաստով Եղիվարդը արտաքին գեղեցկության մտահոգությունը չունի, և նա գրեթե անտարբեր է բառի, խոսքի, չափի ու հանգի այլապես կարևոր պահանջների հանդեպ։ Արվեստի գեղեցկությունը Եղիվարդի բանաստեղծություններում, ինչպես ամեն մի ճշմարիտ ու իրավ բանաստեղծի մոտ, արտահայտվում է ներքինի արտաբխմամբ, հոգեկան պատկերների արտացոլմամբ, մի բան, որ ներքինի ու արտաքինի միության, միասնության անխզելի դաշնությունն է կազմում։

—Բանաստե՞ղծը։

Ահա այստեղ է Եղիվարդը անվերապահորեն արժանի մեր սերնդի գնահատանքին և անսակարկելի համակրանքին։ Ոչ միայն որովհետև նրա բանաստեղծությունները բերում են ձևի նորություն, պատկերների թելադրական ուժգնություն և ինքնատիպ ոճի գեղեցկություն։ Ոչ միայն որովհետև նրա «արտահայտությունը թարմ, գունեղ, կշռանուշ, ըրած է իր առաջին իսկ գրքով մեծ նվաճումներ» (Օշական), այլև գերազանցապես իր հուզաշխարհի խորքով, իր զգալու և ապրելու եղանակներով, իր զգայնությամբ։ Դժվար է բանաստեղծությունը սահմանել առարկայորեն հասկանալի մի տարազի մեջ։ Ի՞նչ է այն հեղանյութը, որ բառերի ներքին ուղիներից գալիս ու հոսում է մեր մեջ, լցնում մեր ջիղերն ու զգայարանքները ու մեզ առնում իր հմայքի տակ։ Ակամա օրորվում ես, տարուբերվում ներքուստ հնչող մեղեդիներից զգլխված։ Ամեն ինչ քո մեջ և քո շուրջը, երգ ու երաժշտություն դարձած, երգում է անբարբառ։ Ինչոսն էլ ուզենաս խույս տալ նրանից, անկարելի է, նա քո մեջ է, քեզանից անքաժան, հետապնդում է քեզ, հալածում ու մերթ հիվանդացնում։ Քո տխրության պահերին գալիս է թափառելու շրթունքներիդ վրա, երբ անորոշ ու անանուն կարոտներ բունսնում են հոգուդ, ու տրտմանուշ մի թախիծ պատում է հոգուդ ջինջ ու պայծառ երկինքը։ Նա գալիս է որպես ներքին գաղտնախորհուրդ կարոտների անվերծանելի բացատրություն։

Կարդացեք «Ես բնակիչ ամայքներու», «Պզտիկ տղա ոտքդ բոպիկ», «Դարձը» ու մանավանդ նրա երրորդ հատվածը և ասացեք, թե ինչո՞ւ տողերի ներքին ակոսներից հոսող հավերժական մրմունջը անծանոթ սարսուռի պես մտնում է մեր երակների մեջ, խառնվում մեր արյան կարկաչին ու գնում սրտի խորշերը՝ այնտեղ հնչեցնելու անմահական համանվագը։

—Արյուն իջեր է ոտքերուս,
Ցուրտ է գիշերն այս անծայր,
Քանի տարի ուղեկորույս,
Հին տեղս ինձի ետ չե՞ս տար։

. . . . . .

—Բայց սիրական, ցուրտ է, գիշեր,
Թևը կոտրած թռչունին,
Աչքերս լույսին չգոցված դեռ,
Ծոց մը տաքուկ ինձի տուր։

Տրտմանուշ այս շեշտը, այնքան բնական ու հարազատ, փոխանցվում է իրերին ու շրջապատին, բնությանը, պահին ու նրանց ևս օծում իր ապրումների բանաստեղծականությամբ։

Դժվար է, հարկավ, սույն հոդվածի նեղ սահմաններում ներկայացնել Եղիվարդի բանաստեղծական դիմանկարը ու համարյա անկարելի՝ սպառել նրա մասին բոլոր ասվելիքները։ Բայց, կարծում ենք, եկել է արդեն ժամանակը, երբ սփյուռքահայ գրական-քննադատական մտքի լավագույն ներկայացուցիչներից մեկը կխելամտի կանգ առնել Եղիվարդի գրական ու բանաստեղծական վաստակի վրա ու մի գեղեցիկ հատորում գիտական ուսումնասիրության անկողմնակալ ոգով ու մեթոդով մեզ ներկայացնել նրա բանաստեղծությունների բազմադիմի արժանիքներն ու գեղեցիկ հարդստությունները։

ԳԵՎՈՐԳ ՀԱՏԻՏՅԱՆ



ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ «ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ*
(1944—1973)

4659. ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Կոմիտաս վարդապետի անձի և գործի մասին: 1969, դեկտ., էջ 30—33:

Բովանդ.՝ Տիգրան Կամսարական:—Արշակ Չոպանյան:—Գարեգին Լևոնյան:—Դերենիկ Դեմիրճյան:—Սպիրիդոն Մելիքյան:

Նկ.՝ Կոմիտաս վարդապետը մի խումբ գրողների և արվեստագիտների հետ:—Դիմաքանդակը՝ հանված մահվան օրը, նկարիչ՝ Հ. Աճեմյանի ձեռքով:—Մահարձանը:

4660. ՓՐԿՉԻ Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Ճվիրապետական աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1969, ապրիլ, էջ 19—21:

4661. ՓՐԿՉԻ Հրաշափառ և Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1969, ապրիլ, էջ 7—18:

4662. ՖՐԱՆՍԻԱՅԻ ուխտավորները Մայր Աթոռում: [300 ֆրանսիացի կաթոլիկ հավատացյալների խումբը, գլխավորությամբ՝ Հայր Ռիկեճի]: 1969, մայիս, էջ 8—10:

Նկ.՝ Վեհափառ Հայրապետը ֆրանսիացի ուխտավորների խմբի հետ:

1970

4668. ԱԲԵՂՅԱՆ ՄԱՆՈՒԿ.—Առաքել վարդապետ Դավրիժեցի: [Կյանքի, գործունեության մասին]: 1970, մայիս, էջ 15—18:

Արտատպված՝ Աբեղյան Մ.—«Հայոց հին գրականության պատմություն», գիրք 2-րդ, էջ 442—444, 448, 449—450, 451:

4664. ԱԴԱՄՅԱՆ ԱՎԵՏԻՔ:—Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի օրագիրը և հուշերը: 1970, նոյեմբ., էջ 50—55:

4665. ԱԶԳԱՑԻՆ քարերար Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան 100-ամյակի հանդիսությունը Մայր Աթոռում: 1970, հունվար, էջ 27—29:

Գալուստ Կյուլպենկյանի դիմանկարով: Ներդիր:

4666. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ ԳՈՀԱՐ:—Գրականության և արվեստի թանգարանում: 1970, փետրվար, էջ 38—42:

4667. ԱԶՆԱՎՈՒՐՅԱՆ ԳՈՀԱՐ:—Եռավոր Արմենի արխիվը: [1881—1938: Սփյուռքահայ հրապարակախոս, գրական գործիչ]: 1970, հոկտ., էջ 43—45:

4668. ԱՄԱՆՈՐԸ Հոգևոր ճեմարանում: 1970, հունվար, էջ 32:

4669. ԱՄԱՆՈՐԻ և Փրկչի Հրաշափառ և Սուրբ ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս, Նորին սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Եթովպիայի կայսր, Նորին վեհափառություն Հայլե Սելասիե Ա-ի միջև փոխանակված հեռագրերը: 1970, փետրվար, էջ 9:

4670. ԱՄԱՆՈՐԻ և Փրկչի Հրաշափառ և Սուրբ ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և Ճվիրապետական աթոռների ու առաջնորդարանների միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1970, հունվար, էջ 13—15:

4671. ԱՄԱՆՈՐԻ և Փրկչի Հրաշափառ և Սուրբ ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1970, հունվար, էջ 10—12:

4672. ԱՄԱՆՈՐԻ և Փրկչի Հրաշափառ և Սուրբ ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս, Նորին Սուրբ օծություն Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջույնի հեռագրերն ու գրությունները: 1970, փետրվար, էջ 10—20:

4673. ԱՄԱՎԵՐՋԻ հանդիսություն Հոգևոր ճեմարանում: 1970, հունիս-հուլիս, էջ 54—58:

4674. ԱՄԱՏՈՒՆԻ ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ:—Հոգևոր երգք Սահակայ եւ Մեսրոպայ: [Ուսումնասիրություն]: 1970, հոկտ-հուլիս, էջ 81—85:

Հրատարակվել է Մաշտոցի անվան Մատենադարանի Սենեքերիմ Տեր-Հակոբյանի արխիվից Սեդա Ավդալբեկյանի կողմից:

4675. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Վեհափառ Հայրապետի գահակալության տասնհինգերորդ տարեդարձին նվիրված հանդիսություն Մայր Աթոռում: 1970, նոյեմբ., էջ 28—30:

4676. ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ուսանողները Ս. Էջմիածնում: 1970, սեպտ., էջ 86—87:

4677. ԱՆԱՍՅԱՆ ՀԱԿՈԲ:—Առաքել Դավրիժեցի: [Կյանքի, գործունեության մասին]: 1970, մայիս, էջ 19—21:

Արտատպված Անասյան Հ.—«Հայկական մատենագիտություն» հտ. Ա, էջ 1144—1148, 1151—1152:

4678. ԱՆԹՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ:—Հայոց լեզվի պատմության և համեմատական քերականության ուսումնասիրումը սովետական շրջանում: 1970, նոյեմբ., էջ 56—67:

4679. [ԱՌԱՔԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎՐԻԺԵՑԻ]:—Հատվածներ «Պատմութիւն Առաքել վարդապետի Գավրիժեցւոյ» գրքից, աշխարհաբար թարգմանությամբ: Գրաբար բնագրից թարգմ.՝ Սամվել Անթոնյան: 1970, մայիս, էջ 36—39:

Բովանդ.՝ Թե ինչպես կամ ինչ պատճառով մեր

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1973 թվականի №№ Դ—ԺԱ-ից և 1974 թվականի №№ Ա—Ե-ից:

Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աջը և Էջմիածնի սուրբ Աթոռի քարերը Սպահանի տարաց:—Տեր Մովսեսի վարդապետ և կաթողիկոս լինելու և Էջմիածնի լուսանկարչ Սուրբ Աթոռի նորոգության մասին:—Անվանի վանքերի նորոգության և բարգավաճման ու մեծավաստակ եկեղեցիների շինության մասին:

4680. ԱՌԱՔԵԼ վարդապետ Դավրիժեցու մահվան 300-ամյակին նվիրված հանդիսությունն Մայր Աթոռում: 1970, մայիս, էջ 48—50:

Նկ.՝ Հոգևոր ճեմարանի ուսանողները, տեսչի գլխավորությամբ, Առաքել վարդապետ Դավրիժեցու շիրիմի մոտ:—Դավրիժեցու շիրիմը:

4681. ԱՎԱՐՏԱՆՈՑԻ բանավոր պաշտպանությունն Հոգևոր ճեմարանում: 1970, հունվար, էջ 37:

4682. ԱՎԱՐՏԱՆՈՑԻ բանավոր պաշտպանությունն Հոգևոր ճեմարանում: 1970, սեպտ., էջ 59—60:

4683. ԱՐԵՎՄՏՅԱՆ Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը Մայր Աթոռում: 1970, մարտ, էջ 13:

4684. ԲԱԳԱՏՅԱՆ Հ. Ս.:—Հովհաննես Իմաստասերի տոմարի շուրջը: 1970, մարտ, էջ 40—46:

4685. ԲԱՔՎԻ հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու երգչախումբը Մայր Աթոռում: 1970, մայիս, էջ 52—59:

Երգչախմբի լուսանկարը:

4686. ԲԵԼԲՈՒԴՅԱՆ ՍԱՆԴՐՈ:—Սահակ վարդապետ Ամատունի: [Կյանքի, գործունեության մասին]: 1973, ապրիլ, էջ 31—35:

Ամատունու դիմանկարով:

4687. ԲԻՑՈՎ ԱՆԴՐԵՅ:—Հայաստանի դասերը: [Գեղարվեստական ակնարկ Գեղարդի մասին]: 1970, դեկտ., էջ 12—18:

Բովանդ.՝ Գեղարդ: Դարբասներ:—Վերելք:—Գագաթը:—Փախուստ:

Նկ.՝ Ս. Գեղարդի վանքը:

4688. ԹԲՈՒՆԻԱԹՅԱՆ ԳՐԻԳՈՐԻՍ ԱՌԵՂԱ:—Ուխտի քարոզ: 1970, հունվար, էջ 25—26:

4689. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՇՆՈՐՀՔ ՎԱՐԴԱՊԵՏ:—Պահոց օրեր: 1970, հունվար, էջ 21—22:

4690. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ:—Նորահայտ վավերագրեր Երուսաղեմի հայոց պատրիարքարանի և ռուսաց արքունիքի փոխհարաբերությունների մասին: [Ուսումնասիրություն: Բնագրեր]: 1970, մարտ, էջ 26—32:

Բնագրեր՝ Ամենողորմ կայսր: Ստորագր.՝ Պետրոս արքեպիսկոպոս և պատրիարք Սրբոյն Երուսաղեմի հայոց: [1799 թ.]:

Սկ.՝ Արփիաքնցուդ լուսով ճանաչուէտ... [Նամակ Պավել Առաջինին և արտաքին գործերի նախարար կոմս Ալեքսանդրին]:

Հրապարակված են նույնատիպ երեք վավերագրեր:

Степенный и Честнейший Архиепископ Армянский Петр.

Нач. Грамоту Вашего Степенства от 5-го января...

Պատուաբեր եւ Ամենայարգալի Պետրոս Արքեպիսկոպոս Հայոց.

Սկ.՝ Նամակն Ձերոյ Ցարգությեան յունուար ամսոյ սոյնոյ ամի...

Առ գերազանց և պայծառափայլ Ալեքսանդր գրաֆ Արտաքին իրաց կայսերական Հանդիսավեհության կայսրն ամենայն Ռուսիայի: Գթանագոյն Տէր:

Սկ.՝ Ջտիրական ողջոյնն եւ զառատագեղ օրհնությունն...

Степенный и Честнейший Архиепископ Армянский и Титулярный Патриарх Святого Града Иерусалима Петр.

Нач. Почтенное Ваше писание к Его Светлости канцлеру...

Պատուաբեր եւ Ցարգելագունեղ Պետրոս Արքեպիսկոպոս Հայոց եւ Պատրիարք Սուրբ Քաղաքին Երուսաղեմայ:

Սկ.՝ Ցարգոյ գրութիւն Ձեր առ Նորին Լուսափայլ ազնուս կանցլերն ի հինգերորդ...

4691. ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ:—Սրբոց Ղևոնդյանց տոնը Մայր Աթոռում: 1970, փետրվար, էջ 21—23:

4692. ԳՅՈՒՆՅԱՆ ՀԱԿՈԲ ՍԱՐԿԱՎԱԳ:—Ժամանակագրություն Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի: 1770—1857. 1970, սեպտ., էջ 47—51:

Նկ.՝ Ներսես Ե Աշտարակեցու տապանաքարը:—Ներսես Ե Աշտարակեցին ի գլուխ Մայր Աթոռի միաբանության և հայ կամավորական գնդի դիմավորում է ռուսաց զորքին:—Ներսես Աշտարակեցու շուրջառը:

4693. ԴԻՎԱՆ ՄԱՑՈՐ ԱԹՈՌԻ:—Ծանուցում: [Արարատյան թեմից Հովհաննես քահանա Կարապետյանին կարգալույծ հայտարարելու մասին]: 1970, մարտ, էջ 12:

4694. ԴԻՎԱՆ ՄԱՑՈՐ ԱԹՈՌԻ:—Հաղորդագրություն: [Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ի նախաձեռնությամբ, Չեխոսլովակիայից 82 ռեգիստրանոց, երգեհոնի ստացման մասին: Տեղադրվելու է Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճում: Ստացվել են նաև երկու փոքր երգեհոններ, Մայր Տաճարի և Վեհարանի համար]: 1970, մարտ, էջ 10:

4695. ԴԻՎԱՆ Մայր Աթոռի:—Հաղորդագրություն: [Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի պաշտոնական այցելությունը Հռոմ Պավլոս Զ Պապին]: 1970, հունիս-հուլիս, էջ 44:

4696. ԴԻՎԱՆ Մայր Աթոռի:—Հայտարարություն: [Նախկին եպիսկոպոս Վազգեն Օհանջանին կարգալույծ հայտարարելու մասին]: 1970, հունիս-հուլիս, էջ 46:

4697. ԴԻՎԱՆ Մայր Աթոռի:—Հաղորդագրություն: [Նոր Ստակարանի (չորս Ավետարաններ և գործք առաքելոց արևելահայերեն նոր հրատարակության լույս ընծայման մասին: Գրաբար բնագրից արդի արևելահայերենի են վերածել՝ Արթուն Հատիտյանը, Պարգև Շահբազյանը, Սամվել Անթոնյանը]: 1970, հունվար, էջ 20:

4698. ԴԻՎԱՆ ՄԱՑՈՐ ԱԹՈՌԻ:—Հաղորդագրություն: [Պավլոս Զ Պապի, 1969-ի սեպտեմբերի 28-ի հրավերով, Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի Հռոմ մեկնելու մասին]: 1970, ապրիլ, էջ 18:

4699. ԴԻՎԱՆ Մայր Աթոռի:—Հաղորդագրություն: [Պողոս Զ Պապի նվերը, հայոց առաքյալ ս. Բարթողիմեոսի աճյունը պարունակող մեծադիր խաչը Մայր Տաճարի եկեղեցական սրբությունների խորանում պահելու մասին]: 1970, օգոստ., էջ 53:

4700. ԴԻՎԱՆ ՄԱՑՈՐ ԱԹՈՌԻ:—Հայտարարություն: [Կարգալույծ Սարգիս Անդրեասյանի մասին]: 1970, մարտ, էջ 10:

4701. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ Վ. (ճարտարապետ):—**Երևանի Լենինի անվան հրապարակը:** 1970, ապրիլ, էջ 17—21:

Նկ.՝ Հրապարակը [վերակառուցման նախագիծ]:—Կառավարական շենքը:—Մի դրվագ կառավարական շենքից:—Հրապարակը [ներդիր]:

4702. ԵԳԱՆՅԱՆ Օ[ՆՆԻԿ] Ս.:—Գրիգոր Խալաթյանցի հայերեն ձեռագրերի հավաքածուն: 1970, մարտ, էջ 47—48:

4703. ԵԳԱՆՅԱՆ Օ[ՆՆԻԿ]:—Երնջակի Ս. Կարապետ վանքի հայերեն ձեռագրերի հավաքածուն: 1970, մայիս, էջ 56—59:

4704. ԵԳԱՆՅԱՆ Օ[ՆՆԻԿ]:—Կարապետ Հովհաննեսյանի հայերեն ձեռագրերի հավաքածուն: 1970, հունիս-հուլիս, էջ 112—119:

4705. ԵԳԱՆՅԱՆ Օ[ՆՆԻԿ] Ս.:—Մ. Բրուսսեի Էջմիածնի գրատան ձեռագրերի ցուցակը: 1970, դեկտ., էջ 50—54:

Բովանդ.՝ Ա. Համեմատական տախտակ Էջմիածնի գրատան Աստվածաշնչերի հին և նոր թվահամար-

ների։—Բ. Նույնի Ավետարանների հին և նոր թվահամարների։—Գ. Նույնի պատմագրական ձեռագրերի հին և նոր թվահամարները։—Մեծ Բանանց գյուղի Ս. Լուսավորիչ եկեղեցու հայերեն ձեռագրերի հավաքածուն։—Համեմատական տախտակ ձեռագրերի հին և նոր թվահամարների։—Ս. Քրիստափոր եկեղեցու հայերեն ձեռագրերի հավաքածուն։—Համեմատական տախտակ։

4706. ԵՂԱՆՅԱՆ Օ[ՆՆԻԿ] Ա.։—Մեսրոպ արքեպիսկոպոս Ամբատյանցի «Նկարագիր Շամախոյ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը։ [Ուսումնասիրություն և ձեռագրերի հին և նոր թվահամարների համեմատական տախտակներով]։ 1970, հունվար, էջ 45—48։

4707. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Հ[ՈՎՍԵՓ] Ս.—Ճախաքար վանքը կամ Ղոշավանքը և նրա վիմագիր արձանագրությունները։ 1970, ապրիլ, էջ 41—50։

Բովանդ.՝ Ա. Պատմա-աշխարհագրական հատուստ ակնարկ։—Բ. Վանքի կառուցվածքների՝ հուշարձանների պատմա-ճարտարապետական նկարագրությունը։

Նկ.՝ Ճախաքար վանք—Արևմտյան խմբի ընդհանուր հատակագիծը։—Ընդհանուր տեսարան արևելքից։—Ս. Կարապետ եկեղեցին արևելքից։—Նույնը՝ հյուսիսից։—Ս. Նշան եկեղեցին հարավ-արևմուտքից։

4708. ԵՊԻՍԿՈՊՈՍԱՆ վերջին ժողովի կողմից ընտրված հանձնախմբի գումարումը Երուսաղեմում, Հայոց պատրիարքարանում։ [1970-ի սեպտեմբերի 21-ին]։ 1970, նոյեմբ., էջ 40—41։

4709. ԵՐԵՎԱՆԻ կոտավարական տունը։ [Լուսանկար]։ 1970, նոյեմբ., էջ 1. նկարդիր։

4710. ԵՐԶԱՆԿԱՀԻՆՅԱՆ Տ. Տ. Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոս Ամենայն Հայոց։ [Դիմանկարը]։ 1970, սեպտ., էջ 1, նկարդիր։

4711. ԷՋԵՐ Ներսիսյան դպրոցի պատմությունից։ [Ներսես Աշտարակեցու ծննդյան 200-ամյակի առթիվ]։ 1970, սեպտ., էջ 41—46։

Նկ.՝ Ներսես Աշտարակեցին և Ներսիսյան դպրոցի դասախոսական կազմն ու 1903—1904 ուս. տարվա շրջանավարտները։

4712. ԹԱՀՄԻԶՅԱՆ ՆԻԿՈՂՈՍ։—Հոգևոր եղանակների կոմիտասյան կանխագույն գրառումների վերծանությունը։ [Ուսումնասիրություն, ձայնագրություններ]։ 1970, փետրվար, էջ 34—37, ապրիլ, էջ 36—40, հունիս-հուլիս, էջ 72—80։

Ձայնագրություններ՝ Հաիկ։—Ամեն ձայնս։—Հանուն Հաուն։—Տէր ողորմեա։—Դասքնը Արէական։—Տէր ողորմեա։ Տէր ողորմեա։ Տէր ողորմեա։—Կեցո Տէր, շնորհեա Տէր։—Եւ նոյն խաղաղութեան։—Եղիցի անուն Տեառն օրհնեալ։—Թագաւորեսցէ Տէր։—Փառք յարութեան քո Տէր։ Ամէն եւ ընդ հոգւոյդ քում։

4718. ԹԱՄԱՆՅԱՆ ՅՈՒ. Ա.։—Բջնի հուշարձանների վերանորոգումը։ 1970, ապրիլ, էջ 24—30։

Նկ.՝ Բջնի գյուղի մոտավոր հատակագիծը, արտատպվում է Ն. Տոկարսկու 1921 թ. հրապարակած գրքից։ Աստվածածին եկեղեցու հատակագիծը։—Աստվածածին եկեղեցու հարավային ճակատը վերանորոգումից առաջ։—Նույնը վերանորոգումից հետո։—Հյուսիսային ճակատը վերանորոգումից առաջ։—Նույնը՝ վերանորոգումից հետո։

4714. ԼԵՌ։—Առաքել վարդապետ Գավրիմեցի։ [Կյանքի, գործունեության մասին]։ 1970, մայիս, էջ 12—14։

Արտատպված՝ Լեռ—«Հայոց պատմություն», հտ. 2-րդ, էջ 266, 360—364։

4715. ԼՈՒՐԵՐ սփյուռքահայ կյանքից։ 1970, հունիս-հուլիս, էջ 114—116։

Բովանդ.՝ Բուլղարահայ թեմում։—Եթովպահայ թեմում։

Նկ.՝ Ադիս-Աբեբայի հայոց Գևորգոփ վարժարանի տեսչական և ուսուցչական կազմը 1969—1970 ուս. տարվա շրջանավարտների հետ։

4716. [ԿՈՒԺՆԵՎՍԿԻ ԿԱԶԻՄԻՐ]։—Թղթակցություն Հայաստանից։ [Հուշագրություն Էջմիածնի մասին]։ 1970, ապրիլ, էջ 22—23։

Արտատպված՝ լեհական «Քաղաքականություն» ամսագրի 1970 թ. հունվարի 3-ի համարից։

4717. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ։—Սահակ Պարթևին վերագրվող շարականները։ [Ուսումնասիրություն]։ 1970, հունիս-հուլիս, էջ 67—71։

4718. ՀԱԿՈԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ։—Ներսես Լամբրոնացու «Պատարագի մեկնությունը»։ [Ուսումնասիրություն]։ 1970, փետրվար, էջ 43—48։

4719. ՀԱԿՈԲՅԱՆ Պ[ԻՈՆ] Հ. (Պ. Տայեցի)։—Նյութեր Մակար Եկմալյանի կենսագրության մասին։ 1970, հոկտ., էջ 38—42։

Բովանդ.՝ Եկմալյանց։—Ս. Պետերբուրգի Հայ Լուսավորչական խորհրդին։—Բալակիրև Մ.—[Մ. Բալակիրևի կարծիքը Մ. Եկմալյանի մասին]։—Ռուբինշտեյն Ա. Գ.։—Բենիաբդ Ա.։—Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհրդին։—Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական մեծարգո խորհրդի անդամոց։ Պետերբուրգի հայ հայոց հասարակությունից խընդրանք։—Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդին։ Խնդիր։—Ջեկուցում Պետերբուրգի եկեղեցական հարգելի խորհրդին։ Մ. Գ. Եկմալյանից։—[Երեսուն խնդրագիր]։—Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիների խորհրդին։ Դիմում։ Ստորագր.՝ Մ. Եկմալյան (1887—1896)։

4720. ՀԱՅԱՍՏԱՆԸ երգերի մեջ։ [Բանաստեղծություններ]։ 1970, նոյեմբ., էջ 30—36։

Բովանդ.՝ Հովհաննես Թումանյան։—Հայրենիքիս հետ։—Վիկտոր Իսահակյան։—Է՞լ ջան հայրենիք։—Եղիշե Չարենց։—Ես իմ անուշ Հայաստանի։—Հովհաննես Շիրազ։—Երևան։—Համո Սահյան։—Երգ Հայաստանի։—Սիլվա Կապուտիկյան։—Մտորումներ ճանապարհի կեսին։—Գևորգ Էմին։—«Մենք, փո՞քր ենք այդ...»։—Պարույր Սևակ։—Հպարտ եմ ես։—Վահագն Դավթյան։—Հայրենիք։—Այիսա Կիրակոսյան։—Նամակ առ Հայաստան։

4721. ՀԱՅԱՍՏԱՆԻ առաքյալ Ս. Բարթողիմեոսի աճյունը պարունակող մեծադիր խաչի հանդիսավոր հանձնումը Մայր Տաճարին։ 1970, օգոստ., էջ 54—55։

Նկ.՝ Մասունքը։—Վեհափառ Հայրապետը օրհնում է հավատացյալ ժողովրդին ս. Բարթողիմեոս առաքյալի մասունքի խաչով։

4722. ՀԱՅՐ ՂԵՎՈՆԴ Ալիշանի ծննդյան 150-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում։ 1970, դեկտ., էջ 19—26։

Բովանդ.՝ Ս. պատարագ, հայրապետական ընդունել և հոգեհանգիստ Մայր Տաճարում։—Հոբելյանական հանդիսություններ Վեհարանում։—Ջեկուցում։—Գեղարվեստական բաժին։—Օրհնության խոսք։—Թիվի դիտում։

4723. ՀԻՊՈՐԱՊԵՏԱԿԱՆ կոնդակի հանդիսավոր հանձնում Լիսաբոնում Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության նախագահ դոկտ. Ժորժ Դ. Ա. Պերտիկանին։ 1970, հունվար, էջ 30—31։

(Գալուստ Կյուլպենկյանի ծննդյան հարյուրամյակի առթիվ)։

4724. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Փրկչի հրաշափառ Հարության տոնի առթիվ։ 1970, ապրիլ, էջ 14։

4725. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ հանդիսավոր սուրբ պատարագ Մայր Տաճարում, Փրկչի հրաշափառ ծնունդյան տոնի առթիվ։ 1970, հունվար, էջ 19։

4726. ՀԱՆԳԻՍ արվանապատիվ Տ. Գնել ավագ քահանա Մանտալյանի։ 1885—1970. [Սուչավա-Ռումինիա, մասնախոսական-կենսագրական]։ 1970, ապրիլ, էջ 51։

Գնել քահանայի դիմանկարով։

4727. ՀԱՆԳԻՍ գերաշնորհ Տ. Եղիշե եպիսկո-

պոս Սիմոնյանի: 1900—1970: [Մահախոսական-կենսագրական: Լոս-Անջելոս]: 1970, հոկտ., էջ 56:

4728. ՀԱՆԳԻՍ արժանապատիվ Տ. Հմայակ աւագ քահանա Տեր-Խաչատրյանի: 1895—1970. [Մահախոսական-կենսագրական: Լենինական]: 1970, սեպտ., էջ 68:

4729. ՀԱՆԳԻՍ արժանապատիվ Տ. Մկրտիչ աւագ քահանա Զորչոռիլի: 1889—1970: [Մահախոսական-կենսագրական: Ռուստավ]: 1970, հունիս-հուլիս, էջ 117:

Մկրտիչ քահանայի դիմանկարով:

4730. ՀԱՆԳԻՍ գերաշնորհ Տ. Շավարշ եպիսկոպոս Գուլումճյանի: 1908—1970: [Մայր Աթոռի միաբան: Մահախոսական-կենսագրական]: 1970, մայիս, էջ 54—55:

Շավարշ եպիսկոպոսի դիմանկարով:

4731. [ՀԱՅՑՑԱՆ ԱՐԹՈՒՆ, ԵՍԱՀԱՔՅԱՆ ԴԱՐԳԵՎ]:—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի [Վազգեն Ա] ուղերությունը արտասահման: 1970, օգոստ., էջ 12—52:

Բովանդ.՝ Վեհափառ Հայրապետի մեկնումը Հռոմ: Ժամանումը Միլանո:—Ժամանումը Հռոմ:—Ս. Պետրոս Մայր Տաճարում:—Պատմական հանդիպումը և ողջագուրումը Հռոմի սրբազան Պապի հետ:—Պաշտոնական ճաշկերույթ ի պատիվ Ամենայն Հայոց Հայրապետի:—Քահանայապետական հանդիսավոր պատարագ Ս. Պետրոս Մայր Տաճարում:—Ընդունելություն ի պատիվ Հայոց Հայրապետի:—Հանդիպում իտալահայ հանայնքի անդամների հետ:—Առանձին տեսակցություն:—Այցելություններ:—Վեհափառ Հայրապետը հրաժեշտ է տալիս Հռոմի Պապից:—Հայոց Հայրապետը Վենետիկի Ս. Ղազար վանքում:—Վեհափառ Հայրապետը դարձյալ Միլանոյում:—Հայրապետական հանդիսավոր պատարագ:—Այցելություններ:—Վեհափառ Հայրապետը Լիոնում:—Դեսինում և Վալանսում:—Մարսելում:—Հայրապետական պատարագ:—Այցելություններ:—Վեհափառ Հայրապետը Մոնակոյում և Նիցցայում:—Լիսաբոնում:— Դարձյալ Փարիզում:—Ողջերթի մեծ ընդունելություն:—Հայրապետական պատարագ:—Վեհափառ Հայրապետը վերադառնում է Մայր Աթոռ:

Նկ.՝ Ս. Պետրոս Տաճարում միատեղ աղոթքի ծրագիր:—Հիշատակ սրբուհի Թերեզա Կուդերի կանոնականացման արարողությունից ս. Պետրոս տաճարում:—Հռոմ Պրիսչիլյան գետնափոր դամբարաններ:—Հռոմեական անտիկ շրջանի կոթող՝ Հայաստանի դեմ հռոմեացիների մղած պատերազմների առթիվ:—Սիգիստինյան մատուռ, Վեհափառ Հայրապետը կարդում է իր խոսքը:—Ս. Բարթուղիմեոս առաքյալի մասունքի վկայագիրը:—Սիգիստինյան մատուռ մեջ միատեղ աղոթքի պահ:—Հրաժեշտի պահ Վատիկանում:—Հռոմ, Վենետիկ, Վեհափառ Հայրապետը Լոնդոնյան վարժարանում:—Վենետիկ, Ս. Մարկոսի հրապարակում:—Պողոս Զ Պապը և Ամենայն Հայոց Հայրապետը օրհնում են հավատացյալ ժողովրդին Ս. Պետրոս տաճարում:—Վենետիկ—Վեհափառ Հայրապետը Մուրադ-Ռափայելյան վարժարանի ուսանողության հետ:—Հայկական ոսկեձույլ խաչ. Վեհափառ Հայրապետի ճվերը սրբազան քահանայապետին:—Մենծդիր Նոտարեկ սրբանկար, սրբազան քահանայապետի ճվերը Ամենայն Հայոց Հայրապետին:—Վենետիկ, Մուրադ-Ռափայելյան վարժարանի երգչախումբը:—Ստորագրում հանձնող հայտարարության: Սրբազան Պապը Ամենայն Հայոց Հայրապետին է հանձնում Հայաստանի առաքյալ Ս. Բարթուղիմեոսի մի մասունքը:—Վեհափառ Հայրապետը Փարիզի ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում ողջունում է հայրապետական պատվիրակ տ. Սերովբե արքեպիսկոպոսին:—Մարսելում. ողջույնի խոսք տ. Հակոբ վարդապետ Վարդանյանի: Այֆորվիլում. քաղաքապետի հետ դեպի Կոմիտասի անվան փողոցը ուղղվելիս:—Այֆորվիլ. Կոմիտասի անվան փողոց:—Լիսաբոն. Վեհափառ Հայրապետը նախագահում է հանդիպումը: Պերտիգանը Գալուստ Կյուլպենկյանի արձանի առաջ:—Աստվածամայր. Մոնսենյոր Շամ (Դուպա եպիսկոպոսի ճվերը:—Հ. Ղևոնդ Ալիշանի ճկերը. ճկեր Մայր Աթոռին:—Լիսաբոն. Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության պալատում Վեհափառ Հայրապետին ողջունում է դոկտ. Պերտիգանը:—Պորտուգալիա. Վեհափառ Հայրապետը Բաթալիա վանքի բակում:—Վեհափառ Հայրապետը և Պորտուգալիայի պատրիարքը աղոթում են Ֆաթիմայում:—Պորտուգալիա. Բաթալիայի վանքը (ԺԴ դար):—Վեհափառ Հայրապետը Ֆաթիմայում խաչիկներ է բաժանում պորտուգալացի ուխտավորներին:—Հայրապետական այցելության առթիվ արտասահմանյան մամուլի արձագանքներ:

4732. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Առաքել վարդապետ Դավրիժեցի: Խմբագրական: [Մահվան 300-ամյակի առթիվ]: 1970, մայիս, էջ 6—7:

4733. ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ:—Ավագ տոները: [Եկեղեցական]: 1970, դեկտ., էջ 8—11:

4734. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Եպիսկոպոսաց ժողովից հետո: Խմբագրական: [1969-ի սեպտեմբերի 27—հոկտեմբերի 2-ի ժողովի մասին]: 1970, հունվար, էջ 6—8:

4735. ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ:—Հայ Այբբաթը և իր հերոսամարտը: [Ինքնապաշտպանության 50-ամյակի առթիվ]: 1970, մարտ, էջ 20—25:

Նկ.՝ Այբբաթի հայոց Ս. Աստվածածին Մայր եկեղեցին:

4736. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Հոբելյանական հանդիսություններ Մայր Աթոռում Սովետական Հայաստանի հիսնամյակի առթիվ: 1970, նոյեմբ., էջ 18—28:

Բովանդ.՝ Հանդիսավոր նիստ Վեհարանում:—Բացման խոսք:—Ջեկուցում:—Ողջույնի խոսքեր:—Վեհափառ Հայրապետի խոսքը:—Գեղարվեստական բաժին:—Հանդիսավոր ս. պատարագ և գոհաբանական մաղթանք:—Հայոց Հայրապետի խոսքը:

Նկ.՝ Երևան. բազմահարկ բնակելի շենք:—Լենինական. տեսարան գլխավոր հրապարակից:—Սևան. Աղթամար հյուրանոցը:—Երևան. Կամուրջ Հրազդան գետի վրա:

4737. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Հավատի և հայրենասիրության վկաները: Խմբագրական: [Ղևոնդյանց տոնի առթիվ]: 1970, փետրվար, էջ 6—7:

4738. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Հարության խորհուրդը: Խմբագրական: 1970, մարտ, էջ 8—4:

4739. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Հոգևոր հունձ: Խմբագրական: [Ս. Ստեփանոս Նախատարկավագի տոնի օրը Հոգևոր ճեմարանի հինգ շրջանավարտների սարկավագական ձեռնադրության մասին]: 1970, դեկտ., էջ 6—7:

4740. ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ:—Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և վերածնված Հայոց աշխարհի հիսնամյակը: 1970, նոյեմբ., էջ 8—17:

Նկ.՝ Երևան. Համայնապատկեր:—Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրերի Մատենադարանը:—Պոլիտեխնիկական ինստիտուտի շենքը:

4741. ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ:—Ցաղգաս նորոգութեան յուսակաւորոց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: [Առաքել վարդապետ Դավրիժեցու մահվան 300-ամյակի առթիվ]: 1970, մայիս, էջ 22—85:

Բովանդ.՝ Մովսես Գ. Տաթևացի (1629—1662):—Փիլիպպոս Ա Աղթակեցի (1633—1655):—Հակոբ Դ. Ջուղայեցի (1655—1680):

Նկ.՝ Մի մասունք Առաքել վարդապետ Դավրիժեցուց: (Անհնագործ վանաս, 17-րդ դար):—Հոգեհանգիստ Առաքել վարդապետ Դավրիժեցու գերեզմանի վրա:

4742. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]:—Ներսես Աշտարակեցի (1770—1857). Խմբագրական: 1970, սեպտեմբեր, էջ 6—8:

4743. ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ:—Ներսես Ե Աշտա-

բակեցի։ (1770-փետրվար 19—1867 փետրվար 18)։ [Ծննդյան 200-ամյակի առթիվ]։ 1970, սեպտ., էջ 22—40։

Բովանդ.՝ Կյանքն ու գործունեությունը։—Ներսես Աշտարակեցին առաջնորդ վրահայոց թեմի։—Աշտարակեցին և Ներսիսյան հայոց հոգևոր դպրոցը։—Ներսես Աշտարակեցին «Պաշտպան հայրենեաց»։—Ներսես Աշտարակեցին կաթողիկոս Ամենայն Հայոց։

Նկ.՝ Ներսես Ե Աշտարակեցի։—Ներսես Ե Աշտարակեցի [դիմանկարը գարդանկարներով]։—Թիֆլիսի Ներսիսյան հոգևոր դպրոցի 75-ամյակի առթիվ հրապարակված գրքի շապիկը։—Ներսես Ե Աշտարակեցու հայրապետական կոնդակը։

4744. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]։—Պատմական այցելություն։ Խմբագրական։ [Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի այցելությունը Հռոմ]։ 1970, օգոստ., էջ 3—5։

4745. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]։—Պետական իմաստուն ղեկավարը և հայ ժողովրդի բարեկամը։ Խմբագրական։ [Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առթիվ]։ 1970, ապրիլ, էջ 6—8։

4746. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]։—Վերածնության խորհուրդն ու հրաշքը։ Խմբագրական։ [Հայաստանում սովետական կարգերի հաստատման 50-ամյակի առթիվ]։ 1970, նոյեմբ., էջ 6—8։

Նկ.՝ Երևան, ՀՍՍՀ Գերագույն Սովետի նախագահության պալատը։

4747. [ՀԱՏԻՑՅԱՆ ԱՐԹՈՒՆ]։—Յասնհինգ տարի լուսավորչի գահի վրա։ Խմբագրական։ [Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Վազգեն Ա-ի գահակալության 15-ամյակի առթիվ]։ 1970, հոկտ., էջ 10—12։

4748. ՀԱՏԻՑՅԱՆ ԳԵՎՈՐԳ։—Ծոտարակաը։ (Հեղինակ՝ Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյան, Երուսաղեմ, 1968, 216 էջ)։ [Գրախոսություն]։ 1970, հունվար, էջ 38—43։

4749. ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ հավատարիմ Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արևելյան թեմի։ 1970, հունիս-հուլիս, էջ 47—50։

Նկ.՝ ԱՄՆ-ի հայոց Արևելյան թեմի 68-րդ պատգամավորական ժողովի խմբանկարը։

4750. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՅՈՒՐԻ։—Երեք նամակ գրված հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակների տոնակատարության առթիվ։ 1970, դեկտ., էջ 55—56։

Բնագրեր՝ Ծիրվանզադե։—Թիֆլիս։ Գերապատիվ Հայր Գալուստ (Տեր-Մկրտչյան)։—Կոստանդին Կ. Մելիք-Շահնազարյանց։—Ս. Էջմիածնի հոբելյանական հանձնաժողովին։ Հայ տառերի գյուտի 1500-ամյակին։—Մինաս Չերազ։ (Հեռագիր։ Նյութերը գրված են 1913 թ.)։

4751. ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ [սպա կաթողիկոս Տանն Կիլիկիո]։—Հայրենասիրություն և քրիստոնեություն։ 1970, հունիս-հուլիս, էջ 59—63։

Արտատպված՝ «Արարատ», 1907, էջ 616—625։

4752. ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ։—Նոր հայկազյան բառարանի աղբյուրները։ 1970, հունիս-հուլիս, էջ 104—111։

Բովանդ.՝ Ա. Մատենագրական աղբյուրներ։—Բ. Բառարանների։

4753. ՄԱՅՐ Աթոռի և Անթիլիասի միջև փոխանակված նամակներ և հեռագրեր Ս. Էջմիածնում 1969 թվականի սեպտեմբերի 27—հոկտեմբերի 2-ը կայացած եպիսկոպոսաց ժողովին Կիլիկյան Աթոռի եպիսկոպոսների մասնակցության վերաբերյալ։ 1970, հունիս-հուլիս, էջ 11—43։

4754. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։ [Լուրեր, նկեղեցական բեմ]։ 1970, հունվար, էջ 35—36։

Բովանդ.՝-ից **Հունվարի 19-ին** [Կանադայի պառլամենտի սենատի նախագահ Ժան Պոլ Դուշտենի այցելությունը]։—**Հունվարի 24-ին** [Հանդիպում ճեմարանում Գևորգ Էմինի հետ։ Վեհափառ Հայրապետի ներկայությամբ։ Ճեմարանի դասախոս Արամայիս Սահակյանի դասախոսությունը այդ առթիվ և Գևորգ Էմինի պատասխան խոսքը]։

4755. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։—[Լուրեր, եկեղեցական բեմ]։ 1970, փետրվար, էջ 25—26։

4756. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։—[Լուրեր, եկեղեցական բեմ]։ 1970, մարտ, էջ 17։

Բովանդ.-ից՝ **Մարտի 21-ին** [Սամվել Անթոսյանի դասախոսությունը ճեմարանում «Հայ մշակույթի համաշխարհային արժեքը» նյութի շուրջը]։

4757. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։—[Լուրեր, եկեղեցական բեմ]։ 1970, ապրիլ, էջ 15—16։

Բովանդ.-ից՝ **Ապրիլի 5-ին**, կիրակի [Կրկնազատիկ, նոր կիրակի։ Հավարտ պատարագի Վեհափառ Հայրապետի քարոզը՝ 1920—21 թթ. ապրիլին Այնթապի հերոսամարտում նահատակված մարտիկների հիշատակին, հերոսամարտի 50-ամյակի առթիվ։ Նույն օրը՝ Վեհափառ Հայրապետի խոսքը ակադեմիկոս Կարո Մելիք-Օհանջանյանի մահվան քառասունքի առթիվ։ Վեհափառ Հայրապետի խոսքը նաև Սուչավայի հոգևոր հովիվ Գնել ավագ քհնց. Մանտալյանի հիշատակին։ Պատարագին ներկա էին Բելգիայի Անվեր և Բրյուսել քաղաքների պատգամավորությունը։ Նույն տեղում պրոֆ. Ռոբերտ Պուրվուայորի խոսքը]։—Նույն օրը՝ դասախոսություն ճեմարանում. բանախոս՝ Գրիգոր Գյուլլան, թեմա՝ «Ժանն դ'Արկի կյանքն ու գործունեությունը»]։—**Ապրիլի 14-ին** [Սարգիս Կոնսուլյանի դասախոսություններ ճեմարանում, «Գործնական թելադրություններ նկարագրի կազմության համար» թեմայով]։—**Ապրիլի 24-ին, ուրբաթ** [Ցիշատակ թիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան ընդդեմս համաշխարհային առաջին պատերազմի]։

4758. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։—[Լուրեր, եկեղեցական բեմ]։ 1970, մայիս, էջ 51։

Բովանդ.-ից՝ **Մայիսի 2-ին, շաբաթ** [Կամսար Ավետիսյանի դասախոսությունը ճեմարանում, Վենետիկի և Միլանի պատմական հուշարձանների մասին]։

4759. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։—[Լուրեր, եկեղեցական բեմ]։ 1970, հունիս-հուլիս, էջ 51—53։

Բովանդ.՝ **Հունիսի 8—11** [ճեմարանի ուսանողների և դասախոսների քառօրյա ուխտագնացությունը՝ Սևանի, Հաղարծինի, Գոշավանքի վանքերը]։—**Հունիսի 24-ին** [Պարգև Շահբազյանի բանախոսությունը՝ Հայոց Հայրապետի Հռոմ, Ֆրանսիա և Լիսաբոն կատարած այցելությունների նշանակության մասին]։

4760. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։ [Լուրեր, եկեղեցական բեմ]։ 1970, օգոստ., էջ 56—57։

4761. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։—[Լուրեր, եկեղեցական բեմ]։ 1970, սեպտ., էջ 54—56։

Բովանդ.-ից՝ **Սեպտեմբերի 18-ին** [Վեհափառ Հայրապետի քարոզը Այնթապի հերոսամարտի 50-ամյակի առթիվ, և հոգեհանգիստ]։—**Սեպտեմբերի 14-ին** [«Սասուն» ճաշարանում Վեհափառ Հայրապետի ճախագահությունը Նոր-Այնթապի ճաշկերույթին]։ **Սեպտեմբերի 21-ին** [Լիոնի քաղաքապետարանում Լուի Պրադելի և քաղաքապետության խորհրդի անդամների այցելությունը]։ **Սեպտեմբերի 27-ին, կիրակի**—Տոն է Վարագայ Արրդ Խաչի։ [Ներսես Ե Աշտարակեցու ծննդյան 200-ամյակին նվիրված հայրապետական կոնդակի ընթերցում։—Նույն օրը Վեհափառ Հայրապետի քարոզը և հոգեհանգիստ Ուրֆայի հերոսամարտի զոհվածների հիշատակին]։

4762. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ։—[Լուրեր, նկեղեցական բեմ]։ 1970, հոկտ., էջ 21—22։

Բովանդ.՝ **Հոկտեմբերի 18-ին, կիրակի**, [Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ հոգեհանգիստ Հաճնի հերոսամարտի 50-ամյակի առթիվ]։—

Հոկտեմբերի 24-ին [Թեմրաքի հայոց թեմական խորհրդի ատենապետ Վահրամ Դավիթյանցյանի ժամանումը]:

4763. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ:—[Լուրեր, եկեղեցական քրոնիկ]: 1970, հոկտեմբեր, էջ 31—32:

Բովանդ.՝ **Հոկտեմբերի 11-ին** [Վեհափառ Հայրապետի քարոզը՝ Մայր տաճարում Մարաշում 1915 և 1920 թթ. զոհվածների հիշատակին]:

4764. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ:—[Լուրեր, եկեղեցական քրոնիկ]: 1970, նոյեմբ., էջ 32—39:

Բովանդ.-ից՝ **Հոկտեմբերի 31-ին** [բժիշկ Ստեփան Տեր-Ստեփանյանի դասախոսությունը ճեմարանում «Մարդու անատոմիան» թեմայով]:—**Նոյեմբերի 10-ին** [Բժշկական գիտ. դոկտ. պրոֆ. Ա. Ծաղարյանի զեկուցումը՝ Պետրոս Դուրյանի դիմաքանդակի վերականգնման իր աշխատանքների մասին]: Նույն օրը Այբերտ Շարուրյանի դասախոսությունը Պ. Դուրյանի ստեղծագործությունների մասին]:—**Նոյեմբերի 18-ին** [Մարիետտա Շահինյանի այցելությունը կաթողիկոսին]:—**Նոյեմբերի 20-ին** [Ասմունգող Սուրեն Քոչարյանի գեղարվեստական նյութը]:—**Նոյեմբերի 28-ին** [Հայաստանի 50-ամյակի առթիվ Հայաստան ժամանած սփյուռքահայ մտավորականների այցելությունը կաթողիկոսին]:—**Նոյեմբերի 30-ին** [Արամ Խաչատրյանի այցելությունը]:—Նույն օրը՝ [Հայաստանի 50-ամյակի առթիվ Երևանում գտնվող Իրանի սենատոր Ռեզա Զադե Շաֆակի և Մեջլիսի անդամ Գագիկ Հովակիմյանի այցելությունը]:

4765. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ:—[Լուրեր, եկեղեցական քրոնիկ]: 1970, դեկտ., էջ 30—32:

Բովանդ.-ից՝ **Դեկտեմբերի 2-ին** [Արամ Խաչատրյանի և սփյուռքահայ մտավորականների այցելությունները]:—**Դեկտեմբերի 14-ին** [ամերիկահայ գրող Լևոն Ջավեն Սյուրմելյանի հանդիպումը զրույցը ճեմարանի ուսանողության հետ]:—**Դեկտեմբերի 26-ին** [Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» վեպի թարգմանիչ Կարպիս Սուրենյանի հանդիպումը զրույցը ճեմարանի ուսանողության հետ]:—**Դեկտեմբերի 28-ին** [Բոստոնի կոնսերվատորիայի պրոֆ. դիրիժոր Ռուբեն Գրիգորյանի և երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի այցելությունը]:

4766. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԵՐՎԱՆԴ:—**Առաքել վարդապետ Դավրիժեցու «Պատմության» երեք հրատարակությունները:** [Մահվան 300-ամյակի առթիվ]: 1970, մայիս, էջ 40—44:

Տպագրված է երեք հրատարակությունների, 1669 թ. Ամստերդամ, 1884 թ. Էջմիածին, 1898 թ. Վաղարշապատ [Էջմիածին], տիտղոսաթերթերը:

4767. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԵՐՎԱՆԴ:—**Վրթանես Քերթողը և պատկերամարտությունը:** 1970, հունիս-հուլիս, էջ 88—97:

Բովանդ.՝ 1. Շարժումը և հայ եկեղեցին:—2. Հեղինակը:—3. Թուղթը և արժեքը:—Պատկերամարտների մասին:

Բնագիր՝ Ցաղագս պատկերամարտից: Էջ 89—93:

Սկ.՝ Ի կենսաբեր լուսոյն զարդարին ամենայն արարածք...

Նայել նույնի աշխարհաբար թարգմանությունը, էջ 93, 97:

4768. ՄՈՒՐԱԴՅԱՆ Կ[ԻՄ] Մ.:—**Ս. Բարսեղ Կեսարացի:** [Ուսումնասիրություն]: 1970, մարտ, էջ 33—38:

4769. [ՆԵՐՍԵՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ]:—**Հատվածներ Ներսես Աշտարակեցու ճառերից ու նամակներից:** 1970, սեպտ., էջ 9—12:

4770. ՆԵՐՍԵՍ Ե Աշտարակեցու ծննդյան 200-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում: 1970, սեպտ., էջ 52—53:

4771. ՆՈՐԻՆ Սրբություն Պավղոս Զ Պապը: [Լուսանկար]: 1970, օգոստ., էջ 1, ներդիր:

4772. ՆՈՐԻՆ Ս. Ծնություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց: [Լուսանկարը]: 1970, օգոստ., էջ 2, ներդիր:

4773. ՆՈՐԻՆ Ս. ծնություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց: [Դիմանկարը]: 1970, հոկտ., էջ 1, ներդիր:

4774. ՇԱՔԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ:—**Ամանոր...** 1970, հունվար, էջ 23—24:

4775. ՇԱՔԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ ՎԱՐԴԱՊԵՏ:—**Հանգիստ Նորին Սրբություն Մոսկվայի և Համայն Ռուսիայի Տ. Ալեքսի պատրիարքի:** 1877—1970: 1970, մայիս, էջ 8—11:

Նույն տեղում Վեհափառ Հայրապետի խոսքը բաղված ծեսին:

Նկ.՝ Հոգեհանգստյան արարողությունից մի պահ: Ալեքսի պատրիարք: (Ներդիր):—Թաղման թափորը:

4776. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ:—[1970-ի հունվարի 23-ին ՀՍՍՀ Մինիստրների սովետի որոշմամբ Սարգիս Տիգրանի Գասպարյանը նշանակվում է հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ]: 1970, փետրվար, էջ 8:

4777. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ:—**Վեհափառ Հայրապետի այցելությունը Հայկական ՍՍՀ Մինիստրների Սովետի նախագահ Բաղալ Մորադյանին:** 1970, հունիս-հուլիս, էջ 45:

4778. ՍԱՀԱԿՅԱՆ ԱՐԱՄ[ԱՅԻՍ]:—**Պատմագիր Առաքել վարդապետ Դավրիժեցու հուշարձանի շինության հարցը «Արարատ»-ի էջերում:** [Մահվան 300-ամյակի առթիվ]: 1970, մայիս, էջ 45—47:

Նկ.՝ Առաքել վարդապետ Դավրիժեցու շիրմաքարի արձանագրությունը:

4779. ՍԱՐԳՍՅԱՆ ՀԵՆՐԻ:—**Հայկական մեդալային արվեստի հուշարձաններ:** 1970, դեկտ., էջ 43—49:

Նկ.՝ Նմուշներ մեդալներից:—Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանը:—Սրբալույս մնռոնի օրհնության մեդալը:—Նմուշներ մեդալներից:

4780. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Հոգևոր ճեմարանի 1970—1971 ուսումնական տարեշրջանի բացումը: 1970, սեպտ., էջ 57—58:

4781. Ս. ԷՋՄԻԱԾՆԻ Հոգևոր ճեմարանի վերաբացման 25-ամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում: 1970, նոյեմբ., էջ 42—49:

Նկ.՝ Էջմիածին. Հոգևոր ճեմարանի շենքը:

4782. ՍԻՐՈՒՆԻ ՀԱԿՈԲ Ծ.:—**Նյութեր պատմության համար:** 1970, հոկտ., էջ 33—37:

Բովանդ.՝ «Սիմեոն, Ուչ-Քիլիսի առաջնորդ-կաթողիկոսը»: [Թուրքերեն վավերաթուղթ գրված Կ. Պոլսում, 1764 թ. հունիսի 18-ին, որը սերտ առնչություն ունի Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հետ]:—Ֆերման Մուսթաֆա Գ. Ի. [Բնագիր, թարգմանություն]:

Սկ.՝ Փառապանծ խորհրդականներ...

4783. Ս. ՆԵՐՍԵՍ աստվածաբանական վարժարանի նոր ծրագիրը: [Նյու-Յորքի]: 1970, հունվար, էջ 44:

4784. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ տոնը Մայր Աթոռում: 1970, հունվար, էջ 33—34:

4785. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում: 1970, փետրվար, էջ 24:

4786. ՍՈՒՐԲ Գրոց միացյալ ընկերությունների ներկայացուցիչները Մայր Աթոռում: [Ռ. Վ. Ֆ. Վուստտոնը և դոկտ. Վիլյամը, Դ. Ռիքարդը]: 1970, մարտ, էջ 18—19:

4787. ՍՈՒՐԲ Էջմիածնի խորհուրդը: 1970, հունիս-հուլիս, էջ 84—86:

Արտատպված՝ «Արարատ», 1888, էջ 216—220:

4788. ՍՈՒՐԲ Ստեփանոսի տոնը և սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում: 1970, դեկտ., էջ 27—28:

4789. ՍՓՅՈՒՌՔՈՒՄ: [Լուրեր]: 1970, սեպտ., էջ 62—65:

Բովանդ.՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հա-

յոց Արևելյան թեմի 68-րդ թեմական պատգամավորական ժողովը։—Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայոց Արևմտյան թեմի թեմական ժողովը։—Առաջնորդական տեղապահի ընտրություն եգիպտոսում։

Նկ.՝ Պատգամավորական ժողովից մի պահ։

4790. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Առաքելավարդապետ Դավրիժեցու մահվան երեքհարյուրամյակի առթիվ։ 1970, հունվար, էջ 3—5։

4791. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Առաքելավարդապետ Դավրիժեցու մահվան երեքհարյուրամյակի առթիվ։ 1970, մայիս, էջ 3—5։

4792. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Խրիմյան Հայրիկի ծննդյան 150-ամյակի առթիվ։ 1970, դեկտ., էջ 3—5։

4793. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Հայաստանում սովետական կարգերի հաստատման հիսնամյակի առթիվ։ 1970, ապրիլ, էջ 3—5։

4794. ՎԱՉԳԵՆ Ա ԾԱՐԱԳՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ։—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոնդակը Հայաստանում սովետական կարգերի հաստատման հիսնամյակի առթիվ։ 1970, նոյեմբ., էջ 3—5։

